

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9462

891.99

2 - 83



87

Ա. ԶՈՐՅԱՆ

# ՑԱՆԿԱՊԱՏ

891.99  
9 - 83

891.99

9 - 83

ԱՍՏՈՐՅԱՆ

# ՑԱՆԿԱՊԱՏ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ)

ՀԱՏՈՐ 11

ԵՐԵՎԱՆ - 1923

28807-Կ2

Այս ժողովածուն լույս պիտի տեսներ իմ առաջին հասորի  
«ՏԵՍՆԻՐ ԺԱՐԴԻԼ» նույնամբ, 1918 թ., վորագու մի տեղողաց-  
թուուն, ինչպատճեն յերեկուում և յիշ I հասորի առաջարան-ընտա-  
դան հոգվածքը: Մակայն՝ զանազան հանգամանքներ արգելք յե-  
ղան դրան: Եցե՛մ իրատարակում եմ մասամբ առաջին հասորը ամ-  
րողացնելու նպատակով: Ուրիշ խոսքով, առ մի ուշագույն պարոր  
ե, վոր տրվում ե նիստ տարի նոտ:

Նորիւ հասորում ամփոփած նովելները պահանջվու 1914—  
1918 թ.: Այս ժամանակամիջնորդու տպագրել եմ յիշ ուրիշ պահ-  
մածքներ, վորոնց բովանդակությունը, տնօւով պատ-  
րազմանն որերի կրօնոքը—շնորհական տպագրություն այս գրքու: Գրքուր  
յիշ նեղափոխության ըրբանիք առնվազ պատճեածքները կազմելու  
յն թե՛յերարդ գնուքը: Այս նկատումնեւ և անս, վոր մերանիք,  
այսպիս անվանված, պատճեազմական պատճեածքներ, վոր  
պիտի մասնեցն այս ժողովածուն (ուրիշ հասորի նպատակը) տեղ չեն  
գունել այստեղ:

Ավելորդ շեն՝ նախարար նիշել յիշ այն, վոր I հասորի առա-  
ջարանում հիշված մի յերկու պատճեածքը նորինակն չեն մտնում այս  
գրքի մեջ այս պատճեառով, վոր մի բաւ կաղում են զեղարվեստու-  
թան կողմէց:

1923. 25/VI

Ա. Զ.



Հայոց պետական ազգագրան Առաջարշանկառություն

11779-Ռ

## ՀԱՆԵՍԸ

Գյուղի յերեխաները լողանում եյին գետում։  
Մերկ մարմիններից կազմված նրանց խումբը  
բարձրացրել եր անտառի աղմուկ. ճիչ, կանչ, սուլոց—  
խանճիկի եյին իրար։ Մեկը նրանցից յերգում եր ջրի  
մեջ, մյուսը՝ քրքջում քարափին նստած, մի քանիսն  
իրար հրճելով ջուրն եյին նետվում աղաղակելով կամ  
ջուր ցանում միմյանց վրա... Ու ամբողջ գետն ու  
գետափը թնդում եր նրանց չարաձճի, անհանգիստ  
աղմուկից։ Իսկ մտտիկ անտառը արձագանք եր տալիս  
նրանց հաղոր ձեհերով, այնպես վոր հեռվից լոռջը  
պիտի կարծեր, թէ ինչ-վոր մեծ գործ և կատարվում  
ձորում և վոչ թէ յերեխաներ են լողանում։

Լողացողներից բավական հեռու, նրանց աչքից  
անտես, գետափին մեն-մենակ նստել եր այրի նազոյի  
վորդի փոքրիկ համեսր, մոտ ութ տարեկան մի տղա,  
և ձեռքը ծնոտին՝ միտք եր անում։

Նա սաստիկ, սաստիկ տխուր եր։

Նրան աեսնողը կարող եր կարծել, թե նա կամ  
աման և կոտրիչ տանը, կամ վող և կորցրել խանու-  
թի ձամբին, ու այժմ մտածում են բնչաղեա անի, վոր  
մարտը չիմանա։ Կարելի եր կարծել նույնպես, վոր  
մայրը վորեւ բանի համար ծեծել և նրան և սոված  
դուրս արել անից։ Վորովհետեւ նրա մանկական դեմքի  
վրա յերեխում եր այնպիսի մտահոգություն, վոր նրան  
առալիս եր հասակալորի տեսք, իսկ նրա հաստ, կեռա-

սի պես կարմիր շրթունքները շուտ-շուտ ծավում ելին  
անշնորհք կերպով, և նու քիչ եր մնում էաց լինի:

Նրա այս զրությունն, ինարկի, առանց պատճառ-  
ոի չեր:

Քիչ առաջ, լողանալոց հետո, վերի թաղեցի յեր-  
կու աղա, ուրիշ շատ աղաների մոտ, վաս-վաս խոս-  
քեր ասին Հանեսին: Նրանք հայնոցեցին Հանեսի մե-  
ռած հորը և ծիծագելով հայրնեցին, վոր Հանեսի մայ-  
րիկը սիրեկան ունի, և այդ սիրեկանն ել, իրը թե,  
անտառապահ քեսի Ոսեփն ե... Նրանք ասին և մի  
ուրիշ բան, իրքի թե Հանեսի հայրիկին ել սպանել և  
քեսի Ոսեփը, և աղանել և նրա համար, վոր մայրիկի  
սիրեկանը դառնա... Այս բոլորն ասելուց հետո աղա-  
ները լեզուները հանելով ծաղրեցին Հանեսին: Նրանք  
այս ամենն արին նրա համար, վորովհետեւ Հանեսը  
իր շին (վոր նվիրել եր քեսի Ոսեփը) չափեց նրանց  
ածելու. չտվեց, քանի վոր աղաներն իրանց թաղեցի  
շեցին. չե վոր կարող ելին փախցել, ջուրը քցի կամ  
կոսրել, հետո ով կարող նրանցից շին ստունալ... Բայց  
աղաներն ել տեսնելով վոր Հանեսը շին չի տալիս,  
այդպիս վաս խոսրեսով վաս բաներ ասին նրան:

Յեվ այժմ գետափին նստած, Հանեսը մտածում  
եր աղաների ասած խոսրեսի վրա ու մտքում շուտ-  
շուտ հայնոյում նրանց:

Նրա առջնից շարունակ վազում եր փոքրիկ գե-  
տը, վորի մյուս ափին, ուղիղ Հանեսի դիմաց, նստած  
ելին մի խումբ սպեր, մի քանիսը նրանցից զլուխ-  
ները գրել ելին թեմերի տակ ու քնել, իսկ մյուսները  
դիք ննջում ելին: Սակերից քիչ հեռու արածում ելին  
յերկու հորթ՝ թոկը վզներին, իսկ վերի, ուրիշ աղա-  
ների հետ միասին, լողանում ելին և վերի թաղեցի  
այն յերկու աղան, վոր քիչ առաջ ծաղրեցի Հանեսին:

— Շան լակոտներ, ասում եր Հանեսը մտքում.  
— Հաղիք ձեր մերը սիրեկան ունի...

Նա գիտեր, վոր սիրեկանը վաս և ամոթ բան ե:  
Սիրեկանը նա յի, վոր աղջիկ և փախցնում: Սի-  
րեկան ունեցող աղջկան վաս անուն են տալիս, անի-  
ծում են, հայնոյում... բայց իր մայրիկը հո այդպիս  
չի, մտածում եր Հանեսը:— Նա հո աղջիկ չի, վոր սի-  
րեկան պահի... Յեվ նա լուծով հիշում ե, թե ովքեր  
սիրեկան ունին իրանց զյուղում: Սիրեկան ունի հաց-  
թուի Մարանի աղջիկը, Տերուեանց Աշխենը... իսկ  
իր մայրիկը յեթե սիրեկան ունենար, հաղա այդ սի-  
րեկանը նրան չեր փախցնի... Ո, Հանեսը լավ և  
հասկանում աղաների միտքը. նրանք այդ ասին իրան-  
ցրակացնելու համար (ինչպես մի անգամ կող Մար-  
գարիան ասավ մայրիկին բարկացնելու համար), ասին,  
վորովհետեւ շին չափեց վոր ածեն... Տղաների մյուս  
խոսքերը նույնպես Հանեսին թվում ելին դիմամբ  
ասված. ինչպես թե իր հայրիկին սպանել և քեռի  
Ոսեփը, վոր մայրիկի սիրեկանը դառնա... Սուտլիկ  
լակոտներ... Քեռի Ոսեփը այնքան լավ մարդ ե, ին-  
չու պիտք և այդպիս բան աներ... Քեռի Ոսեփը այն-  
պես և սիրում իրան, և ամեն անգամ, յերբ դալիս և  
իրանց տուն, հետը միշտ չամիչ, կանֆետ ու ինձոր  
և բերում իրա ու մայրիկի համար, կամ յերբ ինքը  
ջրում և նրա ձին, խոտ տալիս, քեռի Ոսեփը կոպեկ-  
ներ և բաշխում իրան, նոտեցնում և ձիուն... Բա եղ-  
պես մարգը կը սպաներ հայրիկին... Վայ ձեր գլուխն:  
Վերջին խոսքերն արտասանելով, Հանեսը նայեց  
աղաների կողմը: Այնտեղից դարձյալ լովում ելին բար-  
ձր ծիծագի ձայներ: Տղաներն առաջվա պես աղմեկով՝  
լողանում ելին:

Հանեսը նորից մտածմունքի մեջ ընկալի:

Մորից նա լսել եր, վոր քեռի Ռուկը հայրիկի ընկերն եւ նրանք միտուին յեղել են անտառապահ. դրա համար ել քեռի Ռուկը շուտ-շուտ իրանց տուն և դուլիս ու հետը բաներ բերում:

Բա վոր նա սպանած լիներ հայրիկին՝ իրանց տուն կզար, մտածում եր Հանեսը. կամ մայրիկը նրա համար ձկածեղ կաներ ամեն գտնով... կամ յեթե նա և սպանել հայրիկին, բա ինչու նրան չեն բանում. չե վոր մարդ սպանողին բանտ են դնում... ինչպես, այ, Աշոտի հորը... Համա քեռի Ռուկը եղակն բան վոչ արել եւ, վոչ ել բռնեն... Տղաներն եղ բոլորն տախն իրան ճաքացնելու համար...

Յեզ Հանեսն ափսոսաց, վոր հայրը վողջ չե: Ա՛յ, յեթե նա կենդանի լիներ, մտածում եր Հանեսը, շատ լավ կլիներ. ել վոչ մի տպա չեր համարձակվի ծազրել ու ծեծել իրան. նրանից բոլորը, բոլորը կվախենային... Յեթե նու կենդանի լիներ, մայրիկն ու ինքը գողերից ու սատանաներից չեյին վախենա զիշերը, ենա իրա ու մայրիկի համար լով-լով շորեր կաներ... Բայց ափսոսն... մայրիկն ասում եւ, հայրիկին սպանել են այն ժամանակ, յերբ Հանեսը մի տարեկան է յեղել...

Հոր մասին լսածները և մորը հիշելով, Հանեսն սկսեց լաց լինել: Ստացած վիրավորանքը ճնշում եր նրա սիրուր և նա ամբողջ մարմնով զողում եր խուլ հեկեկանքից... Այդ բովելին հորթերն ու սազերը թը-դում եյին նրան ացնքան բախտավոր, վոր վոչ վոք չե վիրավորում նրանց...

Մի քանի բոսի նա, ամեն ինչ մոռացած, լալիս եր առանց շուրջը նայելու, յերբ հանկարծ տղաների ձայնը սթափեցրեց նրան:

— Հը՛, աղա, տալիս ես, թե չե, տաց մեկը նը-րա յետեից:

Հանեսը վախեցած յետ նայեց: Նրա մոտ կանգնած եյին դարձյալ վելի թաղեցի յերկու տղան: Դը-ըտնք մատ տասերեք-տասչորս տարիկան պատանիներ եյին արեից սեացած զեմքով, անհամաշտի ու կեղտոտ շորերով: Նրանցից մեկի (վորի յերեսը չեչոտ եր) գլխին կար ուսւ զինվորի սպիտակ գլխարկ, վարն իր մեծությամբ ծածկում եր նրա աչքերն ու ծոծրակը, իսկ մյուսի գլխին մի մաշված ու փափախ եր: Սրանց աեսնելուն պես՝ Հանեսը վեր թուավ տեղից եւ, նրանց պատասխանելու փոխարեն, լացը զսպելով, յերկու ձեռքով շվին սեղմեց վերնաշապկի տակ:

Փափախավոր տղան մտեցավ նրան:

— Տնը, ածենք, տաց նա:

— Տալիս չեմ, ձչաց Հանեսը գողացով, բայց վհուական ձայնով:

— Տալիս չե՞ս...

— Զե:

Փափախավոր տղան կանգ տռավ, անթարթ աչքերով մի վայրկյան գննեց Հանեսին վոտքից գլուխ և բունցքը թափ տվեց.

— Դե լավ. յետ քեզ կասեմ...

Իսկ սպիտակ գլխարկավոր չեչոտ տղան ավելացրեց:

— Դե տար մորդ սիրեկանին տուր, թող նու ածի, մերդ պարի:

Ու յերկուսը միասին բարձր-բարձր ծիծաղեցին, Հանեսը չհամբերեց:

— Հազիր ձեր մերը սիրեկան ունի, բացական-չեց նա. — շան վորդիք...

Տղաները շվիրավորվեցին նրա խոսքերից և այս անդամ քրքջացին ամելի բարձր ու շար ծիծաղով: Այդ ժամանակ Հանեսն զգաց, վոր ինքը փոքր ու ան-

ոգնական և այդ մեծ տղաների առաջ: Յեվ հպարտությանից ջանաց զաղել իր արտասուքը, բայց չկարողացավ պահել իրան ու հեկեկաց շնչառպառ, ուսերը ցնցող հեկեկանքով: Նա ուզում էր հայրուցիւ տղաներին, բայց ձայնը կորչում էր բերանում:

Տեսնելով իրանց հակառակորդին անզոր ու խեղճ, աղօները հաղթողի զուող վեհանձնությամբ իւսպին նրան ու հոռացան ծաղրելով.

— Դե լավ, լավ, լաց մի լինի եղակիս, մարդ սիրելունը կանփեռ կտա քեզ...

Նրանց զնալուց հետո, Հանեսը յերկար մնաց գիտափին, իր լսուների վրա մատեկով, և այն ժամանակ միայն, յերբ նկատեց վոր արեն արդեն անցել և անտառի մյուս կողմը, իսկ սաղերն ու հորթերը զնում են տուն, ինքն ել զնաց տուն:

Տանը նա վոչինչ չառաց, վարովինուն գիտեր յիթե մայրը իմանա, վոր ինքը զնացել և լողանաւու և կավել և տղաների հետ, ամենից առաջ իրան որիաբ ծեծեր: Դրա համար ել բան չխռոց:

Բայց և այնպիս ստացած վիրավորանքն ու իմացած նորությունը հանդիսաւ չելին տալիս նրան:

\* \* \*

Հանեսի քունը չի տանում:

Անկողնի մեջ պառկած՝ մեկ նայում նա խրճիթի մութ ոճորքին, մեկ մորը, վոր ուզանի մոտ նստած գուլզա և զործում: Մայրը կարծելով թե Հանեսը քըզուլզա և զործում, վոր ուզանի մոտ նամակած է, յերեսը դարձրած, ձեռնալամպի լույսի տակ զործում և զուլզան ու հետն ել զնդնում: Չի հասկազործում և զուլզան ու հետն ել զնդնում... Հայդում յերդ և ասում, թե խուլ վազր և անում... Հանեսը նայում և մոր թիկունքին և ուզում և խոսել նրան հետ: Նա այնքան բան և ուզում իմանալ մորից:

Նա ուզում և հայրին հայրիկի մասին, քեռի Ոսեփի մասին և այն մասին, թե ինչ բան և իսկապես սիրելիանը թեև լսել է, վոր հայրիկին սպանել են զաշաղները, վոր քեռի Ոսեփին իր հայրիկի ընկերն և և, վերջապես, թեև զիտի, վոր սիրելիանը աղջիկ փափցնող մարդ է, բայց կամենում և այդ ամենը հաստատ իմանալ նորից: Եերկար ժամանակ նա տատանվում է—խոսել, թե վոչ, բայց, վերջապես, չի համրերում և դառնում և մոըը.

— Մայրիկ, հայրիկին յերը են սպանել...

Մայրը յետ և գառնում զարմացած:

— Դու զարթուն ես, աղա, բացականչում և նու—եդ ինչո՞ւ չես քնում:

Հանեսի քունը չի տանում:

— Բա միտող բան ընկավ, թե յերազ տեսար, վոր...

— Չե, մայրիկ, տառւմ եմ—հայրիկին յերը են սպանել:

Մայրը մտածմունքի մեջ և ընկնում:

— Եերը դու ծիծ եյիր ուսում, ասում և նա ծանր:

— Ղաչաղներն են սպանել, թե ուրիշ մարդիկ...

— Ինչիդ և հարկավոր վոր, հարցնում և մայրը նորից յետ գառնալով:

— Հեշ, հարցնում եմ...

— Ղաչաղները,—տառւմ և մայրը, վլուխն որուրելով—զաչաղները...

Հանեսը լսում և մի վոքը, մտածում է, վոր արդաներն ուրիման սուսա ասացին, թե քեռի Ոսեփն և սպանել... Իհարկե ղաչաղներն են սպանել... և նա մտածում է, թե ինչպիս սպանած կլինեն, ու նորից գառնում և մոըը.

— Մայրիկ, իսկ հայրիկն եր մեծ թե քեռի Ոսեփը:

— Հայրիկը, ի՞նարկե, հայրիկը...

«Դե վոր հայրիկը մեծ եք, մտածում և Հանեսը, — ել քեռի Ոսեփն ինչպես կարող եք սպանել նրան»... Նա լուսում եք դարձյալ. նորից նայում ոճորքին ու մորը և ամաչում և հարցնել թե ինչ և սիրեկանը... Բայց նա այնպես և ուզում իմանալ այդ բանը. դա ամեն բանից ավելի և հետաքրքրում նրան, և նու մբածում ե, վոր մայրը, անշուշտ, կրացատրի իրան, յեթե հարցնի:

— Մայրիկ, խոսեց նա այս անգամ զողացող ձայնով. — Ինչ բան և սիրեկանը.

Մայրը յետ դարձավ արագ և Հանեսի յերեսին նայեց:

— Ի՞նչը, հարցը նա անհանդիստ, կտրծես ականջներին չհավատալով:

— Սիրեկանը, — կը կրնեց Հանեսը վախով:

Մայրն ավելի թեքվեց նստած տեղը, վոր ավելի քայլ տեսնի Հանեսի դեմքը: Լամպի լույսն ընկավ Հանեսի յերեսին: Վորդու դեմքը զայրացը եց մորը:

— Եթր. զրա համար ես սազ որը լակոտների չեմ ման գալի, ճշաց նա, — լավ բան հո չես սավորի, հոգիմ եղ գլուխդ...

Ու սկսեց անիծել:

Հանեսը վախեցած զլուխը կոխեց վերմակի տակ ու կուչ յիկավ գոզության մեջ բռնվածի ովեա: Այժմ նա զգում եք, վոր սիրեկան ասածը շատ վատ բան պիտք է ինի, յեթե վոչ մայրիկը այդպես չեք բարկանա...

Այս մտածմունքներով ել քնեց:

Նրա ըունը շատ անհանդիստ եր: Յերազում տեսնում եք գետում լողացող տղաներ, հորթեր և սագեր: Ատգերից մեկը վիզը յերկարած ուզում եք կծել իրան, բայց նու վախչում ել հեռու, հեռու...

\* \* \*

Յերեք որ եք Հանեսն այլիս չեք գնում զետը լողանալու: Չեք գնում վոչ թե մոր յերկյուղից, այլ նրա համար, վոր վախենում եք հանդիպել վերի թաղեցի տղաներին: Այժմ նու մենակ նստում եք իրանց հագանոցի կտերը և շվի ածում անկանոն ձայներով կամ խաղում իրանց հարեան Մարտինի աղջկա՝ վոքրիկ վարսոյի հետ: Մանր քարերից նրանք շինում եյին փոքրիկ տնակներ և դրանց բաժանում առանձին մասերի. մեկը ապրելու տունն եք լինում, մյուսը՝ հացատունը, յերբորդը՝ գոմը: Գոմում կապում եյին մատնաշափ փայտե կովեր, յեզներ ու գոմեներ: Գումեները սև փայտից եյին լինում, կովերն ու յեզները՝ կարմիր կամ սովորակ: Խոկ հացատանը թիւում եյին կավի խմորից պատրաստած հաց: «Խնամի վարսու, լավ մտիկ արա, հացը կերպի, — ասում եք Հանեսն իր ընկերունուն. — Վոյ, ծուխը քոռացրեց ինձ»... Յերբեմն ել որը միքանի անգամ նա բարձրանում եք իրանց բարդի ծառը՝ կաչաղակի բռնը տեսնելու: Բայց ամեն անգամ ել զես մի սաժեն չբարձրացած իջնում եք ցած, վորպէտեն այնպես դժվար եք բարձրանաւ, և հետո շորերը կճղվեյին, մայրիկը կծեծեր:

Մի որ եք յերբ Հանեսն այսպիս բարձրացել եք ծառը, մեկը հանկարծ խփեց նրա մեջքին: Նա ծառը գրկած՝ վախեցած յետ նայեց, քեռի Ոսեփն եք՝ ձիուն նստած, հրացանը ուսին: Նրա վախեսի վրա և կը բարձրին պսողում եյին անտառապահի նշանները: Քեռի Ոսեփը ծիծաղում եք:

— Եղ ինչ բանի յետ, տո, — ասաց քեռի Ոսեփը և մարտկով կամաց խփեց նրա ազդեթին:

Հանեսը կարմրատակեց և շտապեց իջնել ծառից:

—Մայրիկդ տանն ե:

— Հա, պատասխանեց Հանեսը, ծառից բոլորուն իջնելով, և աշխատեց վերև թռած գոտին ուզզել։ Քեռի Ոսեփը, ձին քշելով մտավ բակն ու իջավ։ Հանեսը, մոտենալով նրան, հետաքրքրությամբ դիտում նրա գրպանները և մտածում, թէ ինչ միրդ բերած կլինի իրանց համար։ Այդ միջոցին հանկարծ նրա միտն ընկան վերի թաղեցի տղաները և նրանց առած խոսքերը։ Ու մինչ քեռի Ոսեփը ձին կապում եր ծառից, Հանեսը լուրջ զիտում եր նրա դեմքը, հրացանը և նշանները։ Նա նայում եր այնպիս մտացրադ և խորագննին, զոր կարծիս առաջին անգամն այդ մարդուն։ Քեռի Ոսեփն ուներ ոն, յերկար, ծայրերը սուր բեղեր, փորբիկ միրուք և ոն, խուճուճ փափախ։ Նա շաբունակ ժպտում եր, և Հանեսը նրան նայելով, մտածում եր, զոր դա իսկի յեւ չեր սպանի իր հորը։ Նրան թվում եր, զոր մարդունողներն այդպես չեն լինի. մարդ սպանող մարդիկ չեն ծիծաղի...

Յերբ վերջապես քեռի Ոսեփը, ձին կտողելով մտավ տուն, Հանեսը հետաքրքրությամբ հետեց նըրան, տեսնելու, թէ ինչ կհանի նա գրպանից՝ մայրիկին տալու։ Դրա հետ միասին նրան հետաքրքրում եր և այն, թէ ինչ պետք ե անի նա, զոր տում համբարեկան ե։

Այդ որը Հանեսն արտասովոր վոչինչ չնկատեց։ Մայրիկն ելի ձգածեղ արավ քեռու համար, ուզեց ձուտ մորթել բայց քեռի Ոսեփը չթողեց։ Զգածեղն ուտելով, նա պատմեց, թէ անտարից բանի ուայլ փայտ և ծախել մի շարթում և թէ ինչպես քիսեն փողը միջին կորցրել և ու նորից զտել։ Հետո քեռի Ոսեփը այդ որն ել Հանեսին փող ավեց և զրկեց պո-

զիրոսի։ Հանեսը գնաց յեկավ, քեռի Ոսեփն ու մայրիկը գարձյալ խոսում եյին իրար հետ, այնպիս զոր նա վատ վոչինչ չտեսավ... Հետեյալ անզամը նույնութեա, մի շաբաթ անց, յերբ քեռի Ոսեփը նորից յեկավ, և այս անզամ խնձոր բերեց հետը, Հանեսը դարձյալ վատ բան չտեսավ, այնպիսի մի վատ բան, ինչ զոր տղաներն եյին առում։ Յեզ նա ավելի հաստատվեց իր կարծիքի մեջ, զոր տղաների ասածը սուտ եր միայն, նրանք այդ բոլոր ստերն ասին նրա համար, վորովհետեւ ինքը շլին չտվեց նրանց... Այս, տղանեեն ել են սուս առում, գող Մարգարիտն ել, յեղբակացը նամենքն ել սուս են առում...»

Ու վերսկսելով իր խաղերը փոքրիկ Վարսոյի և թաղի մյուս յերեխանների հետ, Հանեսը բոլորովին մոռացավ և տղաներին և նրանց ասածները մինչև այն որը, յերբ քեռի Ոսեփը նորից յեկավ։

\* \* \*

Հանեսն արդ որը յերեք չի մոռանու։

Ինչպես միշտ, այդ անզամն ել քեռի Ոսեփը յեկավ ձիով, հրացանը ուսին։ Այդ որը նա շատ ուրախ եր յերեւում. յերբ ձիուց իջավ, հանաքով ապահեց Հանեսին ու ծիծաղից։ Նա իր հետ բերել եր մի կարմիր կապոց, զորի մեջ յերեւում եյին կլոր ու կոշտ բաներ Հանեսին թվում եր, զոր դրանք ուտելու բաներ պետք ել լինեյին. բայց թէ ինչ—գժարանում եր գուշակել, և նրան սաստիկ հետաքրքրում եր, թէ յերբ ովետք ե քեռի Ոսեփը բանա իր կապոցը, զոր տեսնի ինչ կա մեջը։ Բայց քեռի Ոսեփը դանդաղում եր. նույն փոխանակ կապոցը բանալու՝ մայրիկին գանգտառվում եր զոր պատրուն չի ճարռում իր թվանքի համար։

— Քաղաքում կլինի, ասով մայրիկը։

— Յես ել գիտեմ, կըլի. բայց ով ժամանակ ունի քաղաք գնալու, — ասավ քեռի Ոսեփը և նորից շարունակեց գանգատվել, վոր ութիշ պատրոն իր թվանքին չի գալիս: Յերկար նա խոսում էր այսպես, մեջ ել, հանկարծ դարձավ Հանեսին ու հարցրեց, թե կարող ե նա ձիռ համար մի քիչ կանաչ խոտ բերել հանդից. ձին շատ սոված ե:

— Հը՛, կարաս, — հարցրեց քեռի Ոսեփը:

Ինչու չե. Հանեսը կարող ե, բայց յեթե բյոխին ձեծի:

Հանեսն խկառիս քյոխից չեր վախճառում. նաև ուղղակի չեր ուղում գնալ, վերպիսդի տեսնի, թե ինչ կա կապոցի մեջ:

Բայց քեռի Ոսեփը նրան միամտացրեց, վոյ բյոխին չի ձեծի.

— Յեթե առես ինձ համար ե, բան չի ասի:

Հանեսը՝ աչքը կապոցին զցած՝ մի բոպե տառնվեց.

— Գնա, անուշ ջան, գնա, հորդորեց մայրը, ու թախտի տակից հօրթի թոկը հանելով տվեց Հանեսին. — Չկորցնես, — զգուշացրեց նա:

— Լավ խոտ կքաղես, Հանես ջան, ավելացրեց քեռի Ոսեփը, յերբ Հանեսն ակամա քաղերով դիմեց գեպի գուռը:

Տնից դուրս դարով, Հանեսը մտքումը վորոշեց խոռի չգնալ: Նա մտածում էր, վոր իրան հեռացնում են, վորպիսդի կապոցը թաքուն բաց անեն ե, յեթե միջին ուտելու բան կա՝ մենակ ուտեն: «Հա, վանց չե, կերթամ» ասում էր նա ինքն իրան ու բարկացած նայում ձիռ կողմը, վորն այդ բոպեցին նրան թվում էր սիսերմ թշնամի, վորի պատճառով պիտի զրկվի ով գիտե ինչից. յեթե դա՝ այդ ձին չլիներ, իրան դուրս

չեյին զրկի անից: Բայց նա խոտիչի գնա, թեկուղ ձին սատկի սովից... Ու նա կրկին անգամ մտքում վորոշեց չգնալ հանդը, մինչև վոր չտեսնի, թե ինչ կա կապոցի մեջ: Միքանի բոպե մտամոլոր կանգնեց ձիու մոտ, ապա զգույշ քայլերով մոտեցավ տան դռան և նրա ձեղքից նայեց ներս:

Սակայն ձեղքից ամեն բան պարզ չեր յերեսում ուստի Հանեսը վորոշեց գնալ յերթիկից գիտելու, բայց հետո մտածեց, վոր յեթե գլուխը կախի յերթիկից, ներսից կնկատեն իրան: Յեկ մնաց գարձյալ դռան մոտ:

Նրա սիրտը զողում էր շորերի տակ: Դուան ձեղքից նա տեսնում էր քեռի Ոսեփին, մայրիկին, կապոցը, լամպը: Վորքան նա զլուխը մոտեցնում էր ձեղքին, այնքան ավելի պարզ էր յերեսում ներսը:

Քեռի Ոսեփը հրացանը ձեռին նստել էր տախտի վրա, իսկ մայրիկը նրանից մի քիչ հեռու զուլպա յերանում: Նրանք ելի խոսում եյին իրար հետ:

— Եսքան ժամանակ ե վժրտել եյիր, ասում էր մայրիկը քեռի Ոսեփին:

— Ո՞վ ե իմանում. դես ու դեն ման եյի գալիս, ձլմկոտում էր քեռի Ոսեփը: — Շան վորդիք մերին կտրում են, զողանում, սկի աչք չեմ թափում... Են որն ել միին բանեցի, ուղում էր կացնով խփել, շան վորդին...

— Վայ, զարմացավ մայրիկը. — հետո...

— Հետո ել ինչ. թվանքը վոր դոշին դեմ արի, կացինը ցած քցեց ու փախավ...

Մայրիկը զարմանքից մի կողմ դրեց զուլպան, վոր լավ լսի, բայց քեռի Ոսեփը լսեց, մայրիկի յերեսին նայեց ու ժալտաց:

— Ի՞նչ ե վոր, բան ե պատահե՞ր հարցը նա:

11779-Դ



— Զե, պատասխանեց մայրիկը նորից գուլպան  
վերցնելով.—բան չկա. հենց ենպես եմ հարցնում:

Քեռի Ոսեփը նորից ժպտաց:

— Հը՝ ի՞նչ ե, կարոտել ե՞ս:

Մայրիկը բան չխոսեց:

«Ես ի՞նչու չեն բաց անում» մտածեց Հանեսը,  
աչքով վորոնելով կապոցը: Սրտի ուժին խաղից  
նրա վոտքերը դողում ելին, և նա շունչը պահած շա-  
րունակում եր դիտել, թե յերբ պետք ե, վերջապես,  
կապոցը բանան: Մինչ նա միտք եր անում այսպես,  
հանկարծ քեռի Ոսեփը վեր կացավ տեղից և հրացանը  
դրեց մի կողմ: Հանեսին թվաց, թե նա պատրաստ-  
վում ե կապոցը բանալու, և ուրախացավ: Բայց նա  
շուտով հիասթափվեց, յերբ քեռի Ոսեփը նորից նըս-  
տեց, այս անգամ մայրիկի կողքին, և զարձյալ շա-  
րունակեց խոսել: Նա խոսում եր, հետո ել բեղերը  
վոլորում:

— Հը, վ՞նց յիս, ասում եր նա մայրիկին.

Մայրիկը ելի չպատասխանեց. իսկ քեռի Ոսեփը  
ավելի մոտ նստեց նրան:

Հանեսն սկսում եր անհանգստանալ: Այժմ նրա  
սիրու ավելի եր դողում և նա պարզ լսում եր սրտի  
ձայնը ականջներում ու կրծքի տակ: Կապոցը մոռա-  
ցած՝ նա անհանգիստ աչքերով հետեւմ եր քեռի Ո-  
սեփի շարժումներին ու ծիծաղիս գեմքին, վոր նը-  
րան թվում եր բոլորովին փոխված: Ի՞նչ ե ուղում  
անել այդ քեռի Ոսեփը, մտածում եր նա, ջանալով  
աչքը ճեղքից չհեռացնել:

Քեռի Ոսեփը նորից մի փոքր ել մոտեցավ մայ-  
րիկին և ի՞նչ-վոր բան ասավ, վոր Հանեսը չլսեց: Մայ-  
րիկին այս անգամն ել չպատասխանեց նրան, բայց  
ժպտաց: Յեկ յերբ մայրիկը ժպտաց, քեռի Ոսեփն ել

ժպտաց ու թեքվեց գեղի մայրիկը, ձեռքը զցեց նրա  
վզով ու... համբուրեց մայրիկի յերեսը...

«Այ թե ի՞նչ ե սիրեկանը» անցավ Հանեսի  
մտքով, և նա ամբողջ մարմանով սկսեց դողալ: Սաստիկ  
ցնցումից նրա աչքերն ընկան դուն ճեղքից ու վորքան  
ել նա փորձեց ճեղքը գտնել նորից, չկարողացավ: Այս  
բանը սաստիկ գոգուեց նրան, և նրան պաշարեցին վախ,  
զայրույթ ու կատաղություն, — հայտնի չե, ում դեմ:  
Յեղավ մի բոպե, յերբ նա ուղից մտնել ներս, բայց  
վախեցած յետ նայեց: Նրան թվում եր, վոր իր յետե  
մարդիկ են կանգնած և նույնպես նայում են, թե ի՞նչ  
ե կատարվում ներսը: Բայց յերբ յետ նայեց, տհասվ  
միայն քեռի Ոսեփի ձիուն, վոր այդ բոպեյին իր  
ժանդու տտամիներով կոծում եր ծառի կեղեր: Զիու  
տեսքն ավելի գրգռեց Հանեսին. նրան այնպես տաելի  
թվաց այդ ձին, նրա ժանդու տտամիները, վորոնց նա  
պատրաստ եր ջարդեր, յեթե կարողանար... Տեսնելով,  
վոր ձին շարունակում ե ծառը կոծել, Հանեսն՝ ամեն  
ի՞նչ մոռացած, սաստիկ գրգռման մեջ, մոտեցավ նր-  
րան, վոր չթողնի ծառը վնասելու. բայց ձին կարծես  
բանի տեղ չդրեց Հանեսին և շարունակեց իր գործը:  
Այդ ժամանակ Հանեսը կատաղեց և սկսեց փայտով  
հարվածներ իջեցնել նրա պլիխն, դնչին, վոտներին...

Ձին ծուլ յեղավ:

Ամեն մի հարվածից՝ նա ձգում եր սանձը, ծառո  
եր լինում, փնչացնում և վոտքերը զարկում դետին...

— Այ քեզ, այ քեզ, ասում եր Հանեսը յուրա-  
քանչյուր հարվածի հետ: — Այ քեզ, ել կը կոծես...

Շուտով, ձիու թփթփոցի վրա, անից դուրս յեկան  
քեռի Ոսեփն ու մայրիկը:

— Ի՞նչ ես անում, այ տղա, ի՞նչ ես անում,  
ճշաց մայրը Հանեսի վրա:

Լսելով մոր ձայնը և տեսնելով քեռի Ոսեփի բարկացած դեմքը, Հանեսը ձգեց ձեռի փայտն ու լաց յեղավ: Նա լալիս եր ամոթից ու անդոր բարկությունից... Յեկ մայրն ու քեռի Ոսեփը, առանց հարցնելու, թէ ինչ և պատահել, յենթադրեցին, վոր ձին քացի յետվել նրան...

Այդ որը Հանեսը չքացավ հանկարծ:

Մայրը յերկար վորոնեց նրան հարեանսերի բակում, փողոցներում. հարց ու փորձ արավ թաղի յերեխաներին, թէ մեկն ու մեկն արդյոք չի տեսել Հանեսին:—Վոչ վոք չեր տեսել... Բայց վերջապես, Հանեսը յերկավ. յեկավ ինքն իրեն, յեկավ այն ժամանակ, յերբ պետք եր քնել:

— Վարտեղ եյիր, այ տղա, հարցըց մայրը բարկացած:

Հանեսը լուռ եր: Իր փոքրիկ հասակով տան մեջ տեղը կանգնած՝ նա հոնքերը կիտած, աչքերը հառել եր գետին:

— Քեզ եմ հարցնում, վարտեղ եյիր, կրկնեց մայրն ավելի զայրացած:

Հանեսը դարձյալ լուռ եր: Նրա շրթունքները դողում եյին ծնկների հետ:

Մայրն առավել բորբոքված մոտեցավ նրան.

— Խոտատեղն եյիր, այ տղա... Ինչու չես խոսում. թոկն ուր ե...

Այս անդամ Հանեսի դեմքը բարակեց ու յերկարեց, և կատարվեց մի բան, ինչ վոր մայրը չեր սպասում:

Հանեսը հեկեկալով փաթաթվեց մոր ծնկներին ու սկսեց լաց լինել: Նա լալիս եր առատ, անդուսպ արցունքներով: Լաց եր լինում ու կրկնում:

— Չեմ ուզում, չեմ ուզում...

Մայրը բան չեր հասկանում:

— Ի՞նչը, այ տղա, ի՞նչը չես ուզում:

— Չեմ ուզում, չեմ ուզում... Յես խոտ չեմ բերի, ասում եր նա լացի և հեկեկոցի միջից:— Չեմ ուզում. թող նա ել չգա, թող չգա մեր առւն... Յես նրա ձիու համար խոտ չեմ բերի...

Մայրը նորից յենթադրեց, վոր ձին քացի յետվել Հանեսին, թե չե ինչու համար ե լալիս և այդպիսի խոսքեր ասում:

— Եսոր ձին քեզ քացի տվեց, Հանես ջան,— ասաց նա մեղմ, վորդու գլուխը շոյելով:

Բայց Հանեսը չհանգստացավ.

— Չե, յես չեմ ուզում. թող նա ել չգա...

— Ո՞վ, ո՞վ չգա, Հանես ջան:

— Բեռի Ոսեփը... թող չգա... Ասում են, ասում են... նա յե սպանել այրիկին:

Յեկ ավելի բուռն ու ավելի անդուսպ հեկեկանքով փարվեց մոր ծնկներին:

Մայրը մնացել եր սպասած...

\* \* \*

Յերկու շաբաթ անց, քեռի Ոսեփը Հանեսին տարավ քաղաք և տվեց կոշկակարի աշակերտ...

Յեկ այգտեղ, այդ անծանոթ ու աղմկալից քաղաքում Հանեսի համար սկսվեց մի նոր կյանք...

## ԱՆՀԱՅՏ ԹԵՂԵՐ

Ակադեմիային տվյալներ, ձանձրական գեղանակներ:

թեև ողոսառուը նոր եր, բայց լեռնային այդ գյուղ  
գումա աշունն արդեն ցույց եր տալիս իր բոլոր գույ-  
ները. անտառը պարուրող կաթնազույն մշուշը յերե-  
կոյից իջնում եր գյուղի վրա և մինչև առավոտ ծած-  
կում նըան իր պաղ, թափանցիկ քողով. հաճախ տե-  
ղում եր մանրահատ անձրե, մի այնպիսի անձրե, վոր  
ծակում և մարդու յերեսի մորթը, սարսուռ և ազդում  
մարմնին և թվում ե, թէ վոչ վերջ և ունենալու, վոչ  
վախճան:

վախճան:

Տիմուր եր. արևածաղիկները գլխակոր նայում  
ելին գետին, ծառերն այդինքում թրջված հսկաների  
պես մնացել ելին համբ ու անշարժ, իսկ հավերն ան-  
գործ ընկած սայլերի կամ այլ ծածկույթների տակ  
հավաքված շարունակ քրբերում ելին իրենց փետուր-  
ները, վոր գյուղացիների համար նշան եր նոր անձրեի:  
Գյուղն ամառելու յեկած մարդիկ մաս ելին զալիս վե-  
րաբերուներով, կը կնակոշիկներով և անձրեանոցով: Նախ-  
կին գրավիչ ամառանոցն այժմ թվում եր ան-  
հրապույր, ատելի, ինչպես թարմությունը կորցրած  
վաղեմի գեղեցկուհի: Զանձրույթից շատերը պատ-  
րաստվում ելին ճեռանալու այդ տխուր ամառանոցից:

Դյուղացի Յերեմի կենվորները սույնակն պատշաճութեամ եյին քաղաք մեկնել։ Դրանք սպիտակահեր, անզավակ ամուսիններ եյին, բայց իրար սիրում եյին

ինչպես նորապատկեներ, գողում ելին մեկը մյուսի առողջության համար, ճաշին միմյանց մեկնում ելին յուղոտ պատառներ, իսկ թեյի ժամանակ միշտ մի ավելորդ կտոր շաքար ելին դցում միմյանց բաժակ, «թող քաղցր լինի» ասելով: Նրանք յերեանցի ելին, իրենց ասելով ունեյին սեփական տուն, խանութներ և խաղողի մի այգի: Յեղանակի պատճառով նրանք ել շտապում ելին շուտով հեռանալ: Սակայն յերկու որ եր արդեն, վոր նրանք իրենց իրերը կապկպած, սըրտատրով սպասում ելին, թե ծերեմն ու իր կինը ինչ պատասխան պիտի տան իրենց առաջարկին: Բանը նրանումն եր, վոր այդ անզավակ ամուսինները ցանկություն ելին հայտնել Յերեմին ու իր կնոջը—վորդեզրել նրանց հինգ աղջիկներից մեկին, ամուսնացնել նրան և իրենց ամրող կարողությունը կտակել նրա զիմին: Բայց ահա յերկու որ եր զյուղացի ամուսինները չելին կարողանում նրանց պատասխան տալ: Յեվ ծեր ամուսինները, անխուսափելի շալերն ուսերին, շարունակ դուրս ու ներս ելին անում պատասխան ստանալու հույսով: Իսկ զյուղացի ամուսինները պատասխան տալ չելին կարողանում, վորովհետեւ զըժվարանում ելին վճռել իրենց համար այդ անսովոր խնդիրը: Քաղաքացիների առաջարկը ակզրում նրանց թվաց շատ անբնական, նույնիսկ անգութ, բայց հետո գտան, վոր այդ բանը կարող է և բախտավորեցնել իրենց զավակներից մեկին և թերթեցնել իրենց ծախսը. չե վոր իրենք ծայրը ծայրին չեն հասցնում. թեև մարզը յերկրագործական աշխատանքներից դուրս, ասյլով միշտ ապրանքի բեներ և կրում կայարանից գյուղ և զյուղից կայարան, իսկ կինը գրեթե ամեն որ մանած և անում գյուղի ունեորների համար, բայց շատ բան դարձյալ պակաս և մնում: Չի ոգնում և այն,

— Ե՞ս, բա վճնց անհնք հիմի, — հարցը եց Յերեմը  
տարակուսած:

Կինն ուսերը վեր բաշեց: Մեծ աղջկանն ու նրա-  
նից փոքրին տալ չեր կարելի, վորովհետեւ նրանք մորն  
ոգնում եյին անային գործերում. իսկ ամենից փոքրը  
դեռ ամուսինների առաջարկը ամեն կողմից քննելով,  
նրանք այն դժուում եյին իրենց համար ողտակար.—

Վայտ կը լինի միթե, վոր իրենց դավակներից մեկը  
դառնա այդ ունեոր մարդկանց ժառանգը. ի հարեկ—  
վոչ: Բայց յերբ ինդիրը դառնում և աղջիկներից վնր  
մեկին հանձնելուն, նրանք չեյին կարողանում ընտ-  
րություն անել:

Այդ յերեկո ել մարդ ու կին գոմում նստած դար-  
ձյալ խոսում եյին նույն այդ բանի մասին: Մարդը նստել  
եր մեջքը սյանը զեմ տփած, իսկ կինը թախտի վրա  
ծալպատիկ իւիկ եր մանում: Սյունից կախված լամպը  
լուսավորում եր նրանց մտազբաղ արեառ դեմքերը և  
գոմի կեսը: Վորովհետեւ յերեխաներն այդտեղ՝ գոմում  
եյին, ամուսինները խոսում եյին կամաց, ակնարկնե-  
րով և դարձյալ գժվարանում եյին մի բան վորոշել:  
Յերեմը, ձանձրացած գործի այս ընթացքից, դարձավ,  
վերջապես, կնոջը:

— Արի, Աննամ, Աշխենին տանք:

Կինը ցնցվեց սիջնակ աղջկա անունը լսելով:

— Գժվել ես, ի՞նչ ե, այ մարդ, — ասաց նա մեղմ  
հանդիմանանքով, — բա զագերն ով արածեցնի:

— Սաթոն:

— Սաթոն... բան մտածեց: Նա ի՞նչ և վոր՝ ի՞նչ  
զագեր պահի, զեռ սխտը տարեկան չկա:

— Դե վոր եղպես ե — Սաթոնին տանք. մի բան,  
վոր մարդիկ ասում են՝ վորին կուղեք տվեք:

— Զե մի, Սաթոն: Նա զեռ յերեխա ե, այ մարդ,  
իրա շորերը հանել չի կարում:

— Իսկ նրա հետ քաղաք կերթաս, — հարցը եց  
մայրը նորից:

— Խի ցեմ ուզիլ...

— Ինձ կը թողնես՝ կերթաս:

— Հա...

— Բա վոր քեզ ծեծեն:

— Խի են ծեծում. շաքար հո ցեմ գողանա, վոր  
ծեծեն:

Ամուսինները ժպացին և նշանակալից հայաց-  
քով իրար նայեցին: Իսկ այդ հայացքն ասում եր.

վոր ամառները, յերբ տավարը դուրսն և կապվում,  
նրանք գոմում տեղափորվելով, ունեցած յերկու սեն-  
յակը տալիս են քրեհով: Վոչ, այդ քրեհը նույնալիս չի  
ոգնում և ելի մի բան միշտ պակաս և մնում... Յեզ  
ծեր ամուսինների առաջարկը ամեն կողմից քննելով,  
նրանք այն դժուում եյին իրենց համար ողտակար.—  
Վայտ կը լինի միթե, վոր իրենց դավակներից մեկը  
դառնա այդ ունեոր մարդկանց ժառանգը. ի հարեկ—  
վոչ: Բայց յերբ ինդիրը դառնում և աղջիկներից վնր  
մեկին հանձնելուն, նրանք չեյին կարողանում ընտ-  
րություն անել:

Այդ յերեկո ել մարդ ու կին գոմում նստած դար-  
ձյալ խոսում եյին նույն այդ բանի մասին: Մարդը նստել  
եր մեջքը սյանը զեմ տփած, իսկ կինը թախտի վրա  
ծալպատիկ իւիկ եր մանում: Սյունից կախված լամպը  
լուսավորում եր նրանց մտազբաղ արեառ դեմքերը և  
գոմի կեսը: Վորովհետեւ յերեխաներն այդտեղ՝ գոմում  
եյին, ամուսինները խոսում եյին կամաց, ակնարկնե-  
րով և դարձյալ գժվարանում եյին մի բան վորոշել:  
Յերեմը, ձանձրացած գործի այս ընթացքից, դարձավ,  
վերջապես, կնոջը.

— Արի, Աննամ, Աշխենին տանք:

Կինը ցնցվեց սիջնակ աղջկա անունը լսելով:

— Գժվել ես, ի՞նչ ե, այ մարդ, — ասաց նա մեղմ  
հանդիմանանքով, — բա զագերն ով արածեցնի:

— Սաթոն:

— Սաթոն... բան մտածեց: Նա ի՞նչ և վոր՝ ի՞նչ  
զագեր պահի, զեռ սխտը տարեկան չկա:

— Դե վոր եղպես ե — Սաթոնին տանք. մի բան,  
վոր մարդիկ ասում են՝ վորին կուղեք տվեք:

— Զե մի, Սաթոն: Նա զեռ յերեխա ե, այ մարդ,  
իրա շորերը հանել չի կարում:

«Թեհ դժվար ե, բայց, ինչ արած, սրան կարելի յիշ...  
Յեվ հարցն այսպիսով լուծվեց. վորոշից Սաթո-  
յին վորդեղիք տալ քաղքցոց:

\* \*

Յեր ծեր ամուսիններն այդ վորոշումն իմացան,  
ուրախությունից արտասվեցին իրենց արված շնորհի  
համար.—այն, ինչ զլացել եր աստված, տալիս եյին  
մարդիկ, հասարակ գյուղացի մարդիկ... Հիմտ վերջա-  
պես իրենք կունենան մի ժառանգ, վոր մահից հետո  
գոնե կը հիշի իրենց... Ուրախությունից նրանք չգի-  
տեցին ինչպես շնորհակալ լինեն իրենց շնորհատունե-  
րից. կանայք՝ արտասվակալած աչքերով, մի քանի  
անդամ սրտաղեղ համբուրվեցին, տղամարդիկ սեղմե-  
ցին իրարու ձեռք: Յեվ ապա իրենց մեկնումը մի ո-  
րով հետաձգելով՝ ծեր ամուսինները յերեխայի մոր  
համար ձմեռվա մի փափուկ շալ առան ընծա, իսկ ի-  
րա՛ Սաթոյի համար գնեցին հագուստ ու փոտնաման-  
ներ. հագցրին, կապցրին նրան, ձեռքերն ու յերեսը  
լվացին սապոնով, մաղերը սանրեցին, ժապավենով  
կապեցին, զուքեցին դարձրին քաղաքացու աղջիկ,  
այնպես վոր տեսնողի նախանձն եր շարժում: Նախան-  
ձում եյին մանավանդ իր վոտարորիկ քույրերը, վո-  
րոնցից ամեն մեկը սրտանց կամենում եր նրա տեղը  
լինել: Սանամն այս բոլորին նայում եր առանձին հը-  
պարտությամբ, վոր իր յերեխայով բախտավորեց  
անդավակ մարդկանց, իսկ փորբիկ աղջիկն իր նոր  
հագուստներում իրեն պահում եր ծանր ու մեծ և շո-  
րերը չկեղտոտելու համար պատշգամից ցած չեր իջ-  
նում քույրերի մոտ: Այդ որը գյուղացի ամուսինները,  
ծերերի հրավերով, ճաշեցին նրանց մոտ. կերակուրը  
ըրդեցին, ինչպես իրենց բոլոր կերակուրները, միսը

կերան մատներով, ձեռք չմեկնելով անդամ առաջները  
դրված պատառաքաղին ու դանակին: Իսկ հետեւյալ որն  
առավոտյան Յերեմն իր սայլով (ամառանոցի կառքերն  
կայարան եյին գնացել) նրանց՝ իրենց վրերով,  
Սաթոյի հետ, տարավ յերկաթուղու կայարանը,  
վոր յերեք վերստի վրա եր: Ծեր ամուսինները շալն  
ուսերնին տեղավորվեցին կապցների մոտ իսկ Սա-  
թոյին նստացըրին իրենց արանքում: Անձրևի պատ-  
ճառով Սանամը նրանց ձանապարհ զցեց մինչև գույ-  
զի ծայրը: Հրաժեշտի ժամանակ նա մի քանի անդամ  
համբուրեց աղջկայ թշերը և գոկնոցը տարավ աչքե-  
րին: Մինչև այդ նրան այնպես կը թվում, թե Սա-  
թոյին տանում են ժամանակավորապես և շուտով  
պիտի վերադարձնեն, բայց այդ բովեին նա զգաց  
վոր, գուցե, իր երեխային այլևս չտեսնի, և արցունքը  
զսպելու համար՝ աչքերը ծածկեց գոկնոցով:

Վերադարձի ամբողջ ճանապարհին ամեն ինչ  
նրան թվում եր ավելի տխուր, ավելի մուայլ. թրջված  
այդիները, տները թվում եյին վորը, անողնական,  
մոռացված. բոլորը միասին տխրած արտասվում եյին  
կարծես:

Տան մոտ նա հանդիպեց իր գյումբեցի հարկա-  
նուճուն՝ պայտառի կին Մարուշին, վոր թեշիկ վուրե-  
լով ու մաստակ ծամելով կտրեց նրա առաջը:

—Քա-աղջի, Սանամ, երեխին տարածն,—հար-  
ցրեց նա հետաքրքիր աչքերը հասելով իր հարկա-  
նուճու դեմքին:

Սանամն անխոս գլխով արավ:

—Շատ ել լաւ երիք. թեթևանաք կը քիչըմ  
—շարունակեց ալբան ցավակցելով և, ապա խոսքը  
փոխելով, ավելացրեց.—եհ, ինչըդ երիք,, փարայ-  
մարա տվի՞ն, թե...

—Մենք երեխայ ծախող չենք, աղջի ջան,—վըրպաված պատասխանեց Սանամը և հ, երեսը շուռ տալով, մտավ տուն։ «Եդ եր պակաս, երեխա ծախեցինք, մտածեց նա, հիմի կոկոն բամբասանքը»...

Տանն ու զրանը ամեն բան յիշեցնում եր Սամոյին։ Անա այստեղ եր, վոր նստում եր Սաթոն ու յերեխին որորում. եստեղ եր անա, վոր քնում եր նա, անա ես ավաղի վըա եր, որ խաղում ու տնակներ եր շինում... Եվ յանկարծ Սանամը մի այնպիսի դատարկություն զգաց տան մեջ ու իր սրտում, վոր ինքն իրենից սարսափեց... Ով ե տեսել ծնողն իր ձեռքով յերեխին ուրիշի տա, մտածեց նա, ինչ կ'ասեն խալխար... Մի փոքրիկ յերեխա ոտար, հեռու քաղաքում. յեթե քնած տեղը բաց լինի, ով պիտի ծածկի նրան, յեթե գեշերը ջուր ուզի, ով պիտի ջուր տա... «Են յիս չեմ՝ վոր գիշերը մի քանի անգամ վեր կենամ»—մտածեց նա։—Նրանք ծեր, Սաթոն յերեխա—ինչ կարող են անել. մինը պիտի նրանց ծառայի... իսկ յեթե հանկարծ հիվանդանա՝ կարմրուկ կամ ծաղիկ հանի, վճնց պիտի պահեն նրան... «Դեղով ու դոփատուրով կոպանեն երեխիս» մտածեց Սանամը, յերեակայելով իր Սաթոնին մենակ, անողնական մի մեծ քաղաքում։

Յեվ պատկերացան նրան մեծ-մեծ տներ (այն ձեռվ ինչպիս տեսել եր թղթերի վըա նկարված), ոտար, անծանոթ, սառը մարդիկ, կանայք և լավ հազնված յերեխաներ։ Նրանք բոլորը անցնում և հըրում են Սաթոյին։ Իսկ Սաթոն մոլորված ձանապարհ չի գտնում և լաց և լիմում փողոցի մեջ. լաց և լինում ու կանչում. «նանի՛, նանի՛»... Իսկ նանը չկա... նանը հեռու ե, շուրջը խորթ, անծանոթ մարդիկ... Յեվ նա յերկուղած մտածեց—միթե աստված այդ բա-

նը կների իրեն. յեթե մի բան պատահի Սաթոնին, ինչ կասեն գեղացիք, հարկանները։ «Մի շալի համար յերեխան տվել ե... Յերեխան ծախել և մի շալի»... Ահա ինչ պիտի ասեն։ Իսկ աստված այս բանը կը ների... ի հարկե, ի հարկե, չի ների։ Տեսնելով տված յերեխաներին չի պահում, մյուսներն ել կը խլի իրենից... Այո, կը արկանա ու կը խլի...

Այս միտքն այնպես վախեցրեց խեղճ կնոջը, վոր նա կանգնած տեղը դողաց, թե մի գուցե աստված հենց հիմա իրազործի իր պատիժը, ու բնազդարար նայեց որորոցին... Ոչ, նա իր յերեխին ուրիշի չի տա... Չորս աղջիկ պահողը, հնգին ել կողահինորսի համար հաց գանողը, հնգի համար ել կողնի։ Յեթե չորսը սոված պիտի մնան, թող Սաթոն ել նրանց հետ սոված մնա։ Դա ավելի լավ ե...

Ու ահեղ պատժից՝ մյուս յերեխաներից զրկելու մտքից սարսափած, նա չկարողացավ այլևս կանգնել, հստել մի տեղ։ Մի թագուն ձայն կարծես շարունակ ասում եր նրան «յեթե յերեխադ յետ չը բերես, մյուսներից կզրկվես»...

\* \* \*

Փոքր անց Սանամն արդեն գնում եր դեպի կայարան։ Ընծա ստացած շալը կոնատակին՝ նա գրեթե վաղում եր ցեխոտ փողոցով. չնայած վոտնամանները խրվում եյին ցեխի մեջ, շրջազգեստը փաթաթվում եր վոտներին, բայց նա ավելի եր արագացնում եր քայլերը, հույս ունենալով դեռ ճանապարհին համել սայլին։

Նա գնում եր յերեխային յետ բերելու։  
Յերեք վերսա տարածությունն անցավ մի ժամում։  
Յեվ ճամփին բոլոր ժամանակ մտածում եր. — իսկ յեթե

հանկարծ գնացած լինեն, յերեխին տարած... Ո՛, յեթե  
տարած լինեն, նա մինչև քաղաք կերթա նրանց յետե-  
վից, նա թոյլ չի տա. նա իր յերեխին պիտի յետ բերի...

Երա սիրաը հանդարտեց այն ժամանակ միայն,  
յերբ հեռուից նկատեց իրենց սայլը կայարանի  
շենքի մոտ: Լծարաձակ յեղները՝ թոկով իրար կապիտն,  
վորոճում եյին հանգիստ: Ուրեմն զեռ չեն գնացել:

Նա քայլերն արագացրեց:

Հասնելով կայարան, նա զլսապատճռ մտավ  
նրա միակ դահլիճը և, առանց վորեն խոսք ասելու,  
խելագարի պես սկսեց համբուրել յերեխային, վոր  
կանգնած եր ծեր ամուսինների և Յերեմի մոտ:

— Յես քեզ ուրիշի չեմ տա, չե. չեմ տա, չեմ  
տա, — ասում եր նա յերեխային ու համբուրում:

Ծեր ամուսինները, վոր շալերն ուսերին նստած  
եյին իրար կողքի, զարմացած նայում եյին Սանա-  
մին և կարծու հարցնում եյին իրար. «Ի՞նչ ե պատա-  
հել սրան»: Պակաս զարմացած չեր և Յերեմը, նա մորթե  
փափախի տակից ամոթահար նայում եր մերթ կնոջը,  
մերթ կենքորներին և, չգիտեր ինչ անել:

Յերկար աղջկան համբուրելուց հետո, վերջա-  
պես, Սանամը, դարձավ պառավին.

— Ե՛ս ձեր շալը, մայրիկ ջան, — ասավ նա ընծան  
պառավի ծնկան գնելով: — Առեք, յես իմ երեխին  
կարալ չեմ տալ կարալ չեմ. ներողութին կանեք.  
կարալ չեմ...

Ներողության ելի միքանի խոսքեր բըթմաշալով,  
նա յերեխային ամուր զրկած շտապ-շտապ դուրս  
յեկավ կայարանի շենքից, այնպես, կարծու մեկը հե-  
տապնդում եր նրան՝ յերեխան խլելու:

Թե ձեր ամուսինները, թե Յերեմը և թե կայարա-  
նում հավաքված մարդիկ մնացել եյին տարակուսած,  
աղջած Սանամի արարքից:

Պառավ «մայրիկն» այդ տեսնելով, յերկար չը  
կարողացավ համբերել և լաց յեղավ:

— Յերեխին տարավ, Գոքոր, — ասավ նա մարդուն,  
թաշկինակն աչքերին սեղմելով:

Ծեր ամուսինն սկսեց մխիթարել նրան:

— Վոչինչ, վոչինչ յերեխ ասաված եղավու և կամե-  
ցել, մեր ճակատին յերեխ յերեխա չի գրած...

Ծուտով գնացքը յեկավ: Ծերուսիները գողղոջուն  
քայլերով, սպավորի նման դուրս յեկան դահլիճից:  
Յերեմը նրանց վագոն նստեցնելուց հետո, նույնպիս  
տիսուր և միաժամանակ ամոթահար, ասես մի հանցան-  
քի մեջ բռնված, սայլը լծեց ու շտապեց տուն:

Կինը հասնապարհին սպասում եր նրան:

— Զե, Յերեմ, չե, ինձ բան չասես. բարկանաս վոչ.  
յես իմ յերեխին կարալ չեմ ուրիշի տալ, — ասավ նա  
սայլ նստելով, — կարալ չեմ... Հասկացիր ու բան մի  
խոսալ, թե արեգ կաիրես:

Մարդն ամոթից բան չեր գտնում ասելու:

— Աստված զրա համար չի ինձ երեխայ տվել,  
վոր յես բաժանեմ. չե, Յերեմ, վրես բարկանաս վոչ...  
Յերեխա տվողը, ապրուստ ել կտա. յես գիշերներն ել  
կաշխատեմ՝ իմ երեխին ուրիշին չեմ տա...

Յեվ նա կրկին ու կրկին համբուրեց աղջկա  
ճակատը, այտերը, մազերը: Համբուրում և ժպտում  
եր ինքն իրեն. և ամեն բան այժմ պայծառ, ուրախ եր  
թվում նրան. թըջված այդիները, կարծնս լիացած, գո-  
հությամբ նայում եյին յերեխնք, ծառերը շողշողում  
եյին ցողակալած տերեներով, իսկ արեածաղիկները  
ժպտում եին իրենց դեղին աչքերով և զլսով անում...

## ՅԱՆԿԱՊԱՏ

Այսպես.—

Վաղուց, շատ վաղուց, գուցե դեռ պապերի որից Մինասի և Թեսոսի այգիները գտնվում եյին իրար կողքի։ Դրանք իսկապես այգիներ չեյին, այլ փոքրիկ պարտեզներ ծուռ ու մուռ պտղատու և անպտուղ ծառերով, վորոնք իրանց անկարգ շարքերով հիշեցնում եյին իրար խառնված զորք. յերկում եր, վոր տերերն այնքան ել հոգածություն չունեն նրանց վրա. ծառերից շատերը արմատից ու բներից շնակաւել եյին ու փրչոտել, ինչչուս սանր ու մկրատի յերս չտեսած վորքի գլուխ. շատ տեղ, ծեր, խիսլուտած ծառերի կողքին անձնապատճենի պես իրենց գլուխն եյին բարձրացրել ջաճել ծառեր, վոր կարծես ծերերին արհամարհելով աշխատում եյին տեղ անել իրենց և յերկինք պարզել դալար, աճող կատարները։ Տեղ տեղ ել վայրի պատառուկը ոճի նման այս կամ այն ծառին փաթթված՝ ճգնում եր սարդի պես իր շոշափուկները մեխին դեպի հարևան ծառը... Թե՛ այսպես անինամ եյին փոքրիկ պարտեզները, բայց արժեր գարնանը նայել նրանց. — Յերբ կեռասենիներն ու խնձորենիները փթթում եյին ծաղիկներով և կանաչը թափշի նման փայլում եր նրանց տակ, իսկ մեղուներն անվերջ աղմկում եյին նրանց ծաղկերաժակների մեջ, — մի կատարյալ հարսանիք եր լինում այդ փոքրիկ պարտեզներում. ծառերը նմանում եյին

պճնածնորահարսերի, իսկ մեղուների անլոելի յերզը հիշեցնումեր հարսանելան հանդիսավորնվագածություն... Յեվ այդ ժամանակ, իսկապես, արժեր նայել նրանց։

Ինչպես պարտեզները, այնպես ել տները հարեվանների գտնվում եյին իրար կողքի, հենց նույն պարտեզների ծայրում, և այնքան մոտ եյին իրար, վոր յերբ մեկի ներսը խոսվում եր, լսվում եր մյուսի բակում, վորովհետեւ թե պարտեզները և թե տների բակն իրարից բաժանողը մի հասարակ ցանկապատ եր, փշոտ թփերից ու մացառներից շինված մի հին ցանկապատ։

Ո՞, այդ ցանկապատը... Վորքան վեճ, կոիվ ու գանդատ եր տեսել դա. քանի դատավոր, հաշտարար ու միջնորդ եր յեկել դրա մոտ...

Ցանկապատի այդ վեճը, պետք և ասած, հին եր Սկզբում հայրերն եյին վիճում, ապա վեճն անցավ վորդիներին՝ Մինասին ու Թեսոսին, վորոնք արդեն սպիտակախառն մորուքով, հիսունն անց մարդիկ եյին, հարսների ու թռուների տեր։

Վեճն, իսկապես, վերաբերում եր ցանկապատի այն մասին, վոր մի սաժեն տարածության վրա յերկու տեղ աղեղի ձեռվ ծովում եր աջ ու ձախ՝ և տալրի մի ծառ գրկելով՝ գնում եր դեպի փողոց։ Վեճը հենց այդ ծուռ տեղերի մասին եր։ Հարևաններից յուրաքանչյուրը գտնում եր, վոր ծուռ տեղը պետք և ուղղվի հարևանի հաշվին, ուստի և վոչ մեկը չեր զում։ Վեճն, ի հարկե, տարեն տասներկու ամիս չեր շարունակվում, բայց ամին անգամ, գարունը բացվելուն պես, յերբ անհրաժեշտ և լինում պարտեզները մաքրել անցած տարվա ախշպանքից և ցանկապատը նորոգել նոր թփերով ու ծառաճյուղերով, նորոգվում եր և հին վեճը հարևանների միջև։

— Պետք եմի վոտը դպա քեզ դնես չափարը, —  
ասում եր նրանցից մեկը, յերբ տեսնում եր հարեանը  
կամնում եւ ցանկապատը կարգի բերել:

Մյուսը, խոռվ լեզուն բանալով, խուսափուկ հա-  
յացքով պատասխանում եր.

— Ընչի վոր. հազիր դու պըտի մի վոտը քեզ  
քաշես. քու կողմից եւ ծուսը:

— Ներողություն կանես, ծոռղը քո հերն եւ յեղել,  
դու ել պըտի...

— Իմ հերը...

— Հա, հենց քո ազահ հերը:

— Ազահը դու ես...

Ու յերկուսն ել վիրավորվում եյին և ավելորդ  
խոսքեր ասում իրար: Նրանց ձայնի վրա տներից իս-  
կույն դուրս եյին թափվում վորդիները, կանայք.  
հարսները զլուիները հանում եյին դաներից կամ լու-  
սամուտներից, յերեխաները վազում եյին խաղի տե-  
ղից, ու սկսվում եր լեզվակոսիվ. բոլորն ել խոսում  
եյին միասին և աշխատում եյին մի անդամից մի քա-  
նի խոսք ասել: Մի յերկու բովեյում իրար գլխով եյին  
տալիս հին ու նոր, կրկնում եյին այն բոլորը, ինչ  
վոր ասել եյին անցյալ տարի, և ասում եյին բաներ,  
վոր յերբեք չեյին ասել. կամ ծաղրում եյին իրար պա-  
կասություն ու խոսելու ձեւ: Թեսուը հեգնում եր Մի-  
նասի բարձր հասակն ու «սարսաղ» մտքերը, Մինասը  
զարմանում եր նրա կարճ բոյի և մեծ-մեծ խոսքերի  
վրա: Հաճախ զիմում եյին հայհոյանքի կամ շոշափում  
վոսկորները վաղուց մեռած ծնողների: «Բու մերն են  
չեր, վոր անձաշակ մեռավք:» — «Բո հերն ի՞նչ եր. մեր  
գութանի խոփը կերավ!... Յերբեմն ել փորձում եյին  
հարձակվել իրար վրա, բայց հարեանները միջամտում  
եյին, համոզում, խողըում հանդիսաւ լինել: Մեծերին

նայելով՝ հայհոյում եյին միմյանց և յերեխանները.  
իսկ կանայք քիթները վեր քաշելով, ցանկապատի յեր-  
կու կողմից չանչում եյին իրար. «Ի՞ն, հողիմ ձեր  
գլուխը»...

Շատ ժամանակ վեճը վերջանում եր նրանով,  
վոր կամ դրացիների միջամտությամբ, ցրվում եյին  
իրանց աները, կամ յերկուսն ել ջոկ-ջոկ դնում եյին  
դատարան:

\* \* \*

Վերջին անգամ նրանց վեճը տեղի ունեցավ պա-  
տերազմի ժամանակ, այն որերին, յերբ թշնամին գը-  
րավիլ եր կարսը և առաջ եր խաղում, և հենց այն որը,  
յերբ գյուղը պիտի գաղթեր: Զը նայած, վոր շարու-  
նակ վատ լուրեր եյին գալիս, տեղացիներն այնուա-  
մենայնիվ Աստծուն ապավինած, մխիթարվում եյին  
նրանով, վոր թշնամին զեռ ևս չի մոտեցել իրանց  
գյուղին, վոր դուցե յետ դառնա, ուստի և այդ որն  
ամեն մեկը շարունակում եր իր սովորական աշխա-  
տանքը:

Գարնան արեկա որ եր. ողը վետվետում եր ար-  
ձակ դաշտերում և գյուղի կտորների վրա. զգացվում  
եր ծաղկող ծառերի և նոր կանաչի հոտ. հավերն աշ-  
քերը խուփ՝ տափանում եյին արեգընդեմ պատերի  
տակ. փողոցների յեղերքին և ցանկապատերի արան-  
քում աճում եր յեղինջը:

Մինասը չուխեն հանած, ուրագը ձեռին չթի մաճ  
եր շինում իր բակում և միաժամանակ նայում պար-  
տեղն արած նորածին նորթերին, վոր վախվիսելով  
գունչերը մոտեցնում եյին ծառերին, թփերին,  
հողին և միջտ դողահար ծուլ լինում (գոմից նրանց  
առաջին անգամն եյին դուրս բերել): Մեկ ել հանկարծ

Նրանք խրանեցին և փախան դեպի այգու խորքը: Յեկ  
յերք Մինասը յելավ տեղից իմանալու, թե ինչից ար-  
դյոք նրանք խրանեցին, նա նկատեց հարեան թեսուին,  
վոր չուխի փեշերը յետ ծալած՝ ինչ-վոր բան եր տ-  
նում ցանկապատի մոտ:

Հարեանին տեսնելով՝ Մինասը թողեց ձեռքի մա-  
ճը. ի՞նչ ե անում թեսուն այստեղ... Նա ուրագը խրեց  
զոտին մեջքի կողմից և դնաց դեպի ցանկապատը:  
Թեսուր ծառերից կտրած չոր ճղափայտեր եր խրում  
ցանկապատի մեջ, յերեկ ցանցառ տեղերը խտացնե-  
լու համար: Մինասը կանգ առավ, կուրծքը դուրս գցեց  
և ձեռները կանթեց մեջքին: Իր այդ կեցվածքով և  
համառ նայվածքով նա կարծես հարեանին հասկացնել  
եր կամենում, թե ինքը քնած չի: Թեսուր սակայն նրա  
ներկայությունը նկատելով՝ ձեացնում եր իբր թե  
վոչինչ չի տեսնում և, գլուխը կախ, շարունակում եր  
իր գործը՝ հանդարտ ու անխոս արհամարհանքով: Այս-  
պիս շարունակվեց մի քանի բոպե: Հարեանի անտար-  
բերությունը վերջապես վրդովեց Մինասին. նրա սափ-  
րած ներքին ծնոտը դողաց մալարուսական բեղերի  
տակ:

— Ի՞նչ ես անում,—հարցը նա զուսով զայրույշ-  
թով և մի այսպիսի չոր յեղանակով, վոր հատուկ և  
խոռվ մարդկանց, յերբ նրանք, հակադրված, խուսա-  
փող հայացքներով դիմում են միմյանց: Անցած տար-  
վա վեճից հետո նրանք առաջին անգամ եյին կանգ-  
նում դեմ առ դեմ:

Թեսուր չը պատասխանեց: Նույն անտարբերու-  
թյամբ նա շարունակում եր ճյուղերը խրել ցանկա-  
պատի մեջ:

Մինասն ավելի վրդովեց:

— Քեզ եմ ասում ե, եղ ի՞նչ ես անում:

— Աչքերդ տեսնում չեն, —պատասխանեց Թեսուր  
հանդարտ:

— Կույր չեմ. բայց քեզ ովք ե իրավունք տվել որ...

— Ումից պետք ե իրավունք խնդրեմ իմ բանի  
համար:

Մինասն ավելի վիրավորվեց հարեանի արհամար-  
հական պատասխանից: Այդ արդեն չափաղանց եր:  
Ի՞նչպիս թե ումից պետք ե իրավունք խնդրի. իհարկե  
— իրենից:

— Ձեռ մի տալ ես չափարին, —գոչեց նա հան-  
կարծ. — Ճեռ մի տալ:

— Ի՞նչ, չափարը քունն ե...

— Ումն ե բա... թոնն ե: Հերիք չի ծռել ես դե-  
սը, հիմի ել ձզներ ես կոխում, վոր զավթես, հա...  
թող, ասում եմ, Ճեռ մի տալ...

Յեկ Մինասը ձեռ թափ տվեց սպառնալից:

Բայց հարեանը նրան չեր լսում և, նույն հանդար-  
տությամբ, շարունակում եր իր գործը:

Մինասն իր սպառնալիքը կրկնեց:

Հարեանը պատասխանեց միայն.

— Գլուխ մի տանիլ: Հերիք հա...

— Շունը դռւ յես...

Ու կանգնեցին դեմ դիմաց և սկսեցին ծանր խոս-  
քերով վիրավորել իրար. նորից հիշեցին մեռելներին,  
ծաղրեցին միմյանց պակասություն, հանդիմանեցին  
իրար ագանության համար:

Նրանց աղմուկի վրա անցորդները կանգ առան  
փողոցում և վիզները յերկարած՝ ցանկապատից նայե-  
ցին կովողներին. յերեխաներն ավելի լավ տեսնելու  
համար մազլցեցին դիմացի կիսապատի վրա. հավաք-  
վեցին հարեանները աշխատանքի գործիքներով—բան,  
փոցի, ջրի կուժ ձեռներին: Վրա հասան և կովողների

տնեցիները, մանուկները ատելությամբ նայեցին իւսար, հարսները գլուխնին որորեցին արտմությամբ, իսկ կանայք սկսեցին քաշքշել ամեն մեկն իր ամուսնու փեշը, անհծներ ուղղելով հակառակորդի անձին ու ցեղին: Այդ քաշքշուկը սակայն հակառակորդների գայրութն ավելի գրգռեց: Մինասը հարևանին սպառնաց զոտկից հանած ուրագով, իսկ թեսուը ցանկապատից վերցրած փշոտ ճյուղով:

— Մի թող հլա, — ասում եր Մինասը դեպի հաւընը դնալով:

— Մի թող, թող մի, — ասում եր թեսուը նույնապէս դեպի հարևանը դնալով:

Բայց կանայք չեյին թողնում: Նրանք ամրող ուժով ձգում եյին ամուսինների փեշերը, և նրանք ցանկապատի շնորհիվ իրար մոտենալ չեյին կարողանում:

Կոիվը կարող եր մեծանալ, յեթե վորդիները տանը լինելին, բայց նրանք, բարերախտաբար, բանակումն եյին, ուստի և դրացիներին աջողվեց շուտով դադարեցնել հարևանների ընդհարումը:

Մինասը, սակայն, իրան վիրավորված զգալով, չուխան վերցրեց և թեսերը փողոցում հաղնելով՝ դնաց դատարան:

Թեսուը կամենում եր հետեւ նրան, բայց կինը չթողեց:

\* \*

Զանցավ քսան ըսպե՞ Մինասը վերադարձավ, իր հետ բերելով տանուտերին և գյուղական գատավորներին: Տանուտերը, վոր մի շատ նիհար, բարձրահասակ և ուղիղ մեջքից սկսվող վոտքերով չորչոր մարդ եր յերկարածիտ ու սրաքիթ մույկերով, անրաժման ճիղու-

որ ձեռին, գատավորներին բերել եր հարևանների վեճին միանգամ ընդմիշտ վերջ տալու մտքով, վորովհետեւ իր տանուտերության որերում նա չորս անգամ զրադվել եր այդ վեճով և միշտ ապարդյուն: Այսոր առանձնապես նրա տրամադրությունը վատ եր, վորովհետեւ կինը նորից աղջիկ եր բերել:

Կանչեցին թեսուին: Լսեցին կողմերի բացատրությունը, ապա չորսն ել չոկ-ջոկ զննեցին ցանկապատի աղեղնաձև մասերը, առանձին խորհրդակցեցին իրարուհետ և վճիռ կտրեցին: — ծուռ տեղերը շտկել և ցանկապատին ուղիղ շարունակություն տալ: Ի՞նչ կասեն սրան հարևանները: Դատավորների կարծիքով այս վճիռը պետք ե վոր յերկուսին ել բավարարի:

Հարևանները գժգնության նշաններ ցույց տվին: Առաջինը խոսեց Մինասը:

— Եհարկի գատավորների վճիռն իր համար որենք ե, բայց նա գատավորներին բերել ե արդար գործ տեսնելու և վոչ թե նրա համար, վոր իր հողը վերցնեն ուրիշի տան:

— Ծուռը նրա կողմից ե, նա յել պետք ե մի յերկու վտաը իրան քաշի, վոր...

Թեսուը ցնցվեց և աղմուկով շունչ քաշեց քթածակերով.

Վճնց չե: Այդպիս բան չկա: Դատավորների վըձիռը իր համար ել, իհարկե, որենք ե, բայց քանի վոր ծառզը յեղել ե Մինասի հայրը, Մինասն ել պետք ե ուզզի: Այդպիս մարդուն նա մի թիղ ել հող չի տամեկնվելու...

— Եղ ել են չը դառավ վոր...

Նրանք ուղում եյին նորից վիճել, բայց տանուտերն իր չոր ձայնով սասակ և, ապա, գատավորների վճիռն ի կատար ածելու համար, ձեռի ճիղութիւն նշա-

նով կանչեց այդտեղ՝ մոտիկ փողոցում կանգնած վեճի վախճանին սպասող զյուղացիներից յերկուսին։ Առաջ յեկան յերկու առույգ յերիտասարդ։ Տանուտերը կարգագրեց քանդել ցանկապատի ծուռ տեղերը մի սաժեն յերկարությամբ և ուղիղ գծով միացնել իրար։ Հարեվանները փորձեցին ընդդիմանալ։ Թեսուր բոնեց քանդողներից մեկի բահն ու բաղուկը՝

—Տուսս մի քանդեք...

Բայց տանուտերն անողոք մնաց։ Հարեաններին լոեցնելու համար նա այս անգամ ստիպված յեղավ փակել նրանց իրենց տներում։ Կես ժամ հետո, սակայն, յերբ ցանկապատը բոլորովին կարգի բերվեց, նրանց արձակեցին։

Յերբ տանուտերն ու գատավորները գնացին հարեաններն առանձին-առանձին վաղեցին ցանկապատի մոտ։ Ո՞ւ, այդ ինչ եյին արել.. Յուրաքանչյուրն զգում եր, վոր կատարվել ե մի մեծ անարդարություն, վոր ինքը բանագատված ե, վոր գտատավորներն ահազին վասա են հասցըել իրան։ Թեսուր մտքում մեղադրում եր Մինասին։ յեթե նա դատավորներ չը կանչեր, բանն այսպես չեր լինի։ Մինասը կարծում եր, վոր հանցանքը թեսուին ե. յեթե նա ցանկապատին ձևու տար, ինքը դատարան չեր գնա։ Իսկ յերկուսը միամին մտածում եյին, թե միթե կարելի յե հորից ժառանգություն ստացած հողը մի որվա մեջ այսպես հեշտությամբ կորցնել։

—Չե, եսպես չի կարելի. ես բանն եսպես չպիտի մնա...»

Ցեվ, իսկապես, բանը դրանով չը վերջացավ,

\* \*

Այդ միջոցին եր անա, վոր պատահեց այն, ինչից բոլորը դոդում եյին, բայց չեյին սպասում։

Հազիվ տանուտերը դատարան եր հասել, յերբ լուր տարածվեց, թե թշնամին մոտենում է և թե մոտակա կաղնուտ գյուղը տեղահան յեղած գալիս և լուրն ստուգելու համար տղամարդիկ յելան կտուրները, յերեխանները վագեցին գեպի խճուղին։ Շատ չացավ յերեացին իսկապես ձիավոր կաղնուտացիներ՝ հերացանով և վախվորած գեմքերով. ապա հեռվում նկատվեցին բեռնավորված սայլերի շարաններ։ Կաղնուտացինները գաղթում եյին տնովտեղով... Գյուղն իշրաբով անցավ։ Սարսափն ավելի մեծացավ, յերբ ժամարն ու գգիրը միասին ահազանդ տվին։ —թշնամին գալիս ե, թշնամին մոտ ե, ով կարող ե թնդ հեռանա... Բոլոր տներում գաղթի պատրաստություն տեսան, պղնձեղինն ու յերկաթեղենը թաղեցին, հոբթերը խառնեցին կովկրին և բառաչոցով քշեցին գյուղից դուրս, ու վանդակավոր սայլերը լծելով սկսեցին բարձել նրանց ինչ կարող եյին...

Մինասն ու թեսուր նույնակես պատրաստություն տեսան գաղթելու Նրանք ել արին այն բոլորը, ինչ վոր ուրիշներն եյին անում. սայլերին բարձեցին անկողին, թխած հաց, առարակներով ալյուր և շորերի կապոցներ. հարսները վաղեցին հավերը բոնելու, յերեխանները պատերի ծակից հանեցին իրանց վեգերը... Մի խոռոչով ամեն մեկն աշխատում եր փրկել իրան համար թանկապին և կարեոր բաներ...

Բոլոր ժամանակ սակայն, ինչ ել անում եյին Մինասն ու թեսուր, —սայլ եյին բարձում, զործիքներ եյին պահում, թե հորի բերան եյին ծածկում, —իրար գլուխ տեսնելուն պես կամ վորեն հարկավոր բանի համար գեպի պարտեզը թեքվելու գեպքում՝ ցանկապատն իսկույն նրանց միաքն եր ընկնում, և նրանցից յուրաքանչյուրն զգում եր, վոր ինքն անարդա-

ըության զոհ ե, վոր իր պատիվս անարդված ե: Ու ցանկապատի դեպքը, բանտարկությունը դրացիների աչքի առջև,—գաղթի կոկծի հետ՝ կրկնակի ցավով ձնշում եր նրանց սիրտը: Այդ ցավս ավելի զգում եր Մինասը, քանի վոր իր կանչած արդարադատությունը դատաստան տեսավ հակառակ իր ցանկության: Այսու հանդերձ, նրանք շարունակում եյին սայլերը բեռնել:

Յերբ Մինասն ամեն ինչ պատրաստեց՝ սայլը կապեց, կապկապեց թուկերով, նայեց հանկարծ թեսով, կողմը, դարմանքից մնաց կանգնած: Հարեանը, կարծես, բոլորովին չեր շտապում, կինու ու հարսները ձեռք ու վոտք ընկած՝ տնից շարունակ կապցներ եցին դուրս բերում, սայլին բառնում, վլվում եյին յերկյուղից և ուշանալու համար, բայց ինքը թեսուր, կարծես վոչինչ չեր զգում. նա նույնիսկ ինչ-վոր բան եր խոսում հանդարտ ձայնով: Ի՞նչ ե տառմ: Մինասն ականջ դրեց. Թեսոն իր անեցիներին խորհուրդ եր տալիս շատ ել չը շտապել իրար գլխով չը դիպչել, ով գիտե, վոչ մի թշնամի յեր գուցե, չի գալու... Մինասն այս անգամ բոլորովին զարմացավ. Ի՞նչ, ուրեմն թեսոն ուզում ե մնալ... Նրա մտածմունքը խանդարեց կինը, վոր այդ ժամանակ յեղան ականջը բանած մուտեցնում եր լծին:

— Լծիր, լծիր, այ մարդ, շուտ լծիր, խալիսը դնացին, — ասավ նա իրան ուտելով:

Մինասն աչքը հարեանի բակը զցած յեղները լծեց: Թեսոն ելի չի շտապում. ինչպիս յերեսում ե, նա ուզում ե մնալ. բայց յեթե մնալու ցանկություն ունի, ինչու յե սայլը բարձում: Չե, թեսոի մտքում մի բան կա... Մինասը կասկածների մեջ՝ իր սայլը բակից հանեց հանապարհը, ճիպոտը տվեց փոքրիկ աղին՝ քը շելու, իսկ ինքը շտապով վերադարձավ «մի անգամ ել»

նայելու փակ գոներին և տեսնելու, թե դուրսը չի մնացել արդյոք մի այնպիսի բան, վոր յեկող թշնամին կարող ե տանել... Թեսուր դարձյալ կանգնած եր իր սայլի մոտ՝ հանդարտ, անվրդով: Այդ ժարդն ինչպիս յերեսում ե փոշմանել ե և ուզում ե մնալ... Այս, այս, կարծես զնալու ցանկություն չունի—այնպես հանգիստ ե: Նայելով հարեանին և մտածելով նրա դիտավորությունների մասին, Մինասը լուսամուտներին մեխած տախտակներն ավելի ամրացրեց, դրան կողպեքը մի քանի անգամ փորձեց, դրսի կողմից դրանը գեմ արավ մի հաստ քոթուկ, մարագի գուռը շղթայով կապեց, իսկ գոմի գուռը դիտմամբ ավելի բաց արավ, վոր թշնամին միայն դատարկություն տեսնի: Այս բոլորից հետո, նա մի վերջին նայվածք գցեց դեպի պարտեզը. արդյոք վորեմ բան չը կա այնտեղ մոռացված... Ծաղկած կեռասինիները հսկայական ծաղկեփնջերի պես կանգնած եյին կարմրած, բայց դեռ ևս չը բացված, ծառերի արանքում. գեղին գոմշածաղիկներն ասաղերի աման փայլում եյին կանաչների մեջ...

Ցանկապատը նորից ընկապ Մինասի աչքով:  
Այս, այդ տանուտերը... Մինասը նրան կանչեց, վոր արդար դատաստան անի և մեղավորին պատժի, իսկ նա յեկալ ամեն ինչ իրար գլխով տվեց... Նայելով ցանկապատին, Մինասն ուզեց մի անգամ ևս, մի վերջին անգամ ևս մոտից դիտել այս, իմանալու հաստատալիս, թե արդյոք քանի վոտն ե իր կողմը դրված... Տակավին ժամանակ կա և նա կարող է սայլին հասնել... Ու նա քայլերն ուզգեց դեպի ցանկապատը: Դեռ հեռվից աչքի յեր ընկնում նրա նորոգված մասը՝ ուզիդ, խիսդարաված ցախերով ու նրանց արմատին վրա տված թարմ հողով, — ինչպիս նոր կարկատան հին հագուստի վրա:

Մինասը կանգ առավ: Առավոտյան անարդանքը՝  
բանտարկությունը, թարմ վերքի պես կրկին ցավեց-  
րեց նրանու—Ռւըեմն սա պիտի հիմի մնամ թեսուին,  
մտածեց նա ցանկապատին նայելով: Իհարկե, քանի  
վոր ինքը գնում է, իսկ թեսոն ուզում է մնալ. իհար-  
կե, նրան կը մնա...»

Զեղով նորոգված մասը, նա նորից համոզվեց,  
վոր իր կողմից յերկու վոտն անցել է թեսուին: Յեկ  
ինչու, ինչու համար. նա թեսուին պարտական է...  
Ծանր մաքերը մի բոպե պաշարեցին նրան,—իսկ ինչ  
կասեն իր վորդիները, յեթե վաղը, մյուս որը բանա-  
կից վերադառնան... Միթե ամեն մի հոր պարտակա-  
նությունը չե հորական ժառանգությունը անվնաս  
թողնի վարդիներին: Իսկ ինքը, յեղածի վրա մի բան  
չափելացրած, աչքը բաց թույլ ե տալիս, վոր թո-  
ղած հողը խլեն... Յեկ Մինասը դառը խնդաց ինքն իր  
թուլության վրա: Այդ բոպեյին նա նույնիսկ ցան-  
կություն ունեցավ քանդել ցանկապատը, բայց հիշելով  
վոր դատավորների և որևնքի սահմանած դործ ե դա,  
զսպեց իրան և գնաց դեպի բակը:

Կես ճանապարհից սակայն նա նորից վերադար-  
ձավի: Թեսուը գարձյալ հանդարտ կանդնած եր իր բա-  
կում. նշանակում է նա բոլորովին թողել ե ճեռանու-  
լու միտքը... թող մնա, թող վորքան ուզում է մնա,  
բայց Մինասը չի թողնի, վոր նա իր յետեկից ծիծաղի...

Յեկ Մինասը, շրթունքներն ամուր սեղմած, նո-  
րից մոտեցավ ցանկապատին:

Մի բոպե ևս—և նա արգեն քանդում եր այն:

Նա քանդում եր հուզված, գրգռված, ինչպես մի  
մարդ, վոր աշխատում է հանգցնել բոնկված մի հրդեհ:  
Քանդում եր և ինքն իրեն կրկնում միաժամանակ.

— Այ քեզ, այ քեզ...

Յերբ նա հանեց վերջացրեց դեպի իրան դրված  
մասի ճղափայտերն ու ցախերը, սկսեց այնուհետեւ հո-  
ղը վոտքերով լցնել գոյացած փոսի մեջ:

— Այ քեզ, դե հիմի գնա...

Լովեց բարակ հազի ձայն:

Մինասը յետ ցատկեց: Դա թեսուի իծահազն եր:  
Վորպեսովի հարեանն իրեն չը նկատի, նա կուցավ և  
ցանկապատի կողքով կուզեկուզ գնաց դեպի տուն:

Տասը բոպե անց՝ նա արդեն իր սայլի մոտ եր:

Նրա սիրան այժմ հանգիստ եր, վոր թեսոն այ  
ևս իր յետեկից չի ծաղրի իրան:

Կես ժամ ճետո, սակայն, գաղթի ճանապարհը  
րոնեց և թեսոն իր սայլով ու ընտանիքով:

## ՏՆՈՐԴՆԵՔ

Զյուն ե, ցուրտ:

Փոքրիկ զյուղը, ուր խոտի դեղերը տներից ավելի բարձր են, կարծես ցրտահար, կուչ և յեկել սարի տակ և տաքանալու համար շնչում, շնչում և անվերջ միսացող չիբուխների նման՝ ծիրանի ծուխ և բարձրանում բոլոր յերդիկներից... Յեվ տանիքներին նստած, ծառերի ճյուղերին կախված, դեղերի գլխին թափված ու փողոցներում փոված շաքարավազի պես սոսուն ձյունը շողում, շողջողում և արեի տակ, ասես ավակիների անհամար մանր կտորտանքներով ցանված: Բայց չնայած այդ պայծառ արեին, ցուրտ ե. ստունամանիքը կծում և քիթ ու ականչ:

Տեր-Ներսեսը տնորհնեք և ման գալիս... Ծննդյան տուն ե, և նա շտապում և ավետիք տանել իր բոլոր ծիականներին: Պատահող զյուղացիներին արագ փողջունելով՝ նա շտապ անցնում և առաջ փարաջայի փեշերը հավաքած և ճյունը ճոճուացնելով: Նրան հետեւում և փոքրիկ տիրացուն՝ ոռուական թաղիքե վալենկաները վուներին, ծխացող բուրգառը աջ ձեռին և ուռեմ մի մեծ կողով ձախ թեր զցած, վորի մեջ շարժվում են յերկու խոշոր բողկի: Փոքրիկ տիրացուն տեր-հոր վորդին ե, վոր տոների արձակուրդով տուն և յեկել թեմական դպրոցից և այժմ ողնում է հորը: Վորպեսզի վորդին չը մըսի՝ իրիցկինը հագցըրել ե նրան իր հանոցուցյալ զինվոր տագեր վալենկաները, ականջները

փաթաթել և փնջավոր բաշլուղով, իսկ ձեռներն անցրել և տեր-հոր հին դֆտիկի ձեռնոցները: Բայց այնուամենայնիվ ջահել տիրացուի մատները մըսում են, և նա գժվարությամբ և քայլում, վալենկաները ծանր են: Հորը համնել չկարողանալով՝ նա շուտ-շուտ վազում ե, և յերբ սկսում ե իր վազքը՝ բուրգառը շրիկոցով դիպչում և վալենկաներին, իսկ կողովի բողկերը յիտու առաջ գնալով՝ զարնվում են իրար:

Դեռ առավոտ ե, տեր հայրը նոր և սկսել և յերեք տուն և որհնել միայն: Յերեկ ճրագալույցին նա հազիվ կարողացավ ունեորների տներն որհնել իսկ այսոր, վաղը, գուցե և մյուս որը, նա պիտի որհնի մնացած ծխերի տները: Ինչ անի տեր-հայրը, որը կարձացել ե, շուտ չի կարող վերջացնել, առաջվամի տունը հիմա դարձել և յերեք, չորս տուն: Դա, ասենք, վնաս չի, բայց չի վոր պիտք և մտնել ամեն մեկը ջոկ-ջոկ որհնելու: Յեվ տեր-հայրն շտապում ե... Բայց ավելի անհանգիստ և վորդին, վալենկաները մեծ են ու ցավեցնում են սրունքները, և նա չի իմանում, թե յերբ պիտի վերջանա այս տների շարքը, ինչու համար և այս տնորհները այս սառին ու ցրտին, ու հիշում ե գպրոցը, ընկերներին, վորոնք իրենց աներում հիմա տաք վառարանների մոտ տաքանում են յերեի... Սակայն մտածելու ժամանակ չի, տերտերն շտապում ե, պիտք և յետելոց համնել...

Բայց տեր-հայրը նորից ահա կանգ և առնում չարգախավոր մի տան առջն ու վորդուն մի նայվածք ուղղելով, վորդը ինչ ել զլխով անելով, վոր նշանակում և «շնոր արի», — մտնում և ներս:

Գյուղական սովորական խրճիթ ե, վոր միաժամանակ և ննջարան ե, և սեղանատուն, և խոհանոց, մըսու գերանների արանքին յերեւում են յեղան, փոցին,

թի և յերկրագործական ուրիշ իրեր. սյուներից կախված են հորթի թուկեր, մազեր, պատերի վրա տեղաբեր փայլում են պապիրոսի պատկերներ—պարսից շահը յերկար բեղերով, ականջողերով արար, ծխող աղջիկներ, իսկ պատի վրա շինված ամանների դարակից նայում են սրբած ափաններ ու գդալներ... Զգացվում ե աթարի և այրվող փլազի հոտ:

Տերտերին տեսնելուն պես, տանտիրուհին՝ մի դեռատի կին, նրա հետ և նոր շորեր հագած յերկու յերեխա՝ յեխում են բոցավառ ոջախի կողքից և պատկառանքով նայում տեր-հորը:

— Ծնորհավոր Ծնունդ և Մկրտություն,—ասում է քահանան հանդիսավոր:

Տանտիրուհին՝ ձեռները սրտին, անխոս գլուխ և տալիս:

— «Այսոր...առն ե»,—սկսում է տեր-հայրը «Ավետիսը», առանց վորդուն սպասելու, միաժամանակ տան անկյուններին, ոճորքին, պատերին ու սյուններին նայելով—«Ե...Ե...Ծննդյան, մ...վետիս...»: Հարս, Պետին մերին ե գնացել համար...

Տանտիրուհին նորից անխոս գլխով ե անում:

— «Տյառըն մերը... և, ես ցրտովը... «Ե... Հայտնության»,—շարունակում է տեր-հայրը և մեկն դառնում դեպի դուռը քրթմնջալով.—են լակուր չեկավ... մ... վետիս...»:

Սառած դուռը ճռում է հանկարծ և վորդին կողմով, բուրգառով, վալենկաներով մտնում է ներս ու ձայնակցում հորը, հեքից ընդհատվող ձայնով:

— «Այսոր մը... վըն...» Աղջի, Վարդիշաղ, եղ աշխուկը դու ես քաղեր—աչքերով ցույց ե տալիս տեր հայրը սյունից կախված ափելուկի կապոցը, — «ամա... րարության...»:

Վարդիշաղը կրկին գլխով ե անում, թե՛ այն, աշխուկն ինքն ե քաղել:

— «Ա... վետիս»... լավն ե յերկում: «Յե՛... քեցիավ»... Հարս, դրանից մի կապուկ տուր Միխայելին, իրիցկինը հիվանդ ա... «ի մեջ մարդկան...» յերկու որ և ծմբում ե, գիտը չեմ մրսել ա, ի՞նչ ա: «Ա... վետիս»...

Տանտիրուհին գնում է դեպի ավելուկը, իսկ տեր հայրը շարունակում է յերգել: Միխայելը նայում է տանտիրուհու գոտկատեղը հասնող մազերին, հիշում է գաբճալ քաղաքը, այնտեղի կանանց, և յերբ տանտիրուհին ավելուկը գնում է կողովը՝ բողկերի վրա, նա, հայտնի չե ինչու, կարմրում է մինչեւ ականջները և աչքերը գցում գետին:

Յեկ մի առ վայրկյան հայր ու վորդի շարունակում են ձայնակցել իրար, իսկ յերեխաները հաճույքով ու զարմանքով նայում են նրանց շարժվող ծնոտներին:

— «Ա... վետիս»... Աղջի, Վարդիշաղ, ես շերեփները Պետին ա շինել. — հարցնում է տեր-հայրը ժամագիրքը մեկնելով գեղի ամանների դարեկը, ուր կարգով շարված են մի խումբ նոր, սպիտակ շերեփներ ու գդալներ:

Չխոսկան տանտիրուհին այս անգամ յերեխայի միջոցով հայտնում է, վոր շերեփները տեղըն և շինել:

— Եղքան շնորհք ունի համ, — ասում է տեր-հայրը յերգը շարունակելով և շերեփներին նայելով, — «Մեւ... քան, Փաստար»... Լավ բաներ են յերկում... Մինը տուր Միխայելին, հարս, մերը կոտրել ե... «Բաղ... դա... սար»... քանի որ ե մնացել ենք անշերիք... «Ա... վետիս»...

Տանտիրուհին ամենայն հարգանքով շերեփը բերում է և գնում նորից Միխայելի կողովը, և Մի-

խայելը նորից, հայտնի չե ինչնւ, կարմրում ե, բայց իր հուզումը տանտիրուհուն ցույց չտալու համար՝ փչում և բուրվառի կրակը և ապա մռոցով ձայնակցում հորը։ Նա ամաչում է իր մեծ ձեռնոցների ու վալենկաների համար և, նրան թվում ե թե յերկիսաները զարմանում են իր վրա, վոր այդպիսի ձեռնոցներ ու վոտնամաններ և հագել։

Մինչ այդ տեր-հայրն «Ավետիսը» վերջացնելով՝ արագությամբ յերգում ե.

— «Խորհուրդ մեծ և սքանչելի, վոր հայսմ ավուր հայտնեցավ»... Հարս, ասվել չի, հոն չունե՞ս. ասում եմ իրիցկնոջ համար յեփենք... «Հովիվքն յերգեն ընդ հրեշտակս»... Ասում են՝ հոնը լավ ե...

Տանտիրուհին հարգալիր ժպիտով գլուխը շարժում ե մի յերկու անգամ և գնում գեղի պատից կախված տոպրակը, իսկ տեր-հայրը շարունակում է յերգը նույն արագ, աշխույժ յեղանակով.

— «Հովիվք յերգեն ընդ հրեշտակս, տան ավետիս»... Ապրիս, զորմնասո... «աշխարհի»... Մենք ես տարի չը կարացինք հավաքել... «Ծնավ նոր արքա»... Աղջիկ չունենք, իրիցկինն ել մենակ... «Ի Բեթղեհեմ քաղաքի»... Միխայել, ջերդ ածա... «Վորդիք մարդկան որհնեցնք»... կթոցից կթափի... «Զի վասն մեր մարմնացավ»...

Միխայելը կարմրելով՝ վերարկուի գրպանը դեմ և անում տանտիրուհուն, սա չորացած հոնը բռով լցնում է Միխայելի գրպանը և փսխում նրա ականջին.

— Չնեղանասո, մատաղ, ես անգամ ձու չունենք, յերբ Զատկին գաս, են վախտը կը տամ:

Այս անգամ Միխայելն ավելի յե կարմրում և աչքերը զցում առաջը:

Տան որհնությունը վերջացնելով՝ տեր-հայրը Ավետարանը մոտեցնում է տանտիրուհուն. Սա համբուքում է ձեռքի մեկը կրծքին դրած, իսկ մյուսը գոզնոցի տակից հանելով՝ թղթաղբամ է գնում գրքի վրա։ Տեր-հայրն այնուհետև Ավետարանը մոտեցնում է յերեխաներին։ Տերտերի յերեսին նայելով՝ նրանք վախով համբուքում են գիրքը ու իրար նայում գոհությամբ։

— Դե, Միխայել, արի, — ասում է տեր-հայրը դրամը բռան մեջ սեղմելով ու գնում գեղի դուռը։ Բայց դեռ դրանը չհասած՝ կանգնում է յերեսը տանտիրուհու կողմը շրջելով։

— Վարդիշաղ, ասվել չի, իծի ճրագու չնս ունենալ. մեր հոտաղի ձեռները ճաքճքոտել են, ասում եմ... Հը, թե ունես — մի կտոր տուր...»

Վարդիշաղը յերեխայի միջոցով ներողություն է խնդրում, վոր չունի. յեթե վոչ՝ ուրախությամբ։

— Ա.փսնս, — ասում է տեր-հայրը, — իեղճ տղի ձեռներից, գիտես, արյուն և գնում շատ վախտ։ Դե, չկաչկա. գնանք Միխայել, տեսնենք Սաքանանց Սիմոնը կունենամ...

Միխայելը չի ուզում շարժվել. նա կուզեր մի քիչ ել հանգստանալ, բայց տեսնելով հայրը վոտը դուրս է դրել շեմքից և ինքը կարող է դարձյալ յետ ընկնել, նորից շտապով հետեւում է հորը... Յեվ մի բռպե անց հայր ու վորդի մտնում են հարեւան տունը... ապա մյուսը, յերրորդը, չորրորդը... Զի անցնում յերկու ժամ, Միխայելը՝ կողովը լիքը, վալենկաները ձյունոտ, տրնքալով, կռնատակերին յեղան, փոցիս ու ավել գնում է տուն բեռը գատարկելու, ու քիչ հետո կողովը նորից թել գցած վերադառնում է տնողհնեքը շարունակելու։

— Լավ տես հա, Միխայել, — ասում է տեր-հայրը

վորդու առջեկից քայլելով,—քեզ համար եմ աշխատում ե՛, քեզ համար, վոր թեմականումը կարդաս, մարդ դառնաս...

Միխայելը մեղավորի պես լսում և և անտրառունչ հետեւմ հորը՝ իրանը կիսով չափ առաջ թեքած, վալենկաները քաշ տալով։ Նորից հիշում և նա քաղաքը, դպրոցը, ընկերներին, վոր իրենց տներում հիմա տաք վառարաների մոտ տաքանում են յերեխ...

Ու տնորհները շարունակվում և այսպես մինչև յերեկոյան ժամի ժամանակը, յերբ արել բոլորովին ծածկվում և սարի յետեր, ցուրալ սաստկանում և և յերդիկներից բարձրացող ծուխն սկսում և ավելի հորդանալ...

## ԳԱՆՉ

Մեր քեռի Սիմոնը մի շատ չքավոր մարդ եր, այնքան չքավոր, վոր շատ որ հաց չեր ունենում տանը և կինն ստիպված գարի յեր խաշում յերեխաներին կերակրելու, իսկ աղջիկներն իրենց գլուխը ովահելու համար գնում եյին հարեւանների մարգերը քաղհանելու կամ ուներների բարձերի համար փետուր եյին բաշում ձմեռները։

Յես այս բոլորը լավ հիշում եմ, վորովհետեւ այդ ժամանակները տասը տարեկան մի տղա եյի և շուտշուտ գնում եյի նրանց տուն։ Զնայած իր այս չքավորության, քեռի Սիմոնը, սակայն, տարգա մեծ մասը անգործ եր մնում և տոհասարակ այն կարծիքի յեր, վոր Աստված իր ստեղծածին «չի կորցնի»... Եկնելով տատիս յեղբայրը՝ նա գրեթե ամեն որ գալիս եր մեր տուն զրուցելու, մանավանդ ձմբան յերկար յերեկոներին։ Դա մի բարձրահասակ մարդ եր՝ յերկար ձեռներով ու յերկարուն վոտներով և կոկորդից գուրս ցըցված մի վոսկորով, վոր բկում մնացած հազի զլուխ լիներ կարծես։ Իսկ յերեսի ու զլսի ալեխանն մազերն ինձ միշտ հիշեցնում եյին նապաստակի մորթի։ այնպէս զժվար եր ջոկել նրանց սեն ու սպիտակն իրարից։ Յեվ ընդհանրապես՝ մեր քեռի Սիմոնը մի իսկական գյուղացի յեր—նահապետականորեն ավանդապահ ու սըտարաց։ Կարծես հիմա յել տեսնում եմ, թե ինչպես սկ մորթենին զլխին, սկ չիրուխն ատամների ա-

բանքին, բանում և մեր տան դուռը և շեմքում կանգնում:

— Բարի որ ձեզ, — ասում է հանդիսավոր ձայնով՝  
և մի առժամանակ կանգ առնելով՝ հայացքը պտտում  
և տան մեջ:

— Աստծու բարին, քեռի Սիմոն:

— Ի՞նչ ունեք ուտելու:

Մերոնք տալիս են կերակրի անունը.

Թանով ապուր կամ բրնձով շորվա:

— Դե, մի աման բերեք տեսնեմ:

Համեցիր, քեռի Սիմոն:

Յեվ քեռի Սիմոնն, ինչպես իր տանը, նստում է յեղած կերակուրն ուտելու, վրան չկաթեցնելու համար գդալի տակ հացի մի կտոր բռնելով: Ու կշտանալուց հետո սկսում ե պատմել, թե ինչ յերազ և տեսել պիշերը:

Այսպես եր քեռի Սիմոնը. նա գրեթե ամեն գիշեր յերազ եր տեսնում և առավոտը գալիս մեր տանը պատմում: Թեև շատ տարիներ են անցել այդ որեւեց, բայց յերեք չեմ մոռանում քեռի Սիմոնի յերազները... Դրանք լինում եյին առավելապես այն մասին, թե ինչպես Աստված, սրբերը ներկայանում են իրեն՝ քեռի Սիմոնին և ասում, թե անտառի այս-ինչ տեղում թագնված գանձ կա—մի պղինձ վոսկի՝ խուփն յերեսին—ու խորհուրդ են տալիս հանել. «Ե՛ւ Սիմոն, զնա հանիր, — ասում ե Աստված. — զնա, բավական և ինդ ապրե»:

— Եսպես և հրամայում տերը, — վերջացնում եր ամեն անգամ քեռի Սիմոնն աստվածավախ ձայնով, յերեսը խաչակնքելով:

Տասու, վոր մի բարի, միաժամանակ և շատ համառ կին եր, յերեք չեր հավատում յեղոր յերազ-

ներին, կշտամբելով, վոր նա յերեխա ժամանակն ել փողոցներում պտտում եր վոզ գտնելու հույսով, բայց բնավ չեր գտնում: Ու բոլորից վերջը տասա հիշեցնում եր նրան յօթ բուբլի պարագը, վոր տալու հեր իրեն: Իսկ ինչ վերաբերում ե մորս, նա՝ ամենայն բարեպաշտությամբ ունկնդրելով քեռի Սիմոնին՝ յերկյուղով խաչ եր քաշում յերեսը ու հետաքրքր վում թե ինչ տեսակ մարդ ե Աստված, ինչպես են յերեսը սրբերը և ինչ կա առհասարակ նրանց վրան ու հագին:

— Սրբերը, — խաչակնքում եր յերեսը քեռի Սիմոնը, — մեսնեմ նրանց զորքին. նրանք յերեսը են ալ-կարմիր հազար, շատ ժամանակ ձի նստած... Իսկ Աստված—յերեսս վոտի տակը—գալիս և սիպտակ շորերով: Ծեր, ալեռը մարդ ե, — ասում եր նա յերշորեղալից խանդաղատանքով. — բամբակի պիս սիպտակ մազեր ունի: Ենքան բարի յե, ենքան բանցր ձեն ունի, վոր յերբ խոսում ե՝ ուզում ես միշտ լսել: Ասում ե. «Վորզիս, զնա ու հանիր, զնա ու հանիր: Հերիք և խեղճ ապրես»...

— Հեշ բան ել չես հանիր, — նկատում եր տասս ձեռը անհուսալի թափ տալով և յերեսը յեղորից արշ ջելով:

— Կը հանեմ, չերիքնադ, կը հանեմ. կը հանեմ քու ոխալ մանեթը կը տամ. աղջկերանցս ել մարտ կու կը տամ, տուն ել կը շինեմ... — հայտարարում եր քեռի Սիմոնը հանդիսավորապես և մի առ մի որինակը ներ թվում, թե վարտեղ ինչ թագնված գանձեր են հանվել. — Լորուտում, ասում են, մինը մի կծուճ վոսկի յե գտել արտը վարելիս ու հիմի հայտնի հարուստ ե: Գտեկում մի առնչպար մարդ, ասում են, արծաթի ամաններ և գտել հողում, մի ուրիշը՝ զութանի սարք:

իսկ յես ինչու չեմ կարող դանել. ուրիմն սուտ և առաված: Կը հանեմ, Հերիքնազ, կը հանեմ: Կնիկս ել չի հավատում քեզ պես, բայց կը հանեմ, կը տեսնես,—կը կնում եր քեռի Սիմոնը.—միայն թե մի հավատարիմ ոգնական ունենամ...

Ու այս ասելով՝ նայում եր հորս. իսկապես նա ուղում եր, վոր այդ ոգնականը լինի հայրս, վորին և շարունակ առաջարկում եր գնալ զանձը միասին հանելու. Մենակ չեր ուղում, վորովհետեւ, իր ասելով, միայնակ դժվար կը լիներ. ուրիշն ել չեր կամենում ընկերացնել վորովհետեւ մւմ կարելի յե վստահել հիմա... Հայրս թեե, իրրե հին ոյուղացի, մասամբ հավատում եր քեռի Սիմոնի յերազներին, բայց, չգիտեմ ինչու, միշտ խուսափում ե նրա առաջարկեց, ասելով թե՝ դժվար ե դանել տեղը հաստատ հայտնի չե, և այսպես ուրիշ բաներ: Յեկ քեռի Սիմոնը նրա մերժումներից դժո՞ն հետանում եր ամեն անդամ միեւնույն խոսքերը կրկնելով.

— Դե, դու զիտես: Ասում եմ մի բանի տեր և դու զառնաս...

Բայց հորս համառությունը, վերջապես, կոտրվեց մի որ, յերբ քեռի Սիմոնն անչափ ուրախ, ինդությունից ասես խելազար, նետվեց մեր տուն և հայտարարեց, թե գանձի իսկական տեղը դաել է արդեն: Դա անտառի մեջ է, ավերակ յեկեղեցու մոտ, մի մեծ հաճարենու տակ:

— Գիտեք, —սկսեց նա խանդաղատալից յեղանակով, յերկար ձեռները գլխից վեր բռնած. — շանց տվեց Տերն ինքը, Տերն ինքը իրա ձեռով: Յեկավ ու ասում է բարկացած. «Ինչի չես գնում ասած հանում, դու ինձ չես ուղում լսել. յես քու աչքերը կը հանեմ»: — ասում է, Բայց իրա աչքերը բարի, բարի յեն...

«ՏԵՐ, ասում եմ, տեղը չգիտեմ»: «Չգիտես, ասում ե, արի ցույց տամ...»: Ու ձեռս բռնած տարավ կանդնեցրեց մի մեծ հաճարի ծառի տակ ու ասում ե, «Հենց սրա տակ ե վոր կա»... Ու ինքը գնաց. ել չտեսա ուր դնաց...

Մի առժամանակ քեռի Սիմոնը մնաց գոհության լուսաշող ժպիտը դեմքին և ապա դարձավ հորս.

— Հը՛, հիմի ինչ կասես, քվոր տղա...

Հայրս լուս եր:

— Յես, ասենք, մենակ ել կերթամ, բայց լավ կըլի, վոր դու ել ըլես, շարունակեց քեռի Սիմոնը. — յերեխի տեր հս, ասում եմ, թող մի բան ել քեզ ընկնի: Դրա համար, հույս ունեմ Տերն ինձ չի պատժի: շատշատ՝ «իմ քրոջ տղեն ե», կասեմ:

Հայրս ծիծաղեց: Դա նշան եր լավ արամադրության: Յեկ, իսկապես, չգիտեմ, քեռի Սիմոնի հանդիսավոր պատմության ազդեցության տակ, թե մորս հորդորների հետևանքով, նա համաձայնություն տվեց քեռի Սիմոնին ընկերանալու: Վորոշվեց՝ հետևյալ որն իսկ մի զույց աղավնի զոհաբերել մեծ հաճարենու տակ է յերեկոյան, յերը մութը լավ կը մթնի, գնալ հանելու:

\* \*

Ի՞նչ յերջանիկ յերեկո յեր այդ յերեկոն...

Ի՞նչ հույսեր, ի՞նչ յերազներ եյին սավառնում մեր փոքրիկ խրճիթում: Ինչեր չպիտի անենք, յեթե մեր ձեռն ընկնի այդ մի կաթսա վոսկին. ել նոր տուն, ել նոր շորեր... ցնայց կտանք այն ժամանակ բոլոր հարուստներին... Քեռի Սիմոնն ուրախությունից շարունակ կտակում եր տատիս հետ. «Ճակատիդ վոսկի պըտի շարեմ, Հերիքնազ, վոսկի»: իսկ տատս կրկնում

եր միալար, «Քու վոսկին ինձ պետքը չի, իմ ոխտը մանեթը տուր»:

Վերջապես, յերբ մութը լավ մթնեց և վոտքը խաղաղվեց զյուղում, բեռի Սիմոնն ու հայրս՝ բան ու քլունդ վերցրած՝ դուրս յեկան տնից: Թեռի Սիմոնը վոսկու համար տանում եր յուղի մի տիկ, կաթսան ծանը լինելու դեպքում կեսը նրա մեջ լցնելու նպատակով: Մենք արթուն մնացինք սպասելու:

Յերկար, շատ յերկար տեսեց այդ սպասումը: Յեկ վորքան յերկարում եր ժամանակը, այնքան ավելի հույսերով լցվում եր մեր սիրտը:

Ուրեմն մի բան գտել են, վոր ուշանում են...

Յերեի շատ խորն և թաղված...

Անպայման մի բան գտել են...

Զգիտեմ, քանիյերորդ անգամն եյինք կը կնում այս մտքերը, յերբ զուը թակեցին հանկարծ: Հայրս եր... բայց զատարկ ձեռներով: Ինչու, մի՞թե վոչինչ չկար, քեռին ուր և հապա—հարցերի տարափ եր, վոր տեղում եյին հորս գլխին: Իսկ տասու, հորս տեսնելով այդպես, գլուխը շարժեց քմծիծաղով:

— Յես եղակես ել գիտեյի, վոր վոչինչ չի ըլի.— Հայտարարեց նա: — Գիտեյի ելի...

Բայց տասու զուը եր շտապում: Հայրս յեկել եր լինդի: Նրա պատմածից յերեաց, վոր քանդել հասել եյին մի սալաքարի, վորը սակայն չեն կարողանում ըրջել, որա համար ել յեկել եր լինդը տանելու, վոր քարը ըրջեն, և ինձ վերցնելու, վոր պահակի դեր կատարեմ: Ո՛վ գիտի, կարող ե պատահել մարդիկ գան և իրենք զբաղված՝ չնկատեն: Լավ կը լինի, վոր յես ել գնամ:

— Վոր սալաքար կա, ուրեմն պղինձն ել դրա տակ կը լինի, — սսակ մայրս:

Հայրս ել այդպես եր կարծում, և ամբողջ ճանապարհին շշուկով ասում եր ինձ, թե այդ սալի տակ անպատճառ մի բան պիտի լինի... Ժամանակը գիշերվականից անց եր աշնանային խոնավ մութը սարսափ եր բերում իմ մանուկ հոգուն, ճանապարհի շուրջը յերեացող թփերը թվում եյին ինձ դարան մըտած գաղաններ, ծառերը՝ սպառազին ավազակներու իսկ մասրենիները՝ պար լունած սատանաներ: Չնայած այս բոլորին, մի բան այնուամենայնիվ ինձ դյութում, քաշում եր զեսի մութ, խշացող անտառը, ուր, թվում եր թե, քեռի Սիմոնն արգեն հանած պիտի լինի վոսկին... Բայց մենք նրան գտանք տակավին փոսի մեջ, նա սաստիկ հեռում և քրտինքը սրբում եր շուտ-շուտ: Մեզ տեսնելով՝ զուխ բարձրացրեց փոսից:

— Յեկեք, յեկեք, սալը ժամ պցել, — զրեթե բացականչեց նա հրճվանքով:

Փոսը բավական խոր եր, քեռի Սիմոնի գոտկատեղից ել բարձր: Անտառային փիրուն հողը կիսովել եր նրա յերկու կողմը և սկին եր տալիս գորշ ըրջապատի մեջ: Հայրս իսկուցն լինդը ձեռին մտավ փոսը, և այնուհետեւ սկսվեց մի ծանր աշխատանք՝ անքոցով ու մկանների լարումով: Աստծուն ոգնության կանչելով՝ ուսերնին զնում եյին նրանք լինդի տակ և աշխատում սալը ըրջել, յերեմն ականչնին սրելով, ականչ եյին դնում, թե հեռավից, մոտից չի լսվում արդյոք մի վոտնաձայն: Վոչինչ չը կար: Յես ամենայն աշալլջությամբ կատարում եյի իմ պաշտոնը, և վոչինչ չեյի նկատում: Տերեններն եյին միայն թափվում աշնան անտառում, վոր ահի մի գողով բռնված ասես, ինչ-վոր շշնջում եր շարունակ խուլ ու խոր մի ձայնով, վոր ավելի նման եր հառաջանքի: Թվում եր յերեմն, թե մնթիվ մարդիկ՝ աչքերնին չորս արած՝ գաղտազողի

60

Նայում են մեզ ծառերի յետեից, վոր վոսկին դուրս գալուն պես հարձակվեն հափշտակելու:

Յերկար, շատ յերկար տեսեց աշխատանքը փոսում: Առլը չեր շրջվում: Նա շարժվում եր, բայց չեր շրջվում: Բաղմաթիվ փորձերից հետո, վերջապես, հաջողվեց սալը շուռ տալ: Բայց այս, ինչ վոր սպասում ելինք... չկար, ավագ: Վոսկու փոխարեն դուրս յեկան ինչ վոր վոսկորներ... Այդ տեսնելով հայրս վերդովված դուրս յեկավ փոսից, իսկ քեռի Սիմոնը մի առժամանակ լուռ, արձանացած մնաց այնտեղ:

— Ե՛, ինչպես յերեսում ե, սխալվել ենք,—ասավ նա քիչ հետո.—Հաճարի են կողքը քանդելու տեղակ՝ ես կողքն ենք քանդել, հիմի յեմ հիշում, վոր են կողքը պըտի քանդեյինք...

Հայրս ավելի վերդովված վերցրեց բահն ու լինդը և կանչեց ինձ:

— Ո՞ւր, — զարմացած հարցրեց քեռի Սիմոնը:

— Տուն, — յեղավ հորս սպատախանը:

— Կաց հլա, այ մարդ, կաց մի են կողքը քանդենք...

— Դու քանդի քեզ ըլի, — ասավ հայրս վերջին անգամ, և մենք ձանապահն ընկանք:

Մեր յետեից քեռի Սիմոնը ցածր ձայնով միքանի անգամ կանչեց, ինդրեց դանալ, բայց հայրս մնաց անդրդելի. Նա յետ անգամ չնայեց:

Տուն հասանք յերկրորդ աքլորականչին՝ սառտիկ հոգնած և հիսամթափված...

\* \*

Հետեյալ որն առավոտյան հենց նոր նստել ելինք թեյի, քեռի Սիմոնն յեկավ՝ դարձյալ ուրախ տրամադրության մեջ:

— Զեյի ասում, — սկսեց նա շեմքից, — եղակս ել կա, մենք սխալվել ենք, քվոր տղա: Գիշերն աչքս կ'զցրի թե չե՞ նորից յերեաց նա (քեռի Սիմոնը խաչկնքեց յերեսը): Ասում ե՞ «Ինչու ծառի աջ կողքը քանդեցիր, զնա, ասում ե, ձախ կողքը բանդիր»:

— Դե զնա քանդիր ելի, — ասավ հայրս:

— Խի. բա դու գալիս չես:

— Զե,

— Խի վոր:

— Ենպես...

Յերկու որից հետո սակայն նա դարձյալ յեկավ և հայտնեց, թե ելի շնչվել ե, պետք եր քանդել վոչ թե մեծ հաճարենու տակ, այլ նրա կողքի հաճարենու, ուր հենց նշաններ ել նկատվում են. հողը նստած ե մի քիչ: Այնտեղ անպատճառ մի բան կա: Յեվ, վերջաշուսակը վոր չլինի. չե վոր տռաջ, մեղանից շատ առաջ, այդտեղ գյուղ ե յեղել, յեկեղեցի կանք, և շատ բնական ե, վոր մարդիկ թուրքերի յերեկա: Ետք փախչելու ժամանակ իրենց գանձերը թաղցրած լինեն այդտեղ: Ի զուր չե, վերջապես, վոր յերազում միշտ ցույց են տալիս իրեն:

Հայրս սովորաբար լուռմ եր. տատս, սակայն, առաջվագ պես շարունակում եր իր կասկածանքն ու կշտամբանքը: Բայց քեռի Սիմոնն ամեն անգամ տուում եր հոգաբար արժանապատվությամբ.

— Կը տեսնես հիմի, չերիքնազ, կը գտնեմ, թե չե: Կը տեսնեք...

Անցավ մի ամիս, քեռի Սիմոնը բան չեր գտնում և կինը շարունակ գալիս եր տատիս գանգատ, վոր մարդը գիշերները տանը չի մնում ու խնդրում եր նրան յեղբորը բան հասկացնել: Իսկ մինչ այդ ձմեռը յեկավ, ձյունը ծածկեց գյուղ ու անտառ, և գետինը

առաջիկ պես: Յերբեմն այնպես ցրտել եյին լինում, վոր ծաերը յերամով մտնում եյին գոմերը և գայլերը գիշերները վոռնում եյին գյուղի մոտ: Քեռի Սիմոնն այժմ ման եր գալիս իր հին, մաշված քուրքն ուսիրին: յերեկոները նա անց եր կացնում ողաներում կամ գալիս եր մեր տուն զբուցելու: Յեկ ամեն անդամ, յերը խոռք եր լինում գանձի մասին, նա տիրությամբ նայում եր վառարանին և ասում:

— Սպասեր, սպասեր մի գարունը բացվի... Կը տհմնեք են ժամանակ... Մի բան վոր տեղը գիտեմ...

Յեկ, իսկապես, մարտին, յերը ձյուները կամաց լամաց հալ ընկան և գետինը փափկեց, քեռի Սիմոնն ավելի մեծ յեռանդով վերսկսեց իր աշխատանքները: Այժմ նա տսում եր վոգեռված: «Ընդ՛, յա եսոր, յա եգուց»... Բայց որերն անցնում եյին որերի յետեից և վոչինչ չեր լսվում, թէ քեռի Սիմոնը մի բան և գտել: ու մի որ ել հանկարծ լսեցինք, վար նա հիվանդացել և—աստիկ հազում և ու տնքում: Կնոջ ասելով՝ մի գիշեր անտառից յեկել եր ու անկողին մտել: Տատ իսկույն գնաց յեղբորը տես:

Զանցավ սակայն մի յերկու որ, քեռի Սիմոնը վախճանվեց:

Մեռնելուց մի ժամ առաջ նա հայտնել եր կնոջը գանձի տեղը և հանձնարարել՝ գտնել մի հավատարիմ մաքո՞ հողի տակից այդ պահուստը հանելու:

— Խոստացիլ վոր կը կատարես,—ասել եր քեռի Սիմոնը:

Կինը խոստացել եր և նա հանգիստ փակել եր աչքերը:

Այժմ հայտնի չե ինձ՝ կինը կատարել և նրա կամքը թե՞ վոչ, բայց յես այսքանը միայն կարող եմ ասել, վոր քեռի Սիմոնի ընտանիքը մինչեւ այսոր ել

## ՃԱՇ

Ժամը չորսն ե:

Սոլուկ թաղը ճաշում ե:

Որպա այս պահին թիֆլիսի այդ հարուստ թաղի արտաքին տեսքը խաղաղ է, ինչպես գյուղը հնձի ժամանակ: Փողոցների և գրասենյակների ծանրախոհ կյանքն ու շարժումն անցել և սեղանատները, ուր՝ մարդկանց ձայներից բարձր՝ հնչում և ափսեների, պատառաքաղի և դանակների զնզոց: Սպասավորները մեկը մյուսի յետեկից յել ու մուտ են անում խոհանոցից սեղանատուն, սեղանատնից խոհանոց: Տիրում ե մաքրություն, լիություն և ձեականություն: Մարդիկ ուսում են ծանր և խոսում անվրդով:

Տոհմական քաղաքացի այրիացած լեռն Ազիզյանը նույնպես ճաշում է իր սեփական տան յերկրորդ հարկում: Ընդարձակ ճաշասենյակի յերկար սեղանի մոտ, վորի վրա կարող ե ճաշել քսանից ավելի մարդ, նաև նստած ե մենակ՝ կուրծքը ծածկած սպիտակ անձնուցիկով, վորի մի տուտը խրել և ոձիքի մեջ: Նրա յեցիկով, վորի մի տուտը խրել և ոձիքի մեջ: Նրա յետի, աջ վոտքի վրա հենված, կանգնած ե նրա սպասավորը, մոտ քառասուն տարեկան ճերմակ գոզնոցով մի գյուղացի, վոր միաժամանակ կատարում է և խոհարարի պաշտոն և գոնսապանի գործ:

Պարոն լեռնը, դանակն ու պատառաքաղը ձեռքին, գանդաղ ճաշում է և միենույն ժամանակ խոսում սպասավորի հետ: Զավակներ չունենալով և ծերության

մոտեցող հասակում կնոջից զրկվելով, ահա յերկու տարի յե նա միշտ մենակ և ճաշում: Բամբասանքից և կողոպուտից աղատ մնալու համար, նա յերբեք ճաշի չի հրավիրում ազգականների ու ծանոթների, և ամեն որ իր ճաշը սկսում ու վերջացնում և սպասավորի հետ խոսելով:

— Գրիգոր, վրատեղից ևս առնում այս միսը,— գառնում ե հանկարծ նա սպասավորին:

— Սալգաթմակի բաղարից,— պատասխանում ե գյուղացին թեքվելով և այնպիսի ձեռվ, կարծես տերը ծանր և լսում:

— Ունի՞ց:

— Դարչոցից:

— Ո՞վ ե այդ Դարչո՞ն:

— Միս ծախող ե:

— Հըմ, — զլուխը կախելով շարունակում ե ուտել պ. լեռնը. — Վաչինչ, միսը լավ միս ե, բայց մի քիչ յուղու ե: Յուղու միս ես առել...

Սպասավորը զարմացած ուղղվում է կանզնած տեղը և նորից թեքվում դեպի տերը:

— Յերեկ դուք ասիք, վոր ժարկոյի համար յուղու միս առնեմ, — ասում ե նա:

— Այս, ասացի, բայց վոչ այսքան յուղու: Յուղու միսն այնքան ել լավ չե ժարկոյի համար: Այս տեսակ միսը կարելի յե գործածել չխրթմայի կամ սոյուսի մեջ, բայց վոչ ժարկոյի, հասկանում ես, վոչ ժարկոյի...

Ես նորից շարունակում ե ուտել:

— Մյուս անգամ ել այսպիսի միս չառնես, — ասում ե նա քիչ հետո. — Հանգուցյան ամեննեին չեր սիրում այսպիսի միս... Զես հիշում: Ասում եր, վոր այս տեսակ միսը՝ միաս ե: Յեվ շատ ճիշտ եք ասում հան-

գուցյալը. յիրը ժարկոյի միսը յուղոտ և լինում, մի տեսակ ծանր և մարսվում... Հասկանում ես...

Սպասավորն անշարժ կանգնած նայում է տիրոջ ալեխառն մազերով զլխին, շարժվող ծնոտներին և մըտածում, վոր հանգուցյալ տիրուհին, խսկաղես, միսքիչ եր սիրում:

— Ճետո, Գրիգոր, գիտես ի՞նչ,—ձեռքը բարձրացնում է պարոն Լեռնը.—դու միսը շատ ես յեփում, այսպես վոր՝ գետնախճառորի պես փշրվում ե... այն ինչ այգակա չպետք ե անել, պետք ե յեփել այսպես, վոր մասի համը վրեն մուտ... Մի անգամ կլուրում ժարկոյ յեմ կերել, շատ լավ եր. թերը, բանը այսպես տեղին, համով... հետո ել մի յերկու կտոր սերկեիլ...

Պարոն Լեռնը մի պատառ միս կտրելով սկսում է հանդարտ ծամել:

— Մեր կլուրի խոհարարն առհասարակ շատ ընտիր կերակուրներ ե յեփում, շարունակում ե նա.— Ե դա հասկանալի յե. մարդը ոռւս ե, աշխարհ տեսած, ոռ մեր հայերի պես չի, վոր զոմից զուրա են զալիս խոհարարություն անում... Դու չնեղանաս, Գրիգոր, յես քեզ չեմ ասում... Յեթե ուզում ես, յես նրան կտսեմ, վոր մի քանի բան սովորեցնի քեզ:

Գրիգորը մի վոտքից հենվում է մյուս վոտքի վրա և կոկորդը մաքրում:

— Դուք են որն ել խոստացաք, վոր կասեք, բայց մոռանում եք,—նկատում ե նա ժամանով:

— Կասեմ, Գրիգոր, կասեմ, հանգստացնում է պարոն Լեռնը սպասավորին.—կասեմ, հենց վաղը կտսեմ. բայց դու յել յուղոտ միս չառնես...

Գյուղացին նորից նայում է տիրոջ զլխին, շարժվող ծնոտներին և մտածում, վոր տերը միշտ խոստանում է «վաղը», բայց միշտ ել մոռանում է. Ետ նո-

րից կոկորդը մաքրելով ուզում է մի բան ասել ըայց լուսմ ե՝ տիրոջ ձեռքի շարժումը տեսնելով:

— Գրիգոր, մյուս անգամ այդ Գարշոյին ասու, վոր ժարկոյի համար լավ միս տա, առանց վոսկորի... իմ կողմից խնդրի, թող սուկի տա...

— Սուկին ժարկոյ չի լիի, պարոն,—ասում է Գրիգորն ամաչելով, վոր նկատաղություն է անում տիրոջը:

— Ինչու չի լինի, —զարմանում է պարոն Լեռնը՝ սպասավորի խոսքի վրա.—ընդհակառակը... կլուրում միշտ յեփում են, շատ լավն ե լինում. մի քանի անգամ կերել եմ... Շատ լավն ե լինում...

Սյոս ասելով, նա ձեռքով նշան է անում, վոր սպասավորը վերցնի ամանը:

— Սա վեցցրու, կատլետը բեր տեսնենք ինչպես ե, —ասում ե նա, մեջքը հենելով աթոռի թիկունքին, և հառաչում:—Յեթե կատլետն ել սրա պես լինի, Գրիգոր, նշանակում ե՝ այսորվա ճաշդ լավ չ...

Գրիգորը վերցնում է տիրոջ թերմացքը և գնում խոհանոց: Մի քանի ըսպեցից նա վերադառնում է և կատլետը վնում տիրոջ առաջ ու յերկյուղով մտածում, թե այս նոր բաժինը ինչպես դուր կը գա:

Պարոն Լեռնը մի քանի բոպե լուս ճաշում է: Սպասավորը, նրա յետեր կանգնած, զարձյալ նայում է նրա թիկունքին, զլխին և ծնոտներին, վորոնց շարժումից շարժվում են և նրա ականջները:

— Գրիգոր:

— Հրամմե:

— Կատլետն այս ի՞նչ յուղով յես պատրաստում, հարցնում ե պարոն Լեռնը վշտալի դեմքով:

— Կովի յուղով...

— Կովի... բայց ինչու այսպիսի համ է զալիս:

Կարծես յերեք որվա կերակուր լինի, այնպես ծանր է...  
Սպասավորը գունատված նայում է տիրոջը և  
լսում: Նա չի ուզում պատասխանել, վորովհետեւ նրան  
թվում է, վոր յեթե պատասխանի, տերը նոր հարցեր  
լսում է, վոր յեթե պատասխանի, տերը նոր հարցեր  
լսում է: Իսկ պարոն Լեռնը շա-  
րունակում է մի առ ժամանակ հանդարտ ուսել:

— Գիտես ինչ, Գրիգոր, — ասում է նա քիչ հետո  
գլուխը պնակից բարձրացնելով: — այսորվա կատլեաը  
այնքան ել լավը չե, համ յուղն է կծված, համ ել աղը  
շատ ես արել...

Գրիգորն զգուշությամբ հազում է:

— Եսո՞յ յերեկվանից քիչ եմ աղ զցել, — խոսում է  
նա ամբողջ իրանով առաջ թերվելով: — յերեկ վոր ա-  
սիք՝ աղի յի, դրա համար եսոր աղը շատ քիչ եմ  
զցել:

— Ընդհակառակը, — ասում է պարոն Լեռնը, —  
քեզ միայն թվացել ե. թե քիչ ես զցել. յեթե քիչ  
զցած լինելիք, այսուհետեւ լինի: — Նա սրտի խորքից  
հառաջում է: — Դ՛, հանգուցյալի մահից հետո, դու կերա-  
կուրներն այնքան ել լավ չես պատրաստում, Գրիգոր:  
Յերը հանգուցյալը կենդանի յեր, հակում եր, խոր-  
հուրդներ եր տալիս, և դրա համար կերակուրները  
այնպես լավ եյին զուրս գալիս իսկ հիմա... (նա նո-  
րից հառաջում է): Յես ասել եմ, ելի կասեմ, Գրիգոր,  
վոր հայ խոհարարը կարգին կերակուր յեփել չը զիտի...  
Հայր, իտլապես, պետք ե միա ուանչպար, և վոչ թե  
խոհարար լինի... Հայը կարող ե, ճիշդ ե, առեսուր  
անել, միրգ ծախել, բայց խոհարարությունը նրա  
րանը չի. հայը քուփթից բացի ուրիշ բան չի կարո-  
ղաբում յեփել, իսկ խոհարարը, Գրիգոր, ամեն բան  
պետք ե իմանա, ամեն բան... հասկանո՞ւմ ես... խո-  
հարարությունն ել արհեստ ե, ինչպես դերձակությու-

նը, ինչպես վոսկերչությունը... խոհարարը պետք ե  
հասկացող լինի... հասկանո՞ւմ ես...

Գրիգորի շրթունքները զողում են, հայտնի չեն  
յերկյուղից թե հուզմունքից:

— Յեթե չեք հավանում, սպառն, — ասում է նա  
կերկերուն ձայնով: — Ես զուրս կերթամ, ուրիշին  
բանեցեք... Հինգ տարի Միքոյեի տաճն եմ յեղել,  
միշտ զոհ են մնացել, հիմի...

— Յես նո քեզ չեմ ասում, հիմար, — խնդում է  
սպառն Լեռնը: — Յես ընդհանրապես եմ ասում, վոր  
հայը խոհարարություն չը գիտի. նա կարող է միշտն  
լավ բանվոր լինել յերկաթուղու վրա կամ վոտնաման  
սրբող փողոցներում, իսկ խոհարար կամ սպասավոր՝  
յերբեք... (նա մի փոքր լուս է): Այ, զու յել, ճիշդ  
ե, խոհարարություն և սպասավորություն ես անում,  
բայց ձեր չը զիտես, Գրիգոր... Զը զիտես, որինակ,  
թե վորքան աղ պիտի զցել մի ֆունտ մախն, չը զի-  
տես, թե ինչ տեսակ յուղն է լավը. իսկ դա հասարակ  
բան չի... Յեթե մի խորհուրդ տվող չը լինի քեզ, դու  
միշտ կը սիալվես, Գրիգոր... Այ, ինչ եմ ասել, ու-  
րիշ բան են ուսւան ու վրացին: Նրանք ստեղծված են  
հենց խոհարարության համար, մաքնուր, ժիր, հասկա-  
ցնող...

Գրիգորի շրթունքները նորից զողում են:

— Յեթե չեք հավանում, վրացի բանեցեք, — ա-  
սում է նա այս անդամ հուզված, զողացող ձայնով, —  
յես կերթամ:

Ու այս ասելով, նա ուղղվում է գեղի զուրս:

— Սպասիր, Գրիգոր, սպասիր, — կանչում է սպա-  
ռն Լեռնը:

Բայց Գրիգորը չի կանգնում:

— Դուք ամեն որ ինձ չեք հավանում, — շարու-

նակում և նա նեղացած դեպի զուռը դնալով,—յես կարող եմ գնալ, ուզում եք ուսւ բանեցեք, ուզում եք վրացի, միենույնն ե... Յես կերթամ...

Սակայն չի գնում: Վերջին խոսքերն արտասահնելով կանգնում ե դրան մոտ՝ անբավական և դժգոհ դիրքով:

— Ի՞նչ հիմարություն, —յետ և պառնում պարոն կենը, —ուր ես ուզում գնալ:

— Կերթամ ուրիշ տեղ:

— Ի՞նչ հիմարություն... Քեզ ի՞նչ են անում, այ աղա, վոր զու այդպիս նեղանում ես:

Գրիգորը հուզումից չի խոսում:

Պարոն կենը շարունակում ե.

— Վոր ուզում յես գնալ, ապա այս բաներն ով պետք ե հավաքի, —ցույց ե տալիս սեղանի յերեսի ամանակը, —յես հո չեմ կարող անել... Կամ յեթե ուզում ես գնալ, փողոյ ինչ պիտի անես, յես հո քո փողապահը չեմ...

Այս խոսքերի վրա Գրիգորն առաջ ե գալիս: Նրա գիմքն արտահայտում ե վախ ու անհանգստություն: Նա մտածում է, վոր ամիսներով հավաքած գումարը հարյուր հիսուն մանեթ, վոր պետք ե կնոջն ուղարկի պարտք առլու և մի կով առնելու համար, տիրոջ մոտ և և, առանց այդ գումարը ստանալու ինչպիս կարող ե գնալ: Նա առաջ գալով կանգնում ե սեղանի քով:

— Տվեք իմ փողը, պարոն, —խնդրում ե նա, — ավելք, ավելի լավ ե յես գնամ...

— Դե լավ, լավ, —ասում ե պարոն կենը, —հիմարություններ մի անի: Արիսեղանը հավաքիր, հետո...

Գրիգորն անխոս հավաքում ե սեղանի յերեսը, ամանները տանում ե խոհանոց, մրգերը դնում ե պահարանը, սփոսոցը թափ ե տալի պատշգամում և ծալում,

հետո գնում սպասում ե տիրոջ առաջ, վոր դրամն ստանա:

— Ի՞նչ ես ուզում, Գրիգոր, —հարցնում ե պարոն կենը, ընդհատելով իր մտածմունքերը հանգույցալ կնոջ մասին:

— Փողը...

— Փողը... Փող հիմի վճրառեղից... սպասիր, յերբ կը լինի են ժամանակ կտտմ... Ի՞նչ, ուզում ես գնալ... Հիմար մի լինի, այ տղա, —խնդրում ե պարոն կենը, —ուր ես գնում. քո տեղը մարդ կա, վոր զու գնում ես... Հիմար մի լինի: Մի թեթև խոսքից ինչու յես նեղանում... Արի այստեղ արի ավելի լավ ե քեզ առեմ, թե ինչ պետք ե առնես եղուցվա ճաշի համար, արի:

Ցեվ պարոն կենը բազմոցի վրա պառկելով թերգորում ե Գրիգորին, թե, ինչ պետք ե գնել վաղվաճաշի համար:

Կառնես իշխան, —առում ե նա ցուցամատը շարժելով, —յեփելու ժամանակ վրան մի քանի ձու կը կոտրես. բայց ձուն շատ չեփես: Շատ յեփելով համը կը կորչի... Իշխանից նետո կառնես գառան միս՝ ոմբետի համար, և տոլմացու: Տոլմեն կեփես տերելով, բայց բրինձ քիչ կը քցիս... Հետո կառնես մի յերկու ձուն՝ իրիկվա համար: Կառնես կանաչի՝ թարխուն, բողկը... Յեթե հնդկանավ պատահի՝ առ, մյուս որը պետք կը գա. կարելի յե տապակել...

Լուռ լսում ե Գրիգորը և ապա, զլուխը շարժելով, զուրս գալիս տիրոջ սեղյակից:

Մի քանի բոպե անց՝ պարոն կենը սկսում է անջիւ իսկ Գրիգորը զնում ե խոհանոց և մտածում տիրոջ մոտ մնացած հարյուր հիսուն մանեթի մասին և այն մասին՝ թե ինչպիս անի վոր վաղվա ճաշը դուր գա տիրոջ:

## ԳԱՂՏՆԻՔ

Կիակնամուտ և Անդրբ վերջալույս ժամի զանգերը հանդարս, հանդիսավոր ընդհատութիւնը աշխատում են վաղվան տոնը, և նրանց զողանչներն ասես խաղաղություն են ծավալում ավանի զլիխն, դաշտերի վրա և գնում խառնվում գետի ջրերին: Դին-գոն, դին-գոն... Կղմինդրե տանիքները փայլում են մայր մանող արևի փոշում և անշարժ, վոսկեզոծ բարդիների հետ ունկնդրում կարծես զանգերի ձայնին:

Լուս յերեկո յեւ:

Այրի նազնն առատ խունկ ե ծխել, այնքան առատ, վոր խրճիթից յեկեղեցու հոտ ե գալիս: Բոլոր որրերի անունը տալով աղպիւռմ ե և շուտ-շուտ յերեսը խաչակնքում: Յերբեմն ծունկի յե գալիս կավե հատակին, յերբեմն կանգնում անշարժ և միհնույն բանը կրնկում մի քանի անգամ. «Տեր, քու դուռը բանաս. քու ստեղծածն ենք—մեզ ջրի չտաս»... Թեև ջահել կին և նազնն, հաղիս յերեսուն տարեկան, բայց աղոթում և այնպիսի ջերմեանդությամբ, ինչուս վշտահար մի պառավ: Նա այնքան խորասուզված ե աղոթքի մեջ, վոր չի նկատում ինչ կա շուրջը. Նրա ականջներում զողանջում են միայն ժամի զանգերը: Զի նկատում, վոր շեմքում կանգնած ե ծեր ներսիս, վոր իր սրտես, հարաշարժ աչքերով նայում ե ներս և հանկարծ շտապով, թափով յետ կանգնում, նորից կուտամ ե, նորից նայում ե ելի յետ կանգնում, ու ամեն կերպ աշխա-

տում և աննկատելի մնալ՝ հարհանուհու աղոթքը չխանգարելու համար: Ծեր մարդ ե դա՝ միապաղաղ մերժակ մազերով, վորոնք գրիմի տպավորություն են անում—այնպիս չի ներդաշնակում կնճռապատ ու դեմքը այդ ձերմակ, ասես սապոնով քսված մազերին: Յերկար գործածությունից սապոնվ լվացած ե յիրեռում և նրա ձեռի փայտը, վորին հենված գիրքովը ծեր ներսիս հիշեցնում և նկարների մեջ պատահող անտուն մուրաց կառակը... Բայց, ո, ծեր ներսիսը մուրացկան չե: Բնդականի: Բայց, ո, ծեր ներսիսը մուրացկան չե: Բնդականիլը... Ավանում նա ուներ զյուղացի յե. և ինչեր ասես չունի—մեծ տուն մի քանի սենյակով, պատշառու այգի, կովկը, յեղներ, մեղուներ, և ել ինչ պատշառու այգի, կովկը, յեղներ, մեղուներ, և ել ինչ ասես: Ամեն առավոտ, յեր նա անից դուրս և գալիս, զույգ չները՝ զույգ թիկնապահների պիս, ուղեկցում զույգ չները՝ զույգ թիկնապահների պիս, մինչև փեթականոց, ին նրան մառանը, զումը, այգին, մինչև փեթականոց, ուր մեղուները պար են բոնում նրա զլիսի վերև, իսկ նա ուշադիր նայում և բոլոր արկանոցները... Այս, ծեր ներսիս աղքատ չե, բայց մենակ ե. իր ամրող տնտեսությունը վարում ե պատավ մորաքրոջ հետ, վոր սպառուուն պաշտոն և կատարում միաժամանակ: Աղջկներին վաղուց մարդու տված լինելով և կնոջից զրկված՝ ծեր ներսիսն ահա տասը տարի յե մենակ ե, ուստի յեկել ե, բայց տեսնելով հարհանուհին աղոթում ե, յեկել ե, զույգ տեսնելով հարհանուհին աղոթում ե, միացել ե շեմքում կանգնած:

Բայց ահա նազնն աղոթքն ավարտում է:  
— Ողորմի Աստօն, Բաղդասարի աղջկե, — ասում  
է ծերունին կիսարաց զոնից զուլսը ներս կոխելով:  
Այրին դժգոհ, արևի շողերից աչքերը բաց-խուփ  
անելով նայում ե զեպի շեմքը և ինչ-վոր քրթմնջում,  
վոր ավելի նման և արտունջի:

— Ժամից եմ գալի, Բաղդասարի աղջիկ, — շարունակում և ծերունին շեմափայտին նստելով. — Անցնում ելի, ասի՞ տեսնեմ վնաց և Բաղդասարի աղջիկը...

Ծերունին լուռմ և շուրջը նայում սուր աչքերով:

— Եսոր լավ ժամ կար, — ավելացնում և նա. — Ծերտերն Ավետարան կարդաց... Համա քեզ ասեմ, Բաղդասարի աղջիկ, տեր-Ռուեփի կարդունքն ինձ սկի դուր չի գալի: Սկի՞... Հենց վոազ-վոազ կարդում և, վոնց վոր յետերց շուն ընկած: Սկի դուր չի գալի...

Ու քիթը վեր քաշելով՝ ձեռները շարժում և հովհարի պիս, ցայց տալու, թե վորքան իրեն դուր չի գալիս տեր-Ռուեփի արագ ընթերցումը:

— Իսկ դու, Բաղդասարի աղջիկ, սկի ժամ չես գալի, — զիմում և հանկարծ այրուն, վոր այդ ժամանակ կամացուկ նստում և թախտի ծայրին. — Յես ամեն որ գնում եմ, քեզ սկի չեմ տեսնում: Ուրիշ կնամսիք շատ են գալի, իսկ դու — սկի...

— Յես ժամանակ չունեմ, ասում և այրին անտարբեր:

— Ժամանակ, — ծոր և տալիս ծերունին գլուխը ցավակցարար շարժելով: Իհարկե, յեթե պարապ ըլես՝ կդաս, իհարկե... (Թիթի հառաջում և) Ե՞ն, Բաղդասարի աղջիկ, զժար և, զժար: Մենակ վոչ կմիկն առանց մարդու, վոչ մարդն առանց կնկա... — Նա նորից հառաջում և ամբողջ կրծքով և հայում այրուն. — Որինակի համար, յեթե քու զլիին մարդ ըլեր, իհարկե, ժամ և կը գայիր, ուխտ ել: Լավ կուտեյիր, լավ կիմեյիր. թե չե՞ս սրանքանը ինչ պըստի անես, — ասում և ծերունին և շուտ-շուտ իր սուր, շարժուն աչքերով դիտում հարեանուհուն, տեսնելու համար կարծես՝ թե ինչ տպավորություն են անում իր խոսքերը:

Բայց այրին լուռմ և մտացրիվ և, թվում և թե, ձանձրանում և:

— Եղակն, գլուխն որորում և ծերունին. — մենակ ապրելը շատ գժար և, շատ... Մարդը՝ ուրիշ բան և... Տղամարդը թեթեացնում և կնկա գործը...

Նա լուռմ և կրկին և ձեռնափայտով խազեր քաշում կավե հատակին: Նազոյին թվում և, վոր նա անհանգիստ և, տարված և ինչ-վոր մաքերով և անսովոր, շատ անսովոր տեսի թեև խօսում և սովորական բանիրից, բայց հուզված և յերեսում:

Բաղդասարի աղջիկ, — բարձրացնում և նա գլուխը հանկարծ, կարծես կարեոր մի բան հայտնելու, և գարձյալ լուռմ և:

Այրին զժգոհ համբերանքով սպասում և նրա խոսքի շարունակության, բայց տեսնելով ուշանում և, հարցնում և. — Ի՞նչ եւ:

Ծերունու զեմքն ավելի մեղմանում և. Խոր կը նձինները փոքր ինչ յետ են գնում:

— Բաղդասարի աղջիկ, մի բան ունեմ ասելու, — սկսում և և նորից լուռմ:

— Ի՞նչ, — կրկնում և նազոն:

Ծեր Ներսեսն իսկույն չի պատասխանում. Նայում և գեալի բակը, նայում և ճքճքացող բարդիների այն կողմը և ասում:

— Գիտես, Բաղդասարի աղջիկ, լավ չե՞ր լինի, վոր դու եղ՝ սրանքանը զբանը լվացք անելը թողնեցիր:

— Բա ինչո՞վ ապրեմ, — ասում և այրին զժգոհ ու հեղնուտ. — Ի՞նչ անեմ...

— Ի՞նչ անեմ, — մտածմունքի մեջ յերկարացնում և ծերունին և գարձյալ լուռմ. — Ասում եմ ջահնել ես, — խոսում և կրկին հատակը փայտով խազելով. — Մենակ ել լավ չի..., — Ու մեկին համարձակություն առնելով՝ ավելացնում և. — Բա քու մտքովդ սկի բան չի անցնում, Բաղդասարի աղջիկ: Սկի չե՞ս մտածում մարդու գնալու մասին:

Լվացարաբուհին դեմքը ծամածում և անտարբեր:  
— Ե՞ս, ում՝ զարդն ե կտրել ինձ առնի...

— Եղանակ մի ասի, եղանակ մի ասի,—նկատում է  
ծեր Ներսեսը հայրական յեղանակով,—վոր քու մըտ-  
քումն ըլի—հեշտ ե: (Փոքր լոելով) լավ չի, վոր քեզ  
ողիս կնիկարմատը խալիսի զոներին քաշ գա: Հասկա-  
նում ես: Մենակ—լավ չի... ի՞նչ ե մենակ մարդը—  
հեչ: Յես քեզ որինակ. ինչի՞ յեմ նման—ապավիթ: Զե,  
քանի ջահել ես—մտածիր, հետո կը փոշմանես,—ասում  
ե ցուցամատը նշանակալից շարժելով:—Մարդը քեզ  
լավ կը պահի, հասկանում ես: Հասկով ել ընի  
վոչի՞նչ...

Այրին լսում ե բոլոր ժամանակ անտարբեր, իսկ  
ծերունին ձայնն իջեցնելով, բարձրացնելով՝ խոսում է  
ելի այն մասին, վոր մենակ ապրելը—զժվար ե, որի-  
նակ ե բերում իր կյանքը, ափսոսում ե լվացարաբու-  
հու ջահելությունը և նկատելով, վոր նա արամադիր  
չե ասածները լսելու, հանկարծ յենում և աշխույժ  
շարժումով:—Դե, Բաղդասարի աղջիկ, մտածիր: Յես  
եկուց ելի կը գամ:

— Յես մտածելու բան չունեմ,—ասում ե Նազոն  
ակամա:—Յես իմ վորդուն չեմ...

— Հա, յերեխեդ ուր ե: Հերանցդ տանն ե,—հե-  
տաքրքրվում է ծերունին:—Ե՞ս, յեթե ուղե-  
նաս՝ յերեխեդ ել հետդ կը տանես, ինչ կա վոր...  
Դե, մի լավ մտածիր,—շեշտում ե նա և քայլերն ուղ-  
ղում դեպի փողոց:

Մթնշաղ ե արդեն: Վերջալույսը հալվում է մութ  
կապույտի մեջ: Յերեկոն իջնում ե խաղաղ: Թեթի  
քամի յե փշում, բարդիների տերեները թափվում են  
խմբերով, ճքճքում են, ճքճքում, ասես արտնջում են  
ում վոր դեմ և թափվում ցած: Թափվող տերեների

տակով ծերունին գնում է մինչև փողոց և հանկարծ  
վերադառնում:

— Հա, Բաղդասարի աղջիկ, մոռացա, առ,—ասում  
է զրաբանից յերկու խնձոր հանելով:—Լավ, թթվաշ  
խնձոր ե, մեր ծառերից ե...

Ու նորից գնում ե դեպի փողոց, կրկնելով:

— Մտածիր, մի լավ մտածիր...

\* \* \*

Հաջորդ որը—կիրակի: Նազոն՝ մաքուր շորերը հա-  
զած, գնում ե լվացքի ապառիկները հավաքելու և մտա-  
ծում ե ծեր Ներսեսի ասածների վրա: Ահա թե ինչու ե  
շուտշուտ գալիս և միրգ բերում, ուրեմն մտքումը ըան  
և եղել: Նշանակում ե մեկը, յերեկ մի վորեն այրիացած  
տղամարդ խնդրել ե միջնորդելու, և զա ել յեկել ե իր  
նման յերկար-բարակու հեռվից սկսելով... Յեկ իրենից  
պատասխան ե սպասում: Ի՞նչ պատասխան կարող ե  
տալ. Վորդուն հո չի կարող թողնել... Զե, գա ել—զնա ել,  
ինքը մարդու գնալու ցանկություն չունի... Այսպես եր  
մտածում Նազոն, և մտածելով՝ վորշեց այլև չը խո-  
սել այդ մասին, ու դիտմամբ ուշացավ մինչև յերեկո,  
վոր չհանդիպի ծեր Ներսեսին:

Այդպես ել յեղավ: Տուն դառնալով՝ հարեւնու-  
հուց իմացավ, վոր «Նա» յեկել՝ յերկար սպասել ե իրեն  
ու գնացել: Հայտնելով այս՝ Մարգարիտը հետաքրքը-  
վեց, թե ի՞նչի յեր յեկել ծերունին և ի՞նչ կա առնա-  
սարակ, վոր նա շուտշուտ գալիս ե այդպիս:

Նազոն խուսափողական պատասխան տվեց, ով ե  
իմանում, յերեկ շորեր լվալ տալու յե յեկել:

Մյուս որը, ինչպես ամեն լի որ, Նազոն դարձյալ  
գնաց լվացք անելու և վերադարձավ իրիկնամտին: Բո-  
լոր աներում ձրագներ են վառվում, բացի իր տնից:

Ենչ մութն և բակը... Տանը մոտենալով՝ նկատում է  
նու մի սկ կերպարանք, վոր անշարժ նստած և շեմքի  
մոտ: Ո՞վ և տեսնես: Նու մի ըսպե վախ և զգում,  
բայց շուտով հանգստանում է: Ա՛խ, ծեր Ներսեսն և  
երեւմ են ձերմակ գլուխը, միրուքը, ձեռնափայտը...  
Ու մոտենում է սրտապինդ: Ծերունին յելնում և տե-  
ղից և բարեւում գլխի շարժումով:

— Գիտես, յես վաղուց եմ սպասում,— ասում է  
Ներողություն խնդրողի խոնարհ ձայնով.— Արեւ մեր  
չեր մտել՝ յեկել եմ: Յերեկ ել յեկա՝ տանը չելիք...

— Ի՞նչ կա, — հարցնում է Նաղոն:

— Յեկա են բանի համար:

— Վո՞ր բանի:

Ծերունին զարմանում է, միթի Նաղոն չի հիշում:

— Են որ ասի՞ «մտածիր»:

Նաղոն պատասխանում է շատ սառը այն, հիշում  
է, ինչպես չե, հիշում է, բայց ինքը մարդու գնալու վոչ  
մի ցանկություն չունի. վորդու թեր բռնելու յե և  
նստելու: Հասկանում եք: Նու իր վառ ոջախը մտադիր  
չե հանգնել:

Ծերունին տիսուր նայում է նրան և մի առժա-  
մանակ կարծես խոսք չի գտնում ասելու:

— Դե, դու գիտես, — ասում է ընկճված. — Յես  
քու վատը չեմ ուզում: Հասկանում ես: Ասում եմ...

Այստեղ Նաղոն անհամբեր՝ ընդհատում է նրան.  
վերջապես հետաքրքական և իմանալ՝ ով և այն մար-  
դը, վոր ուզում է իրեն: Հը՞: Կա արդյոք այդպիսին  
և ով ե, յեթե կա:

Ծերունին տատանվում է փոքր ինչ և ապա խո-  
սում հուզված. այն, ի հարկե, կա... կա, յեթե միայն  
Նաղոն ցանկանա...»

Բայց ով ե, ով. չի կարելի իմանալ: Նաղոյին  
հատաքրքրում է անոնքը:

Նորից ծեր Ներսեսը տատանվում է և կրկնում  
տոաջվագիս հուզված, բայց մեղմ, շատ մեղմ ձայնով.  
— Յեթե զու ուզիս անունը հեշտ է... Յես չեմ  
ուզում մենակ մնաս, հասկանում ես:

Այստեղ Նաղոն ցնցվում է հանկարծ և յերեսը  
շրջում դեպի ծառերը. ինչ-վոր վոտնաձայն և լսվում:  
— Մարդ ե գալիս, շնչնում է նա:

Այս, ձիշտ վոր մեկը գալիս և ծանր-ծանր քայ-  
լերով: Նաղոն աչքերը հասում է յեկողի կողմը: Հարե-  
վանունի Մարգարիտն և վեշտերը քաշ տալով...

Նրան տեսնելով ծերունին յելնում և տեղից:

— Բա հիմի շորերս յերբ բերեմ, — ասում է ա-  
րագ-արագ, նույնակա յեկողին նայելով. — Շարաթ որը  
կը լվանամ...

Այս շարաթ որը կարող է լվանալ:

— Դե լավ, — ասում է Ներսեսը, — շարաթ որը  
կորկեմ: Բարի գեշեր...

Յեկ արագ հեռանում է ձեռնափայտը թխացնե-  
լով ու հաղալով:

Մինչ այդ Մարգարիտը մոտենում է՝ աչքը հե-  
ացող ծերունուն:

— Դա ինչ ե, աղջի, ամեն որ գնում-գալի. — հարց-  
նում է քմծիծաղ ու ծերունու հասցեյին ուղղած արհա-  
մարհանքով:

— Ի՞, հողեմ գլուխը. յետեր կարմիր ինձոր չեմ  
դրկում, — պատասխանում է Նաղոն նույնակա արհամար-  
հանքով. — յեկել ե՝ «շորերս լվա»...

— Իրա հորքուր ե, մորքուր ե — ինչ ե:

— Յեսիմ, — վեր ե քաշում ուսերը Նաղոն:

Փոխանակ զրկելու՝ շարաթ որը Ներսեսն ինքը  
շորերի կապոց կռան տակին, կանգնում է Նաղոի շեմքում:

Այրին նոր միայն զարթնել — լվացվում է:

— Բարի լուս, Բաղդասարի աղջիկը — տառւմ և աշխառյժ և կապոցը դնում թախտին, ապա նստում ե ինքը և արխալուզի գրպաններից մի քանի խնձոր հանելով՝ մեկնում Նազոյին:

Այրին չի ուզում վերցնել. ինչ նեղություն ե քառամ, չնորհակալ ե: Բայց ծերունին զորով, մի քիչ ել շում, չնորհակալ ե: Բայց ծերունին զորով, մի քիչ ել նեղանալով՝ խնձորները դնում ե նրա գոգնոցի գրպանը: — Լավ խնձոր ե, ասում ե, — թթվաշ, Մեր ծառերից ե:

Ու մեզմ հանդիմանում ե Նազոյին՝ թե ինչու չի գալիս իր այգին: Ուրիշները գալիս՝ ուտում, տանում են, իսկ Նազոն մի անգամ զանե վոտք չի դնում:

— Լավ չես անում, Բաղդասարի աղջիկ՝ սկի լավ չես անում:

Ու զբուցելով՝ դարձյալ խոսք և բանում իր առաջարկի մասին, սակայն Նազոն խոսքը նորից կտուրն ե գցում, և նա հեռանում է տիսուր ու մտամոլոր: Մյուս որը դարձյալ գալիս ե: Տոնի պատճառով՝ Նազոն ելի տանն ե, այս անգամնա ապառիկներ չունի հավաքելու. միայն մի քանի շոր կա, վոր պիտի հարթուկի: Ծեր Ներսեսը ծանր-ծանր նստում ե շեմքին և կամաց-կամաց խոսում «բանի» մասին: Բոլոր ժամանակ այրին անժպիտ ե: Վոչե՞նչ չի պատասխանում, ու ծերը հեռանում ե լվացած շորերի կապոցը կոնստանտին: Ու միքանի որ չի յերեւում. ավելի շուտ Նազոն նրան չի տեսնում, վորովհետեւ միշտ ուշ և տուն գալիս: Մի խոսքով, մի ամալա մեջ յերեք անգամ հաղիվ ե հանդիպում: Յեվ ամեն անգամ ծեր Ներսեսը կանգնեցնում ե նրան ու հարցնում. — ի՞նչպես ե, լավ ե ապրում, հաց ունի. յեթե վաշ — ալյուր դրկի. ինքը բավական ալյուր ունի: — Վոչի՞նչ, — ասում ե Նազոն, — ունիմ. ամեն կա, չնորհակալ եմ...

Ու աշխատում ե շուտով, շուտով հեռանալ: Բայց Ներսեսն ուզում ե խոսել, հարցնել ելի լինչ ե մտածում Բաղդասարի աղջիկը իր ասածների մասին:

Սակայն Նազոն՝ տեղ ունի գնալու, և հեռանում ե արագ քայլերով:

Մի բովելով Ներսեսն ուզում ե յետ կանչել նրան, մի յերկու խոսք, միայն մի յերկու խոսք ասել «բանի» մասին, բայց Նազոն — ե, հեռու յե արդեն... Յեվ անցորդները, խանութպանները տեսնում են, թե ինչպես ծեր Ներսեսը փողոցում կանգնած՝ նայում ե լվացարարունու յետեկից: Յերեմի ել, Բաղդասարի աղջկա հետ խոսելու համար Ներսեսն անցնում ե նրա տան մոտով, բայց նա միշտ ել տանը չի լինում: Յեվ յերբ Նազոն լվացքատեղից գտնում ե տուն, Մարգարակց իմանում ե, վոր Ներսեսն յեկել և ու գնացել յերբեմն բաց լուսամուտների գոգում տեսնում ե խնձորներ, վոր կտցահարված են լինում հավերի թե ծտերի կողմից: Յեվ ամեն անգամ այդ խնձորները տեսնելիս՝ Նազոն ասում ե ինքնիրեն. «Ի՞նչ, հոգս զլխիդ. ուզում ե խնձորով խաբել՝ մարդու տալ: Տիսնես վեր քսոսի համար և աշխատում»,... Ու ամեն անգամ մտքում կրկնում եր իր վճիռը, վոր ովք ել ուզում ե լինի, ինչ ել ուզում ե լինի — ինքը մարդու չի գնա. և ելի վորոշում ե չհանդիպել ծեր Ներսեսին: «Հերիք ե, գլուխ ե տանում», ասում ե: Ու անցնում ե շարաթ, յերկու շարաթ, ավելի — չի հանդիպում: Թե ինչնու Ներսեսը չի յերեւում — դա Նազոյին չի հետաքրքրում: Բայց մի որ կալիս ե ահա նրա մոտ մի պառակ կին — ծեր Ներսեսը գալիս և ահա նրա մոտ մի պառակ կին — ծեր Ներսեսը մորաքույրը և, ծերությունից զլուխը տմբումքաց նելով՝ հայտնում, վոր «իմ խեղճ Ներսեսը հիվանդ ե» ու կանչում ե Նազոյին:

Նազոյին. իրան: Լվացարարուհին բան չի հասկանում:

— Ի՞նչի համար, ի՞նչ կա, — հարցնում ե դարձացած:

Պառակ մորաքույրը վոչինչ չգիտի. «Իմ խեղճ Ներսեսը հիվանդ ե» և Նազոյին ուզում ե տեսնել: Ուրիշ վոչինչ:

Ո՞հ. Նազոն ժամանակ չունի. յեթե շորեր լվանալու բան կա—թող բերեն. և նա բերում ե մի այնպիսի պատճառաբանություն, վոր պառակ մորաքույրը համոզվում ե, թե իսկապես վոր Նազոն ժամանակ չունի. վորդին հիվանդ ե հորանց տանը և այսոր շտապ գնում ե տեսնելու. գյուղը հեռու, մինչև գնա՝ մութը կընկնի: Այնպես վոր ժամանակ չունի:

Յեկ պառակը հեռանում ե գլուխն ելի՛ կողմացույցի պես տմբտմբացնելով:

Իսկ Նազոն շեմքում կանգնած՝ յերկար-յերկար մտածում ե, թե արդյոք ծեր Ներսեսն ինչո՞ւ համար պիտի կանչեր իրեն: Յեթե շոր ուներ լվալու—կորկեր: Ի՞նչ կա ուրեմն...

\* \* \*

Պառակի գալուց մի շաբաթ հետո Ներսեսը մեռավ և ամբողջ կարողությունը թողեց Նազոյին: Ինչո՞ւ—վոչ-վոք վոչինչ չգիտե: Այսքանը հայտնի յե, վոր մտհից մի որ առաջ կանչում ե նա իր ծխական քահանային և բոլոր ունեցածը կտակում Նազոյի զլիին: «Ի՞նչ, Նազոյի զլիին, լվացարար Նազոյի զլիին. ինչո՞ւ համար»... Յեկ հարեւանները, առհասարակ ավանի բնակիչները—բոլորը՝ վոչինչ չեն հասկանում: Վորովհետեւ, վորքաննրանք գիտեն՝ դրանք աղքական չեն: Գուցե՛ հեռավոր... Վոչ, վոչ—ազգակցական վոչ մի կառ

չկա, պնդում են վոմանք: Գուցե և կա, կասկածում են մյուսները: Իսկ մի քանիսը, մանավանդ այրու հարեւանները պնդում են, վոր մեռնողն անպատճառ այրու սիրեկանն է յեղել. թե չե՞ ի՞նչով բացարել այս բոլորը... Վերջինների մեջ առանձնապես աչքի յե ընկնում հարեւանուհի Մարգարիտը: Նա տեսել ե, այս, իր աչքերով հարյուր անգամ՝ տեսել ե, թե ինչպես ծեր Ներսեսն ու Նազոն թաքուն զրուցում եյին: Այս, տեսել ե...

Նազոն սակայն, յերբ իմացավ կտակի մասին—սկսեց լալ: Նա լալիս եր ու մտածում, մտածում եր թե՝ իր վոր լավության համար ե Ներսեսն արել այդ կտակը: Զե՞ վոր ինքը միշտ արհամարհել ե նրան, անիծել: Ու վոչինչ, վոչինչ չեր հասկանում: Ափսոսում եր միայն, վոր չգնաց տեսության և ելի մտածում տիրությամբ.

«Յեթե գնայի—գուցե չմեռներ»...

## ՍԱՏԱՆԱ

(Գյուղացաւ պատմած)

I

Յերդվում եմ, հավասար վկա, ասածներիս մեջ մի սուտ բան չկա: Ամենքը գիտեն, վոր Խեչանն իրա որում, սուտ խոսել սկի չի սիրում:

Ես բանը, ախտերս վոր դուք եք, պատահել ե իմ ջահել ժամանակ, յերբ ծառայում եյի Վերին Շեն գեղում... Ե՞ն, ջահելությունն ել մի բան ե, վոր գաւլիս ե ու անցնում: Զահել մարդու զլիսով շատ բաներ են անցնում... Իմ զլիսովն ել, պետք ե ասեմ, շատ բաներ են անցել: Կյանքումս քսանից ավելի տան ծառա յեմ յեղել. շատ մարդ եմ փորձել, շատ հաց եմ կորել ու ենքան ել բան եմ տեսել ու լսել, վոր ամիսներով նստեմ-պատմեմ—չի հատնի: Համա եղ ամիսից մի բան իմ մտքից սկի չի գնում, ու ամեն անգամ, յերբ խոսում են սատանաների ու կնանց վրա, իսկույն միտս ե գալի:

Հայտնի յէ Աստծուն, ձեղանից ել ինչ թագցնեմ: Վոնց վոր ասի, ծառայում եյի եղ գեղում, աղա Ակոր կասեյին, նրա տանը: (Եղ ժամանակ յես կըլեյի մի տասնինը—քսան տարեկան): Աղա Ակորն ինքը, պետք ե ասած, շատ լավ մարդ եր. վնչ կը խմեր, վնչ կը հարրեր, վնչ ել մարդու կասեր—մեկնած վոադ քեզ քաշի: Մի տարի մնացի նրա տանը, մի որ չասավ՝

«Չան վորդի, աչքիդ վերել սև ունք կա»: Եսպես քը քիստոնա մարդ եր... Սաղ շարաթը իր ալրի առուտուրի հետ, իսկ կիրակի որերը կամ ժամ կերթար կամ զեղերը՝ պարտքեր հավաքելու: Ենքան ել հասակով չեր, կըլեր եսպես՝ հիսունից մինչեւ վաթսուն տարեկան. իսկ կնիկը շատ ջահել եր, իրան սկի չեր սաղում: Տեսնողը կասեր սա աղջիկն ե և վոչ թի կնիկը: Համա վոր եղան եր, ինչ կասես... Յետի կը նիկ եր, գրա համար եր եղան ջահել... Յերեխա յի չունեյին:

Իմ բանը նրանց տանը են եր, վոր յեղներ եյի բանեցնում, ալիր եյի կրում, հունձ եյի անում, մի խոսքով են, ինչ վոր ամեն մի հոտաղ ե անում... Դործս թեթև եր: Շատ ժամանակ ել պարապ մեկնվում եյի խոտի վրա ու շվու ածում: Զահել տղա ու շվու... Ածում եյի ինձ համար, ածում մինչեւ կես զիշեր: Հարցընողն ով եր, թե ինչ ես անում: Ակոր աղան, վոնց վոր ասի, լավ աչքով եր մտիկ անում ինձ, իսկ կնիկը հենց առաջին որից մի ուրիշ տեսակ յերեաց: Դեռ մի քանի որքա գնացած եյի, մի որ հարցնում ե.

— Վորտեղացի յես, Խեչան, ասում ե:

Ես ինչ գեղից, ասում եմ:

— Հերմեն ունես, ասում ե:

— Հեր չունեմ, ասում եմ, լայց մեր ունեմ: Նա մտիկ արակ յերեսիս ու ծիծաղեց:

— Իսկ կնիկ, ասում ե:

— Զե, ասում եմ ամաչելով:

— Իսկ յես, ասում ե, հենց իմացա պսակված ես:

Յես բան չխոսեցի: Նա նորից յերեսիս մտիկ արակ ու ծիծաղեց:

— Ով զիտի նշանած ես, ասում ե:

— Զե, ասում եմ:

Նա ելի ծիծաղեց:

Դրանից յետո ինչ վոր նա տսեր ինձ, միշտ կը ծիծաղեր, ձեռքով կը խփեր ուսիս, հանաքներ կաներ... Շատ ժամանակ ել յերբ յետ պարագ ըլելի՝ կը գար կողքիս կը կաղներ ու դեսից-դենից կը խոսեր... Գործից հետո, ամեն իրիկուն յետ սովորություն ունեցի շվու ածել: Հենց վոր Ակոր աղան գար քներ, յետ կըսկսելի իմ շվուն... Եսպես ժամանակ նրա կնիւ կը մին-մին կը գար հեռվից կը լսեր:

Մի իրիկուն ել եղակա, ծառերի տակ նստած, ածում եյի ինձ համար, մին ել տեսնեմ յեկավ ու կողքիս նստեց, ձեռք չանի տակ զրած:

Յետ շվի ձենը կտրեցի:

— Դու, Խեչան, ասում ե, — շախով տղա ես, շատ լավ ես ածում: Վոր քու ածելը լսում եմ, ասում ե, — սիրոս փուլ ե գալի, ուզում եմ լաց ըլել...

Յետ բան չեմ խոսում: Իսկ նա ելի յերեսիս ե մտիկ տալի ու խոսում:

— Ինչպես յերեսում ե, Խեչան, ասում ե, — զուրավ հոգի ունես, յերանի՛ են աղջկան, վոր քեզ պոր առնի...

«Եղ խոսքերն ինչի՞ համար են», մտածում եմ ու ելի բան չեմ խոսում: Իսկ նա յերկար խոսում ե ու յերեսիս մտիկ տալիս ենպես աչքերով, վոր ամաչում եմ:

— Դու հո նշանած չես, ասում ե, — Խեչան:

— Զե, ասում եմ: Ասում եմ ու մտածում, թե ու ինչի ե շուտ-շուտ հարցնում իմ նշանվելու մասին: Զինի մտքումն աղջիկ կա ինձ տալու:

— Բա ինչի համար, Խեչան, ասում ե, — եղակա ամեն որ վառված շվու ես ածում:

— Ենպես ելի, ասում եմ:

— Զե, ասում ե, Խեչան, քեղանում մի բան կտ:

— Ի՞նչ բան, — ասում եմ:

— Թաղցնում ես, Խեչան, ասում ե, զու անպատճառ սիրած աղջիկ ունես:

— Զե, ասում եմ, աղջիկն ինչի՞ս ե հարկավոր, ինչ զլխովս եմ տալի: Յետ մի ծառա մարդ, իմ գլուխը զորով եմ պահում:

— Խե, ասում ե, ծառա մարդին կնիկ հարկավոր չի՞ս: Թի սիրեկան ունես, ասում ե, ինձ ասա յետ գլուխ բերեմ:

Յետ ամոթից բան չեմ խոսում:

— Դե, ասում ե, թաղցնիլ մի. թե ունես՝ ասա... Յետ գիտեմ, ասում ե, զու սիրեկան ունես:

Յետ յերգվեցի հորս գերեզմանով, իմ արեով, — Ճը հավատաց են անհավատ անհավատի աղջիկը: Ասում ե՝

— Սուտ ես ասում: Յերկինք, գետինք, ծով, ցամաք — ելի՛ չհավատաց:

— Զե, ասում ե, սուտ ես ասում: Տեսա վոր եղակա չի հավատում — ել բան չխոսեցի: Եղ ժամանակ նա նորից յերեսիս մտիկ արավ ու ծիծաղեց:

— Բա կնիկ անել չես ուզում, ասում ե: Ինչ գլխովս եմ տալի:

— Աղաթ ե, ասում ե, վոր մարդը կնիկ անի: Տես, միրուքդ ու բեղերդ զուրս են յեկել:

Յետ ասելով, նա ձեռք քսեց միրուքիս, բեղերիս ու կամաց ծիծաղեց: Յետ ամոթից գիտենը մտա, համա լուսի. միայն մի քիչ հեռու նստեցի նըանից: Եղ ժամանակ նա վոտքի կաղնեց:

— Դե, Խեչան, ասում ե, յետ զնում եմ, զու շվուդ ածա, հեռվից կը լսեմ: Դու շատ լավ ես ածում: Իսկը, ասում ե, իմ ախաղոր պիս ես ածում... Ասավ ու զնաց ծառերի արանքով:

Նըա գնալուց հետո յես յերկար ժամանակ ինքս ինձ մտածում եմ նրա խոսքերի վրա. մտածում եմ ու ես մասին, թե ինչու նա մարդին քնացնում ու գալիս և ինձ հետ զբուց անում:

«Բարի, հանաքչի կնիկ ե, ասում եմ ինքս ինձ: Ում տանը ծառայել եմ հսպես բարի կնիկ չի յեղել: Սա Աստծու հրեշտակ ե, վոր կա: Խղճով կնիկ ե, ասում եմ, վոր նոքարին ել բանի տեղ և դնում»...

Եսպես անցավ մի քանի որ: Ամառ ժամանակ եր. առավոտից գնում եյի խոտհնձի, իրիկունը ջարդված գալիս քնում: Ու ամեն իրիկուն, յերբ տուն եյի գտլիս, աղիս կնիկը ինձ համար ճաշի կերակուրներից միշտ պահած եր ըլում, բիրում եր առաջիս գնում:

— Կեր, ասում ե, Խեչան, քեզ համար եմ պահել:

Ասում ե ու ինքն ել կողքիս նստում, մտիկ անում, թե վոնց եմ ուտում: Շատ վախտ ել, յերբ մարդը տանը չեր լում, գղակ եր վեր ունում ու իմ ամանից ուտում:

— Յես հպարտ չեմ, ասում եր, Խեչան, ամենքի հետ ել կերակուր կուտեմ: Իսկ քեզ հետ, ասում ե, յես իշտահով եմ ուտում:

Ասում ե ու ուտում գղակ-գղալի յետեից, իսկ յես աչքի տակով մտիկ եմ անում նրան ու ամոթից կարմրում:

Մի որ ել եղակս հաց ուտելու ժամանակ վեր կաւալ թե՝

— Խեչան, ինչ մեր տունն ես յեկել—սիրունացեկ ես:

— Յես ինչ գիտեմ, ասում եմ:

— Վոնց թե, ասում ե, յես չեմ տեսնում. թըշերդ կարմրել են նուան պես: Աղջկերը ճիմի քեզ շատ կը սիրեն...

Ես խոսքերի վրա յես համ ամանչեցի, համ ծիծաղեցի:

— Ի՞նչ ես ծիծաղում, ասում ե, յեթե յես Էլ աղջիկ ըլեյի, քեզ վրա կը սիրահարվեյի:

Յես գլուխս կախ արի:

«Ես ինչեր ե ասում», մտածում եմ:

— Հանաք եմ անում, Խեչան, ասում ե, հանաք եմ անում. .

Ասում ե ու հետն ել ծիծաղում, ձեռքը մեջքիս խփում, գղակս վեր ունում ու նորից գլխիս գնում... Ու հսպես ամեն ժամանակ, յերբ մարդը տանը չեր ըլում: Իսկ յերբ մարդը տանն եր ըլում, ի հարկե, եղապես բաներ չեր անում: Ես ել ասեմ, վոր մարդը ցերեկները շատ քիչ եր տուն գալիս: Առավոտը գուրս եր գնում իր գործին՝ առուտուրին, ճաշին գալիս եր, նորից գնում ու մին ել իրիկունը կը գար՝ չայ կը խմել ու հավերի հետ կը քներ: Քնած ժամանակն ել ենքան պինդ եր քնում, վոնց վոր ոխտը տարվա մեռել... Մի անգամ, լավ միտս ե, գիշեր ժամանակ յեկան նրան կանչում եյին: Քնած եր: Եղ որն ել, թարսի պես, կնիկը տանը չեր, յես գնացի զարթեցնելու: Գուռում եմ, գոռում—տեղից ժամ չի գալի: Ելի, ելի—ժամ չի գալի... Տեսա վոր եղակս ե, ասի արի մի սրա վոտի տակը քորենք: Ու հենց մի յերկու անգամ ձեռս քսեցի, մին ել տեսա գլուխը ժամ տվից: «Հը՝ հը’...» Հապա, եսպես պինդ եր քնում նա... Դե եսպես քնող մարդն ել ինչ կիմանա, թե ինչ ե կատարվում աշխարհում: Ասենք, չքներ ել, ինչ պտի իմանար... Են ել ասեմ, վոր նա շաբաթը կամ յերկու շաբաթը մի անգամ գեղերը կերթար պարտքեր հավաքելու: Գեղացիները միշտ ալիք, աղ եյին տանում նրանից ու պարտք մնում. նա ել գնում եր պարտքերի տեղ բե-

բում ինչ պատահում եր, ել վոչխար, ել մողի, ել հազ...  
Բերում եր լցնում տուն ու ծախում:

Մի անգամ ել եսպիս, ամառ ժամանակ գնաց հեռ  
ոռւ մի գեղ, ելի պարտք եր հավաքելու, ինձ ել ասավ,  
վոր տանը լավ մտիկ տամ: Գնաց ու գիշերն ել մնաց  
հնտեղ:

Ու հենց եդ գիշերն եր, վոր պատահեց ես բանը:

## II

Մի քիչ ամոթ ե ասելը, բայց ինչ արած, քանի  
վոր սկսել եմ, պետք ե վերջացնեմ: Ամենքի հետ ել  
եղափես բան պատահած կըլի, ենպիս վոր ամաչելու  
բան չկա:

Եդ ժամանակ, քանի վոր ամառ եր, յես քնում  
եյի դուրսը՝ ծառերի տակ: Մի քանի տախտակ եյի  
դրել ու վրեն մի հին խսիր քցել: Ամառ ժամանակ,  
պետք ե ասած, դուրսը քնելը լավ ե, համ հով ե, համ  
ել քունն անուշ ե: Յես եղափեղ քնում եյի մին ել նրա  
համար, վոր ծառի գողեր չը մտնեն... լիրը մարդիկ  
շատ. կը մտնեն—ինչքան չեն գողանալ, յերկու ենքան  
ծառ կը ջարդեն: Մի խոսքով... եդ իրիկունն ել, շատ  
աշխատելուց բեզարած, կիսահանվիլ մեկնվել եյի քը-  
նելու, ու են ե քունը կոխում եր ինձ, հանկարծ վոտի  
ձեն եմ լսում: Գլուխս բարձրացնում, ականջ եմ դնում:  
Մին ել տեսնեմ ծառերի արանքին մի շվաք, վոր կա-  
մաց-կամաց մոտենում ե ինձ: Գիշերն ել մութն ե,  
վոչ ասաղ կա, վոչ լուսնյակ. ենպիս վոր չեմ ջոկում  
ինչ շվաք ե դա:

«Ես ով պետք ե ըլի, մտածում եմ: Զլի՞ զլիսիցը  
ձեռ վեր կալած գողի մինն ե:—Մի առաջ արի, ասում  
եմ մտքումս, յես քեզ կասեմ, թե վոնց են ինձոր դո-  
դանում»:

Համա չե, արի տես վոր բանից ուրիշ բան դուրս  
յեկավ:

Յերբ յեկողը լավ մոտեցավ, ինչ տեսնեմ—նա  
աղիս կսիկը. մի սև շալ զլիսին ու ուսերին քցած:  
Հենց վոր տեսանա ե, ել ձեն չհանեցի:

«Ինչի՞ պետք ե յեկած ըլի», մտածում եմ ու աշ-  
քերս խուփ անում, մթամ թե՝ քնած եմ:

Նա կամաց-կամաց, կատվի պիս, մոտեցավ ինձ:

Յես շունչու պահած սպասում եմ: Ասում եմ՝ տես-  
նենք ինչ պատի ասի:

Մի քիչ վախտ բան չը խոսեց: Աչքերս խուփ լը-  
սում եմ վոնց ե շունչ քաշում: Միայն մի քիչ հետո  
կամաց, շատ կամաց ձենով հարցնում ե ինձ.

— Խեչան, քնած ես, ասում ե:

Յես ձեն չեմ հանում: Ենպիս եմ ձեացնում թե  
քնած եմ: Մտածում եմ—կամ աղն ե պակաս կամ մա-  
զը,—ով գիտի մի բան ե միտն ընկել, յեկել ե վեր  
կացնելու: Ինչ ել ըլի, ասում եմ, վեր չեմ կենալ:  
Վոազ բան կա, թող մնա առավոտը:

— Խեչան, ասում ե նորից, քնած ես:

Ելի ձեն չեմ հանում:

— Խեչան, ասում ե, քեզ եմ ասում, քնած ես:  
Ասում ե ու վոսս ժաժ տալի:

Յես խոմիացնում եմ:

— Խեչան, Խեչան, ասում ե տոաջվա պիս կա-  
մաց ձենով, ու ես անգամ ել գլուխս ե ժաճ տալի:

Տեսա վոր շատ բան արագ, ասի տեսնեմ ինչ ե  
ասում. կարելի յե մի բան ե պատահել.

— Ի՞նչ ե, ասում եմ ու աչքերս տրորում, մը-  
թամ խոր քնած եյի:

— Խեչան, ասում ե, եսոր աղեդ տանը չի, յես  
մենակ եմ—չեմ կարում քնել, սատանաներից վախե-  
նում եմ սաստիկ...

«Յես ինչ կարամ անեմ, վոր ինձ ասում ե», մտածում եմ ինձ ու ինձ:

— Ե՞ն, յես ինչ անեմ, ասում եմ:  
Նա թե՝

— Խեչան, հոգի ջան, ասում ե, շատ եմ վախենում: Գլխատակո սուր ու շամփուր եմ դրեւ չի ողնում, ելի վախենում եմ: Արի, Խեչան, ասում ե, մոտիկ քնի, կարելի յե չվախենամ...

«Ես ինչեր ե ասում», մտածում եմ ու հարցնում.

— Մոտիկ վորտեղ:

Թե՛ մեր ոթախներից մինում:

Յես բան չխոսեցի; «Վո՞նց կըլի, մտածում եմ, ծառա մարդը գնա աղի ոթախումը քնի»:

Նա յել տեսավ, վոր քաշվում եմ, սիրտ տվեց ինձ:

— Մի ամաչի, ասում ե, արի. թե չե սատանաները վրա կը տան, վախենում եմ: Դե, վեր կաց, հոգի ջան, ասում ե, քունս տանում ե:

Եսպես աղաչանքով վոր խոսեցի, յես ել մտածեցի, թե գրուստ վոր կնիկարմատ ե, սատանաներից կը վախենա... Քիչ չի պատահում, վոր սատանաները կնիկարմատներին չանչում են կամ գիշերները վախեցնում տանում քարերի մեջ պահում... Մտածեցի եսպես ինձ ու ինձ ու շինելս վեր կալա գնացի:

Յերբ մտանք տուն, նա՝

— Գիտես, Խեչան, ասում ե, յես սատանաներից շատ եմ վախենում: Հենց գիտեմ ծուռը վոտներով, յերկար պոչերով դուրս են գալի պատերի տակից, դուն արանքից, փեշի միջից, դուրս են գալի ու ինձ վրա տալի: Դու յել վախենում ես, հարցնում ե ինձ:

— Յես հո յերեխա չեմ, ասում եմ, վոր սատանաներից վախենամ: Սատանան ինչ բան ե վոր:

— Զե, ասում ե, Խեչան, մի ասի: Քրիստոսն ինքն ել սատանից վախենում եր:

— Բոշ բան ե, ասում եմ, Քրիստոսը կարող եր վախենալ, բայց յես չեմ վախենում:

Ես խոսքերի վրա նա ծիծաղեց:

— Դու շատ սրտոտ ես, Խեչան, ասում ե:

— Իհարկե, ասում եմ, տղամարդը սրտոտ պետք ե ըլի: Կատուն ինչի՞ յե պետք...

Նա ելի ծիծաղեց:

— Ինձ զուր ե գալի, Խեչան, ասում ե, վոր դու եղանս խոսում ես: Քեզ համար մի լավ աղջիկ պետք է ճարեմ, վոր եղքան սրտոտ ես...

Եսպես խոսում եր նա գեսից-դենից ու աչքերիս մտիկ անում, իսկ յես կարմրում ելի ամոթից...

Վերջը, ել ինչ յերկարացնեմ, եղ գիշեր պատահեց են, ինչ վոր շատ մարդու հետ պատահած կըլի...

Քրանից յետը նա ելի մարդին քնացնում, գալիս եր իմ կուշտը: Իսկ յես ամեն անգամ մտածում ելի, վոր վատ բան եմ անում, վոր Աստված չի ների ու մի որ գատաստան կանի... Մտածեցի մի անգամ ել վեր կենամ ու հեռանամ:

Բայց նա՝ քանի գնում, տաքանում եր ինձ վրա: Ու մի որ ել տեսեք թե ինչ ե ասում:

### III

Ամեն իրիկվա պես, եղ իրիկունն ել իմ թախտի վրա նստած ելի, յերբ եկավ նա ու կողքիս նստեց: Նստել ե ու խոսում ե, հանաքներ ե անում... Յես գիտեմ ինչի՞ յե եկել, ու մտածում եմ ելի, վոր լավ բան չեմ անում, վոր իմ աղի կնկա հետ եղանս եմ: Ես բանն Աստված չի ների ինձ, մտածում եմ:

Հիմի գուք կասեք թե՝ Խեչանը սուտ ե ասում.

Եղալես ժամանակ, եղ տեսակ բաներ չեն մտածում...  
Համա, զրուստ եմ ասում, Քրիստոսի «առեք-կերեքը»  
վկա,—մտածում եյի: Շատ ել ջահել եյի: Խելքը մե-  
մենակ հո մեծերին չեն տվել:

Ես մտքերի վրա եյի, մին ել նա թեքվում ե դե-  
պի ինձ ու փափում կամաց:

— Դիտես, Խեչան, ասում ե, յես քեզ մի բան  
պետք ե ասեմ, թե կատարես, են ե հո կիմանամ վոր  
տղամարդ ես:

— Ի՞նչ, հարցնում եմ:

— Առաջ խոսք տուր, ասում ե, — հետո կասեմ:

— Ի՞նչ բան ե, ասում եմ, ասա, խոսք տամ:

— Չե, ասում ե, առաջ խոսք տուր, հետո ասեմ:

Ես ձեն չեմ հանում: Մթի մեջ նրա յերեսը լավ  
չեմ տեսնում, համա լավ լսում եմ, վոր նա շունչ  
քաշելով ե խոսւմ:

— Դե, խոսք տուր, ասում ե նորից ձեռս բռնե-  
լով, խոսք տուր, վոր ասած կը կատարես...

Դե, զիտեք ելի. ջահել տղա, առանց լավն ու  
վատը իմանալու, առանց դեսի ու դենի, տարա ու  
բերի թե:

— Լավ, ասում եմ, կը կատարեմ, դե ասա տես-  
նեմ բանն ինչումն ե:

Նա մի քիչ սուս արավ, հետո մոտեցավ ինձ,  
կալավ կողքիս ու կամաց, շատ կամաց ձենով փափսաց.

— Դիտես, ասում ե, Խեչան, քեզ ինչ պետք ե  
ասեմ:

Ասում ե ու ելի ձենը կտրում:

իմ համբերությունը հատավ:

— Դե, ի՞նչ, — հարցնում եմ իրա պես կամաց  
ձենով:

Ես անդամ նա տարավ ու բերեց, թե

— Խեչան, ասում ե, դու կարամ մարդ սպանես:  
Ես վեր քաշվեցի:  
— Եի, ձին հո զլխիս քացի չի տվել, ասում եմ:  
Նա ելի մի քիչ ժամանակ ձենը կտրեց:  
— Իսկ քու ոգտի համար կը սպանես, հարց-  
նում ե:

— Վահ իմ ոգտի համար, վճչ ել մի ուրիշ բանի  
համար յես մարդ չեմ սպանի, ասում եմ. մարդիկ ի՞նչ  
են արել ինձ, վոր զնամ սպանեմ ու արնի մեջ ընկ-  
նեմ: Գլխիցս հո ձեռ չեմ վեր կալել:

— Զե, ասում ե, Խեչան, դու չհասկացար ի՞նչ եմ  
ասում:

— Դե հասկացրու, ասում եմ:

— Որինակի համար, ասում ե, դու կուզես վոր  
բախտավոր ըլես:

— Ի՞նչու չե, ասում եմ, են վոր սարսադը բախ-  
տից կը փախչի:

— Դե վոր եղանակ ե, ասում ե, իմ ասածը կա-  
տարի, բախտավոր կը լես:

Յես նրա ասածից բան չեմ հասկանում:

— Բախտավոր ըլելու համար, ասում եմ, — ան-  
պատճառ պետք ե մարդ սպանել:

— Հա, մեկ-մեկ պատճառում ե, վոր սպանում են:  
Ի՞նչ կտ վոր:

Յես ուսիրս վեր եմ քաշում:

— Որինակի համար, ասում ե, յեթե դու փող  
գտնես, քու ձեռիցը խեն, խլողին չես սպանի:

— Յես ել նրանից կը խեմ, ասում եմ:

— Իսկ յեթե չկարողանաս:

— Եղ ժամանակ, ասում եմ, ատամներով կը  
խեղդեմ:

Ես խոսքերի վրա նա ծիծաղից:

— Տեսնում ես, ասում ե, տեսնում ես, վոր  
սպանում են...

Ասում ե ու հետն ել խնդում:

— Դե լավ, ասում ե, Խեչան, հիմի դու ինձ են  
ասա—սիրում ես ինձ, թե չե:

Յես չգիտեմ ինչ ասեմ: Դժար եր: Վերջը առանց  
յերկար մտածելու ասում եմ.

— Դե, ի հարկե, դու իմ խաղեյնի կնիկն ես,  
հո ոտար չես:

Նա նեղացավ:

— Ե՞ն, ասում ե, ելի չհասկացար: Քեզ հարցնում  
եմ—ինձ սիրում ես, թե չե:

Դե յես ել ինչ ասեմ: Յերբ մի մարդ հարցնում  
ե քեզ՝ «սիրում ես ինձ թե չե», կարան «չե» ասես: Յես  
ել վեր կալա թե՝ «Համա»:

— Ուրեմն կուղես, ասում ե, վոր յես բախտա-  
վոր ըլեմ:

— Ինչի չե, ասում եմ:

— Իսկ կուղես, վոր յերկուսս ել բախտավոր  
ըլեմք, հարցնում ե նորից:

— Հա, ասում եմ միամիտ:

— Դե ուրեմն, ասում ե, իմ ասածը կատարի:

Յես ելի վեր քաշվեցի:

— Մարդ սպանե՞մ:

— Հա, ասում ե, չե վոր դու խոսք տվիր:

Յես մնացել եմ շվար, բան չեմ խոսում:

«Շատ ել խոսք տվիր, մարդ սպանելու համար  
ավի», մտածում եմ, սա ինչ սարսադ բաներ ե խոսում»:

— Եղափես ես ինձ սիրում համ, ասում ե, եղ ե  
քու աղամարդությունը: Վախկնտ...

Նա ես խոսքերն ենպես ասավ վոր՝ սրտիս դիպավ:

Յես—վախկնտ..., Գեղի հոտաղները դողում են ինձա-

նից, մտածում եմ, գիշերը թուրքերի գերեզմանների  
միջով մերին եմ գնում, հիմի վախկոտ դառա... Ու  
ուզեցի նրան հասկացնել, վոր իրա ասած տղեն չեմ.  
դրա համար ել հարցը, թե ում ե ուզում, վոր սպա-  
նեմ: Յես ուզում եյի նրա միտքն իմանալ:

— Խոսք տուր, ասում ե, վոր մարդու բան չես  
ասիլ:

— Զե, ասում եմ, արևս վկա. ասիլ չեմ:

— Յերգում կեր, ասում ե, հորդ գերեզմանովի:

— Հորս գերեզմանը, են սուրբ Աստվածածինը  
վկա, ասում եմ, ասիլ չեմ:

— Դե լավ, ասում ե, լսիր:

Ասում ե լսիր ու ինքը խոսում չի:

Ու վերջը գիտե՞ք, ինչ ասավ. մի ենպես բան,  
վոր իմ մտքով սկի չեր անցնում:

— Կարաս, ասում ե, Խեչան, մեր ես քովակին...  
աղատվենք դրանից...

Վոր ես չասավ, հենց իմանաս մի կուժ սառը  
ջուր գլխիս ածին, սառը քրտինքը ջանս պատեց, մնացի  
սառած, եսքան տարվա տղա յեմ, մի որ եղպես ելած  
չեմ... Նա ել տեսավ վոր սառա, հարցըց.

— Հը, ինչի՞ չես խոսում, ասում ե:

— Ի՞նչ խոսում, ասում են, եղպես բան վնից  
կըլի. վերև Աստված կա...

— Սարսադ, ասում ե, Աստված ինչ գործ ունի  
եղտեղի: Մարդիկ տերտեր են սպանում, չեն վախկ-  
նում...

— Զե, ասում եմ, յես եղ բանը չեմ անի. զուր  
տեղը անմեղ արին չեմ ընկնի. յես ել հոգու տեր եմ:

Նա տեսավ, վոր իրան ասածը չելավ, կողքիցս  
մի քիչ հեռու նստեց ու մթի մեջ պապղացող աչքերով  
մտիկ ե տալի ինձ: Իսկ յես ձեն չեմ հանում. վոչ ել

մտածում եմ: Ենպէս եմ վոր, կարծում եմ թե կողք-ներիս մարդիկ կան կաղնած ու մեր խոսքերն ու մըտքերը գրի յին առնում:

Եսպես մի քիչ ժամանակ յերկուսս ել բան չխոսեցինք: Վերջը ելի՞ նա.

— Ինչպէս յերեւմ ե, Խեչան, ասում ե, դու աղամարդ չես. հավի սիրու ունես...

Նա յերկար խոսում եր եսպես (վոր մինը հիշես). շատ բան ասավ, շան լափը թափեց զլիխօ, իսկ յիս, լեզուս ատամներիս արանքը դրած, ձեն չեմ հանում:

— Վոր սիրեցիր, ասում ե, եղպես չեցիր անի: Մարդ իրա սիրածի համար ամեն բան անում ե:

Եստեղ յիս վրա բերի.

— Ամեն բան կանեմ, ասում եմ, համա եղ բանը չեմ անի:

— Խի, ասում ե:

— Ենպես, ասում եմ, մեղք ե:

— Վոչ թե եղ, ասում ե, դու վախենում ես:

— Վոնց չվախենալ, ասում եմ, վերև Աստված կա, ներքե դատաստան. դիվան կը գա, դե արի ջուղարը տուր...

— Լավ, լավ, ասում ե, շատ մի խոսա...

Ես ասելով՝ նա վեր կացավ տեղից, մի քիչ տեղ պնաց ու ելի յետ յեկավ: Յեկավ առաջիս կաղնեց ու խնդում ե: Ծիծաղում ե:

— Խեչան, ասում ե, ինչ վոր քեզ ասի, հավատացի՞ր:

— Հա, ասում եմ միամիտ:

— Մարսաղ, ասում ե, ինչ միամիտն ես յեղել: Յես հանաք արի, քեզ ուզում եյի փորձել... Մարդու բան չասիս...

— Հո գժվել չեմ, ասում եմ, յես գիտեմ, վոր շխատ չես ասում...

Եղ գիշեր, նրա գնալուց յետք, յես տեղիս մեջ յերկար մտածում եյի նրա ասածների վրա:

«Խելառ Խեչան, ասում եմ ինձ ու ինձ. տեսար ինչ ոյին բերեց զլիխիդ... Դեռ ենքան միամիտ ես, վոր հանաքն ու շիտակը չես ջոկում իրարից. քիչ մնաց հավատայիր...»

Մտածում եմ մին ել են մասին, թե յեթե դըրուստ ասեր ու յիս ել շաշի պիս գնայի սպանեյի խեղճ մարդին, են ժամանակ ինչ կանեցին ինձ. — Սիրեր կը կեցին ու պառավ մերս իր աղջկերանցով հողը զլիխին կը տար...

Բայց փառք իրան, վոր եղպես բան չպատահեց...

#### IV

Ասած ե՞ «ինչ մտանես—են գտանես»: Հին խոսք ե, լավ միտք ունի: Հին մարդիկ լավ խոսքեր ունեն...

Եղ որվանից անցավ մի ամիս, թե ավելի, լավ միտս չի. համա լավ հիշում եմ, վոր սուրբ Խաչի շաբթին եր. աշտարակեցիք ել բեռներով խաղող եյին բերել ծախ:

Նա ելի տռաջվա պիս, գիշերները մի-մին դալիս իր իմ կուշտը ու զնում: Յես ելի միշտ են եյի մտածում, վոր լավ բան չեմ անում, վոր Աստված չի ների ինձ...

Եսպես, վոնց վոր ասի, սուրբ Խաչի շաբթին, մի որ աղա Ակոբը հիվանդացավ անկարծ: Որերը գեռ մի քիչ շոգ եյին, շատերն ասում եյին, վոր խոլերա ին ընկել. փորը ցավում եր ու սիրտը խառնում: Ինչ արին՝ ոգուտ չարավ: Հիվանդանալու եքսի որը խեղճը մեռավ: Թաղեցին նրան գեղական կարգով, վոնց վոր

վայել ե վաճառական մարդուն... Յերեք տերտեր յեղավ, յերկու տիրացու, ու ենքան ել բազմություն, վոր անչափ... Մինչև անգամ տանուտերն ել յեկել եր (այ գիտի Ալեքսան-ըեղ)... Հետը խոռվ եր, բայց յեկել եր:

Եսպես՝ կարգով՝ խաչով, խաչվառով եղ մարդին առաջան հողեց արին:

Բայց թաղելու որից չանցավ մի յերկու որ, գեղի մարդիկ սկսեցին հայ ես, հայ են, բա չես ասի—աղա Ակորը իրա մահով չմեռավ, նրան դեղել եյին... Սաղ գեղը լեզու առած հենց եղ և ասում, թե՝ աղա Ակորին դեղել եյին:

«Վո՞նց թե, միտք եմ անում, ով պետք ե նրան դեղեր, կամ ինչի՞ համար»... Միտք եմ անում, միտք, ու բան չեմ հասկանում: Սրան եմ հարցնում, նրան եմ հարցնում.

— Եղ վորտեղից իմացաք, ասում եմ, դեղել են, կամ ինչից գիտեք, վոր դեղած եր:

— Բա, ասում են, զլսի մաղերը թափվում եյին, են ինչիցն եր:

Ենքան խոսեցին եսպես, վոր բանը հասավ քննության:

Մի որ ել տեսնենք վերից յերկու մեծավոր յեկան՝ դեղին կոճակներով, բանով... Մինը՝ ասին քննիչն ե, մեկելը՝ բժիշկը:

Դրանք յեկան ու տանուտեր Ալեքսան բեզի տառը վեր յեկան: Եղտեղ հաց կերան, չայ խմեցին ու քիչ յետը Ալեքսան-ըեղի հետ զնացին գերեզմանատուն, վոր աղա Ակորին հանեն գերեզմանից ու տեսնեն՝ դեղմծ ե, թե չե:

Եղ վոր իմացա, յես ել գնացի: Գնացի, համա մոտ չթողին: Բայց յերբ բժիշկը ամեն բան վերջաց-

քեց, ասավ վոր գրուստ դեղած ե: Մինչև եղ ժամանակ յես հավատում չեյի, վոր դեղած թլի. համա վոր բժիշկն ինքն ել ասավ—«դեղած ե», նոր հավատացի... Դե հիմի յեկել իմացեք թե ով ե դեղել:

Հայ դես, հայ դեն... Ու սկսվեց մի մեծ քննություն: Կանչեցին սրան, կանչեցին նրան. կանչեցին աղա Ակորի կնկանը: Կանչեցին ինձ... Վոր իմ անունը տվին, հենց իմանաս տաք ջուրը գլխիս ածին:

«Ինձ ինչի՞ են կանչում, ատածում եմ, յես ինչ մեղք ունեմ եստեղ: Չե,—ասում եմ,—Խեչան, քու բանը բուրդ ե, քու բանը պրծավ... Վոր քեզ ասում եյի եղպես շնություն մի անի, Աստված չի ների. աեսար»... Մտածում եմ եստես ու զողում: Մտածում եմ ելի Սիրիրի մասին... Մի խոսքով եղ սաղ զիշերը քունս չըտարավ. ահից ու զողից միտքն ինձ տարավ:

Եքսի որը, քննությունից առաջ, աղա Ակորի կնիկը կանչեց ինձ ու՝  
— Դու, ասում ե, Խեչան, ինչ պետք ե ասես  
քննիչին:

— Ինչ գիտեմ, ասում եմ, են ել պետք ե ասեմ  
ելի:

— Այսինքն ինչ, ասում ե:

Ասում ե ու վախեցած աչքերիս մտիկ անում:

Դարձում ե թե ուրիշ բաներ պտի ասեմ:

— Պետք ե հայտնեմ, ասում եմ, վոր յես բան չը գիտեմ, միայն եսքան եմ իմանում, կասեմ, վոր հիվանդ ժամանակ ազի փորը ցավում եր:

— Հայ, ասում ե, եղպես ել ասա: Յես ել եղքան պտի ասեմ: Իսկ բան ե, ասում ե, յեթե հարցնեն աղեղ ու կնիկը իրաը հետ վճնց եյին ապրում, ասա վոնց վոր կարգն ե, ենակն ել ապրում եյին...

— Ի հարկի, ասում եմ, ուրիշ ել ինչ պտի ասեմ:

Ու գրուստ վոր կարգին եյին ապրում. մի որ չտեսա  
կռվեյին իրար հետ: Ուրիշ մարդ ու կնիկ շատ եմ տե-  
սել վոր իրար գլուխ են պոկում, իրար չանա են կըռ-  
ծում ու շաբաթներով, ամիսներով խոսվում իրարից,  
համա նրանք՝ ամենեին... Եա նրան՝ «այ մարդ», նա  
նրան՝ «Թամար ջան»...

Վերջը, ինչ յերկարացնեմ, գնացինք ըննության:  
Սիրտս ել ենպես ե դողում, ել դու պրծմք... Բոլորիս  
ել հավաքել են դատարանի մի ոթախում ու ջոկ-ջոկ  
կանչում են հարց ու փորձի:

— Ամենից առաջ կանչեցին աղա Ակորի կնկանը:  
Յերկար քննեցին նրան ու բաց թողին: Յերր նա  
դուրս յեկավ, յերեսը պատի ծեփ եր դատել աչքերն  
ել թաց եյին: Նրան վոր տեսա եղակես, սիրտս դող  
ընկավ: Մտքումս ասի՞ ինձ ամիելի պատի տանջեն,  
շան վորդիք: — Բու բանը բուրդ ե, Խեչան, ասում եմ.  
— կուժն ու կուլեն քու զլսին պտի կոտեն, ինքդ խեղճ  
մարդ, նրանք—ոռու, վոչ խոսքերն ես հասկանում,  
վոչ լեզուն, անկեզու սարի անասուն. ինչ ուղենան կա-  
նեն քեզ, վոչ տեր ունես, վոչ տիրական...

Ես մտքերի վրա եյի, մին ել թե՝

— Խեչան Պողոսով:

— Յես եմ, — ասում եմ:

Թե՝ արի նեքսեւ:

Գնացի: Սիրտս ելի ենպես ե դողում, կարծես թե  
կախելու են տանում:

Նեքսեւ յերեք մեծավոր մարդ եր նստած: Մինը  
գրում եր, յերկուսն ել խոսում եյին իրար հետ: Յերր  
յես նեքսեւ մտա, ամենից մեծը մտիկ արավ ինձ ու  
տսավ:

— Խեչան Պողոսով տի՞:

Մթամ ասում ե՝ Խեչան Պողոսովը դժւ յես:

Յես գլխով արի, թե՝ յես եմ:

— Պառուսկի գնայիշ, ասում ե:

Մթամ ասում ե՝ ոռուսերեն գիտես:

Յես գլուխս ժաժ ավի թե՝ չե:

Եղ ժամանակ նա սկսեց կողքի մարդի հետ խո-  
սել, չամ խոսում ե, համ ինձ մտիկ անում, ձեռը դե-  
պի ինձ ե մեկնում: Յես ել (վոտքերս տակիս դողում  
են) ասում եմ—տեսնենք վոնց պտի վերջանա:

Նա վոր իր խոսելը վերջացրեց, մեկել մեծա-  
վորը յերեսը շուռ ավեց ինձ վրա ու հայերեն հար-  
ցրեց:

— Դու, ասում ե, Ակոր Ոհանովի ծառան ես:

— Այս, ասում եմ:

— Քուխաղեյինը, ասում ե, գիտես ինչից մեռավ:

— Յես ինչ իմանամ, ասում եմ, աղա. յիս մի  
ծառա մարդ եմ...

Նա «հըմ» արավ ու սկսեց մեծ քննչի հետ խոսել  
ոռուսերեն, յետո յերկուսն ել պիսրին ասեցին, վոր իմ  
ասածը գրի:

Եղ վոր տեսա, ասի՞ բանս խարար ե, վոր գրվեց՝  
պրծմավ:

— Իսկ քանի՞ որ հիվանդացավ խաղեյինդ, — հար-  
ցնում ե են հայը նորից:

— Մի որ, ասում եմ:

— Ի՞նչն եր ցավում, ասում ե:

Ասում ե ու աչքերիս միջին մտիկ անում: Համար  
Խեչանը ենքան ել յերեխս չի, վոր շփոթվի: Խեչանը  
գիտի թե ինչ պտի ասի:

— Ամոթ չըմի, ասելը, ասում եմ, փորն եր ցա-  
վում, աղա:

— Իսկ հիվանդանալու առաջի որը վարակի եր  
ձաշեր հարցնում ե:

— Եղ բանը յիս գիտեմ վոչ, աղա, ասում եմ,  
յիս եղ որը մերին եյի գնացել:

Նա նորից «հըմ» արավ ու քննիչի հետ սուսերեն խոսեց, հետո ել իմ ասածը զբել տվեց, Նրանք խոսում են, իսկ իմ սիրաը դողում ե ուռի տերևի պես... Քննիչն ասում եր՝ «դա, նիմուժկա», իսկ հայն ասում եր, «նետնի գնայիտ... Տեսնում եմ, վոր քննիչն ասում ե՝ մի քիչ մեղավոր ե, իսկ հայն ել ասում ե՝ չե, մեղավոր չի...»

Նա՝ հա, նա՝ չե, նա՝ հա, նա՝ չե, վերջը եղ հայը (աստված նրան կյանք տա, յեթե կենդանի յե, իսկ յեթե մեռած ե՝ ողորմի հոգուն) դարձավ ինձ ու ասավ.

— Գնաւ:

Վոր եղ չասավ, վոնց վոր մի ծանր բեռուսերիցս վեր ունեն: Դուրս յեկա ու ասում եմ՝ «փառքդ շատ, տեսնես ում եյի մի կտոր հաց տվել, վոր առաջո յեկավ: Թեթե պրծա... Ու յեթե, ասում եմ ձեզ, են հայը չըլեր, ինձ դուզ Սիրեր կքշեյին, հողեց հոգի կըկորչեյի: Ովկ եր հարցնողը՝ մեղավոր ես, թե չե...»

Ես քննությունից մի ամիս յետը, նոր փորձանքի մեջ չընկնելու համար, յես սուս ու փուս վեր կացա ու հեռացա աղա Ակորի տնից: Իսկ նրա կնիկը, զեռ տուրին չբոլորած, մի ջահել մարդ արավ տան վրա...

Հիմի դուք կը հարցնեք թե՝ «ովկ եր զեղել»:  
Եղ բանը պետք ե ասեմ, մինչև եսոր ել չիմացան: Շատերն ասում եյին թե ընկեր մարզիկ են զեղել, մի քանիսն եւ, թե ինքն ե դեղ կերել: Իսկ թե ինչի՞ համար ե նա իրան դեղել եղ սկի չեյին ասում... Նա ինչի՞ պիտի դեղ ուտեր, հարցնում եմ, քանի վոր, փառք իրան, տունը լիքն եր ամեն բանով. հայը չեր պակաս, ջուրը չեր պակաս:

Մինչեւ եսոր ել, մեղքս ինչ թագցնեմ, միտքս տանջում ե նրա կնկա վրա... Թե չե, միտք եմ անում, նա ինչի՞ պետք ե դեղեր իրեն... Միտք եմ անում, միտք, ու բան չեմ հասկանում:

Ե՞ն, ինչեր ասեք չի պատահում աշխարհում...

## ՀԱՅՐ ՍԻՄՈՆԸ

Ուշ խավար յերեկո յե: Դուրսը շրխկոցով անձրե և գալիս այնքան վարար, վոր զյուղացիներին թվում և թե սկիզբն մի նոր ջրհեղեղի:

Դյուղական քահանա տեր-Սիմոնի տան առիքից կախված լամպի պղաոր լույսի տակ ընթերիքի յեն նոտած ինքը՝ հայը Սիմոնը, նրա կին՝ Մարթան և նրանց հյուր թեմական գլորոցների տեսուչ Մարյանը, վոր յերկու ժամ եր ինչ իջևանել եր այդտեղ: Նա գնում եր մոտակա նորաշեն զյուղի գլորոցը դիտելու, բայց անձրեկի և գիշերը շուտ վրա հասնելուն պատճառով, վորոշեց գիշերել քահանայի տանը և վաղ առավոտյան ճանապարհ ընկնել: Նա նոր եր տեսուչ նշանակվել և քահանայի տանն առաջին անդամն եր լինում: Յեզ յերեկի պատճառը դա եր, վոր տեր հայը ամեն կերպ աշխատում եր սիրաշահել հյուրին ու զանազան հարցեր տալով՝ խոսում եր շաբունակ.

— Ասում ես, զու տեսուչ եր, հա, հարցնում եր նա յեղակի ու հոգնակի: — Հըմ. լավ պաշտոն ե: Մեծ ոռճիկ կառրեք, ենպես չի... Հըմ... Ասել կուզի՝ չենովնիկ ես կամ վրա պես մի բան, համա չներ չունեք... Իսկ չներ ունենալը լավ բան ե, ենպես չի...

Հյուրը, վոր սաստիկ հոգնած եր մի ամբողջ գիշեր յերկաթուղով և հինգ ժամ ձիով ճանապարհորդելուց, գրեթե ակամա յեր պատասխանում քահանայի հարցերին և շարունակ մտածում եր, թե յերբ պիտի իր համար անկողին պատրաստեն, վոր մի քիչ հան-

գստանա: Միկնույն ժամանակ նա սաստիկ ձանձրանում եր այդ խոսակցությունից, բայց վորովհետև նա առաջին անգամն եր լինում այս տանը, աշխատում եր իրեն լուրջ և քաղաքավար պահել:

- Ասում ես, Նորաշին ես դնում, համ...
- Այո:
- Ենտեղի վարժարանը տեսնելու:
- Այո:

— Հըմ. Նորաշինը լավ տեղ է, համա ենտեղի վարժարաները ուրիշ տեսակ մարդիկ են... Հնենց ելիք, վոնց ասեմ: Նրանք վոչ մարդու պատիվ գիտեն, վոչ Աստծու... Կաթղիկոսը ինքն ել գա, զրանք բանի տեղ չեն դնիլ... Նրանցից մինը, զիտըմ չեմ, հայոց թե ուսաց մշակում, ասում են գրել ե թե, մթամ յև անխելք մարդ եմ... Եղ բանը ասում ե նրա համար, վոր յես հիվանդներ եմ լավացնում: Ասում են (յես չեմ ել կարդացել) գրում ե թե խի ա լավացնում... Տո, տնաքանդներ, բա թող անեմ մեռնեն... Ասում եմ ե, դրանք վոչ Աստծու պատիվ գիտեն, վոչ մարդու: Կաթղիկոսը ինքն ել վոր գա՝ բանի տեղ չեն դնիլ, ուր մեաց ինձ:

Յեվ հայր Սիմոնը ալեխառն միրուքը սղալելով՝ հառաչեց, ապա տեսնելով, վոր հյուրը ախորժակով չի ընթրում, նրա առաջը քաշեց լորի, բողկ, աղցան:

— Համեցիր, պարոնս, կեր, մի ամաչի... Ավասոս վոր պասին ես եկել, յեթե ուտիսին շնորհ բերեցիք...

Բայց Սարյանը այս անգամ հրաժարվեց, ասելով վոր արդեն կշատացել ե: Նա թեև շատ բան չեր կերել, սակայն յերկար անքնությունից ուտելու ախորժակ չուներ ու շարունակ քնելու, հանգստանալու մասին եր մտածում:

- Պահ, զարմացավ հայր Սիմոնը հյուրի սակա-

վակերության վրա,—ինչ կերար վոր կշտացար, տնաշեն: Դրանով մարդ կը կշտանա: Տղամարդը վոր մի պինդ յերկու-յերեք բաժին կերակուր չուտի, կարմ կշտանա... Համեցեք, անուշ արա:

Սարյանը կրկին հրաժարվեց: Այդ միջոցին բարձրահասակ և չորչորուկ իրեցկինը, վոր բոլոր ժամանակ անխոս և ձեռքերը կրծքին դրած, նստած եր ամուսնու կողքին, կամաց յելավ տեղից ու անձայն քայլերով անցավ մյուս սենյակը:

Կնոջ դուրս գնալը նկատելով, հայր Սիմոնը ծանր հառաչեց և ուղղվեց նստած տեղը:

— Ե՞ն, պարոնս, յես շատ անբախտ ծնող եմ, ասաց տեր-հայրը հառաչանքով,—քանի վորդի եմ ունեցել, բոլորն ել չարդ տարել են, մնացել ե մինը, են ել մի շարաթ կը ի հիվանդ ե, զիտըմ չեմ՝ ինչ ե պատահել... Յերեկ դարման եմ խաշել վրա տվել, հլա տեսնենք վոնց կլինի. յեթե լավանա վոչ՝ քարաբաղնիս եմ դնելու... տեսնենք:

Սարյանը, վոր դարձյալ հանգստանալու մասին եր մտածում և համարյա թե անուշադիր եր քահանայի ասածներին, նրա վերջին խոսքերի վրա սթափվեց կարծես:

— Դարման, բայց միթե դարմանը բուժում ե, հարցրեց:

Հայր Սիմոնը ժպտաց:

— Բաս, գիտես վոչ, վոր դարմանը լավ հեքիմ ե, ասաց նա միրուքը շփելով: — Դարմանը շատ լավ հեքիմ ե, մեր գեղացիներից քանիսին եմ լավացը: Ինչ տեսակ մրսած հիվանդ ել վոր ըլի, դարման խաշես վրա տաս կամ քարաբաղնիս դնես, են սհաթը կը լավանա... Քանիսին եմ լավացը...

Ընթրիքի վերջում հայր Սիմոնը Սարյանին առա-

ջնորդեց մյուս սենյակը ցույց տվեց հիվանդ վորդուն, վորը անկողնի մեջ, մի քանի վերմակով ծածկրած, հաղիվ շնչում եր ծանր ու ընդհատ շնչով, ապա այստեղից դուրս գալով՝ առաջարկեց նրան թուղթ խաղալ, Բայց Սարյանը, վորովհետև քունը տանում եր, ստեց թե ինքը թուղթ խաղալ չգիտե բոլորովին:

— Վահ, — զարմացավ հայր Սիմոնը. — Մեր գեղացիները տմենքը գիտեն... Դե լավ, ասաց նա, ցավելով վոր թղթախաղը գլուխ չեկավ, — վոր եղած ե, դու կարդացած մարդ ես, լավ-լավ հեքյաթներ շատ կիմունաս, մի հեքյաթ պատմիր լսենք, Յերկար գիշեր ե, մարդու քուն չի տանում սկի:

Սարյանը դարձյալ ստեց, վոր ինքը վոչ մի հեքիաթ չգիտի: Հայր Սիմոնը կը ին զարմացավ, թե ինչպես ե, ուսում առած մարդը հեքիաթ չգիտի:

— Դե վոր եղած ե, — ասաց նա քիչ լոկուց հետո, — յս մի լավ հեքիաթ գիտեմ, պատմեմ լսի... Երկար գիշեր ե, մարդու քուն չի տանում սկի... Ես հեքիաթը շատ լավ հեքիաթ ե: Մի անգամ նորաշենի տանուտերին ու գրագրին պատմեցի, նրանք շատ հավանեցին...

Սարյանը նորանջելով ձգեց մղմղացող, կարծես հողացավով բռնված վոտքերը և տիրությամբ նայեց քահանայի յերեսին, ապա ժամացուցին: Ժամի 12-ե, յերբ պիտի հանգստանա...

Մինչ այդ, հայր Սիմոնը տախտի վրա տեղավորվելուց հետո, վոտքերը ծալից տաճկական ձևով և միւրուքը մի քանի անգամ շփելով՝ սկսեց ծանր ու հանդիսավոր յեղանակով:

— Յեղել ե, չի յեղել, վաղ ժամանակ մի թագավոր ե յեղել. ես թագավորն ինքան վոսկի, գանձ ու

երծաթ ե ունեցել՝ ել դու պրծար: Բայց ունենում ե մենակ մի տղա, ել զատ չե...

Սարյանն անհանգիստ, ասես ատամնացավով բռնված, շարունակ շուրջն եր նայում... Նրա աչքերը մղկում եյին, կարծես արտասուրից թրջված, իսկ կոպերը փակվում եյին ինքնարերաբար:

— Ես թագավորի տղեն, — շարունակում եր հայր Սիմոնը տերողորմայի հատիկները շխկացնելով, — գլունում ե գեպի գերբի աշխարհը եր սիրած աղջիկը բերելու: Եղ աղջիկն ել ենքան, ենքան սիրուն ե ըլրւմ, վոր ել պրծար: Մի խոսքով, ինչ ասեմ, հուրի-մալաք... Հա, պարոնս վոր դու ես, ես թագավորի տղեն ճամփա ե ընկնում ու գնում: Գնում ե, գնում, շատն ու քիչը աստված գիտի...

Յերկար պատմում եր հայր Սիմոնը, մեկ ել, հանկարծ, գլուխը բարձրացնելով՝ նայեց Սարյանին: Տեսուչը ննջում եր: Տերտերը կամացուկ շարժեց նրա ծունկը և զարթեցրեց կը ին:

— Այ, լավ տեղն ենք հասել, պարոնս, լսեցեք, ասաց նա, հյուրի գեմքին նայելով: — Բունդ տանձւմ ե, վոչինչ, հիմի կը վերջացնեմ՝ կը նենք... Հա, պարոնս վոր դու յես, թագավորի տղեն գնում ե, գնում...

Սարյանն աչքերը տրորելով յելավ տեղից: — Ներեցեք, տեր, հայր, գլուխս ցավում ե, — ասց նա գլուխը բռնելով:

— Այ հիմի կը վերջացնեմ, քիչ ե մնացել: Սարյանը գլուխ բռնած սկսեց անց ու դարձ անել, ե մի քանի բողեյից կը կին հայտնեց, վոր գլուխը սաստիկ ե ցավում և թե լավ կլինի, վոր եր համար անկողին պատրաստեն:

Հայր Սիմոնը տիրեց, վոր հեքիաթը կիսատ մնաց,

բայց կարգադրեց իրիցկնոջ հյուրի համար անկողին պատրաստել:

Տասը ըռպե անց Սարյանը պառկած եր անկողնում:

Նրա սնարի մոտ կանգնել եր հայր Սիմոնը և խորհուրդ եր տալիս, վոր նա գլխին մի բան քսի, վորպեսզի ցավը շուտով անցնի: Սարյանը վոչինչ չեր կամենում, բայց հայր Սիմոնը պնդում եր, վոր նրա գըլուխն անպատճառ մըսել ե, անհրաժեշտ մի բան քսել՝ քացախ կամ իծի ճրագու:

— Վհչ, վհչ, վոչինչ հարկավոր չե, — ասում եր Սարյանը գլուխը վերմակով ծածկելով:

Բայց հայր Սիմոնը մնում եր աշուրդվելի և իր միշոցներն եր առաջարկում՝ քացախի շիշը ձեռքին բռնած:

— Քանիսին եմ լավացրելու, Եթիր ամոթ և ինձ համար իմ զոնաղի գլուխը ցավի ույես դարման չանեմ...

— Թհղ, պարոնս, ենպես քսե՞մ վոր — չիմանաս... Մի անգամ ել Քիլիսայի տերտերի, են նորընծա տերնովսեփը գիտես, նրա գլուխն եր իդպես ցավում... Նա ել քեզ պես հեքիաթը կիսառ թողեց, թե՝ «գըլուխս ցավում ե»: — «Ո՞՞, ա տեր», հարցըլի թե՝ «գիտըմ չեմ»: Վերկալա քացախ քսեցի, են սհաթը անցկացավ, նա ել քեզ պես «չեմ ուչուժ» եր անում, համագերջը լացավ: Հիմի քոնն ե, հլա թհղ, հնպես քսեմ վոր չիմանաս...

Ու հայր Սիմոնը քացախը լցնելով բռան մեջ քսեց Սարյանի ճակատին, քունքերին, կրկնելով. «Այ հիմի վոր կը լավանա, հիմի վոր ցավը կանցնի: Ոխայ, ոխայ...»

Սարյանը ցնցվեց և բռնեց հայր Սիմոնի ձեռքը:

— Բավական ե, բավական ե, ասաց նա անկողնի մեջ նստելով, — բավական ե, չոյշիավոր չե, տեր հայր: Բավական ե...

Մի քանի ըսպեյից հետո հայր Սիմոնն անցավ մյուս սենյակը քթի տակ ինչ-վոր ըրթմնջալով:

Սարյանը իրեն թեթևացած զգալով՝ վերմակը քաշեց գլխին և պատրաստվեց քնելու, սակայն, փոքր անց, հարեւան սենյակից ծանը հառաջանքի հետ դարձյալ լսեց հայր Սիմոնի ձայնը, վոր ասում եր, «Ոխայ, ոխայ... այ եղախս, եղախս... ոխայ, ոխայ...» Հիմա ել, յերեկի, վորդու գլուխն ե քացախ քսում, — մտածեց Սարյանը:

Յեվ, փոքր անց, քնեց սպանվածի պես, իսկ առավոտյան բավական ուշ զարթնելով՝ հայր Սիմոնին դարձյալ իր անկողնի մոտ դտավ քացախի շիշը ձեռքին բռնած:

— Լավ ես հա, հարցրեց նա, — ինչ լավ ե... իսկ յես ասի՞ թե ցավը չի անցել, նորից քսեմ... Տեսար... ասի վոր քացախը լավ ե, հըմ...

Յեվ հայր Սիմոնը գոհունակությամբ ժպտաց:

Քանի մի լրտե անց Սարյանը հագնվեց և պատրաստվեց ճանապարհվելու: Գիշերվա անձրելը դադարել եր վաղուց, պարզ յերկնքից այժմ նայում և պայծառ արելը. ցեխոտ գետնից, խոնավ կտուրներից և պատերի տակ թափթփված հին գերաններից առատ գոլոշի եր բարձրանում, ինչպես յեռացրած ջրով լի կաթսայից: Քահանայի հարցին, թե ինչու Սարյանը առանց թեյ խմելու, առանց հաց ուտելու և գնում, նա պատասխանեց, վոր ուշացել ե և ուղում ե վորքան կարելի և շուտ տեղ հասնել, վորովհետեւ կարեոր, անհետածգելի գործ ունի:

— Հա... Դե վոր եղախս ե — գնա, — ասաց հայր Սիմոնը և ինչ վոր մտածելով՝ ավելացրեց. — Ի՞ բան եյի ուղում ասել, պարոնս, — քեզ վոչիարի բուրդ հարկավոր չի ըլեն:

— Վոչ, — պատասխանեց Սարյանը:  
— Եժան կը տան: Փութը ոխտը մանեթով: Ու-  
րիշները տասնով, ըննով են ծախում, յես, քու խա-  
թեր համար՝ ոխտով կտամ:

— Հարկավոր չե՞:  
— Ափսառ, լավ բուրդ ե, գիտե՞ս, վոր տեսնես  
քեզդ կդա...»

Սարյանը լուր եր:  
— Հա, դե վոր եղանակ ե, պարոնս, շարունակեց  
տեր-հայրը, — յեթե դու ուզում չես, ինդրեմ, իմ խաթեր  
համար, յեթե քաղաքում բուրդ ուզող ըլի, ասա իմ  
կուշտը գան, յես եժան կը տամ:

— Շատ լավ, խոստացավ Սարյանը:  
— Լավ կենաս, մտահան չանես այ, քու լավությու-  
նը մոռանալ չեմ:

— Մնաք բարով, — ասաց Սարյանը ձին հեծնելով:  
— Գնաս բարի, Աստված քեզ հետ, — բարեմաղ-  
թեց հայր Սիմոնը և նորից ինչ-վոր մտածելով՝ ավե-  
լացրեց. — Յետ դառնալու վոր ըլես, պարոնս, — ելի  
մեր տուն համեցիր...

## ՏԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ

### I

Սիրելի Դավիթ ինամի,

Նախ և առաջ ընդունիր իմ բարեները և որհնու-  
թյունը: Մենք կանք վողջ և առողջ: Տա Աստված, վոր  
դուք ել լինեք վողջ և առողջ և գործով աջողակ և սըր-  
տով ուրախ: Ամմեն: Յեթե կուզես գեղի կողմից հար-  
ցանել, փառք իրան, ամեն բան լավ ե: Զերոնք ել լավ  
թի: Մի խոսքով՝ հայի քեզը լավ ե:

Եսքանը՝ ընդհանուր, Հիմի գամ իմ ինդիքին:  
Հայտնի ե ամենքին, դու ել գիտես, խնամի Դա-  
վիթ, վոր յես քառսուն տարի ե ահա քահանա իմ մեր  
գեղում: Արտերի, այդիների և կենդանիների տեր՝ յես  
յերեք աչք չեմ տնկել ժողովրդի տված յեկամտի վրա,  
իսկ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, յերք  
գեղացիք զրկվեցին որվա հացից, յես նույնիսկ հրա-  
ժարվեցի կալամուտ վերցնելուց: Ես — բոլորը գիտեն:  
Ինչ վերաբերում ե պաշտոնիս, հայտնի ե Աստծուն ու  
դու ել գիտես, վոր իմ ծխականների գործը յերեք  
յերեսի վրա չեմ թողել: Բայց արի տես վոր քառսուն  
տարվա իմ քահանայությունը չի զնահատվում հոգեոր  
իշխանության կողմից: Քանի՛-քանի՛ առաջնորդներ յե-  
կան ու գնացին, խոստացան պարզեաբել, բայց վոչ  
վոք իր խոստումը չկատարեց: Մի անգամ Աթենյան  
յեպիսկոպոսի առաջ, յերբ նա դուրս եր յեկել թեմը

շրջելու, ձի քշեցի ինձնման, ասավ՝ «կեցցես, տեր Հայ-  
րապետ, պետք է քեզ պարզեատրել»: Բայց գնաց և խոս-  
տումը չկատարեց: Սաթունյան առաջնորդի մոտ, յերբ  
նրան պատվում եյինք գեղում՝ մի օյլաստի ասի: Շատ  
գովեց ձենս ու հասակս, խոստացավ ելի պարզեատրել  
բայց խոստումը չկատարեց: Հետո, ես յերեկի իմացած  
կլինես, Ավանյան առաջնորդի ձին, մի լճվ այլր կամ,  
ինչպես կառավարիչն ինքն եր ասում, «ընտիր աղնվա-  
ցեղ» ձի, հանձնված եր վանական կալվածների կառա-  
վարչին, Մովսես-բեգ են ասում՝ «նրան՝ պահելու: Իսկ  
առ եղ ձին շահագործում եր: Յեղ ու պանիր եր վեր-  
ցնում գեղացիներեց և թողնում, վոր նրանք իրանց ձի-  
անքը «ազնվացնեն»: Յես այդ բանը հայտնեցի սրբա-  
զանին. նա շնորհակալ յեղավ և, վերջը, խոստացավ պար-  
զեատրել ինձ: Բայց խոսքն ելի չկատարեց: Ապա, ինչ  
թագունեմ, Ալթունյան սրբազանի համար սեղան տարա-  
մի անդամ՝ զանազան բարիքներ գեղական, զոհ մնաց սր-  
բազանը. «Աֆարիմ, տեր-Հայրապետ, ասավ, ափարիմ»,  
ու ելի խոստացավ պարզեատրել, բայց իմ քոռ բախ-  
տից, նա ել շուտով հեռացավ պաշտոնից ու չկարաց  
խոսքը կատարել: Վերջը, խնամի Դավիթ, զլուխող ինչ  
ցավեցնեմ, իմ աներ տղա բժիշկ Սարյանը դիմել եր Եջ-  
միածնի յիպիսկոպոսներեց մեկին, վոր միջնորդի ինձ  
համար, բայց զոծն ելի զլուխ չեկավ:

Հիմա, սիրելի Դավիթ ինամի, լսել եմ, վոր մեր  
նոր առաջնորդ քո մոտ բարեկամն ե: Յեթե հաջողեց-  
նես, վոր սրբազանը ինձ պարզեատրի, տալով՝ կամ  
կամիւավիա, կամ խառափիլոն, կամ ավագություն, կամ  
լանջարիա, կամ գավաղան, այն ժամանակ քու պա-  
տիվը իմ աչքում ավելի բարձր կը լինի, քան իմ անոր  
տղա բժշկի պատիվը, իսկ անունդ ել—ել ավելի կտա-  
րածվի մեր գալառի ժողովրդի մեջ: Իսկ յեթե յեկող ա-

մառ գաս գեղը—մի ենպիսի քեֆ սարքեմ քու գլխին,  
վոր յերկար հիշվի բոլորի կողմից:

Ի վերջո, հույս ունեմ, խնամի Դավիթ, վոր խըն-  
դիրս անկատար չես թողնի:

Մնամ քու բարին կամեցող՝  
Աղոթարար՝ Տեր-Հայրապետ

## II

Սիրելի Դավիթ ինամի.

Նախ և առաջ ընդունիր իմ բարեները և իմ որ-  
շնությունը: Մենք կանք վողջ և առողջ: Տա Աստված,  
վոր գուք ել լինեք վողջ և առողջ և գործով աջողակ  
և սրաով ուրախ: Յեթե կուզեք գեղի կողմից հարցանել,  
փառք, ամեն բան լավ ե: Զերոնք ել լավ են: Անցած  
որը հերդ քուռակի գնով յերկու գերեզմանաքար առավ  
իրա ու պառավի համար, վոր մեռնելուց յետը քեզ նե-  
ղություն չտա, վոր ամեն բան պատրաստ լինի: Մի լսու-  
քով՝ հայի քեֆը լավ ե:

Եսքանը՝ ընդհանուր: Հիմի գամ իմ գործին,  
Քու նամակն ստանալու որը, խնամի Դավիթ, ի-  
րիցկնոջն ասի, վոր զաթա ու կաթնահունց թխի, յես  
ել կարագ ու մեղը վերցրի, վառիկ ու ձու, ու եսպես՝  
խուրջինս լիքը եքսի որը՝ առավոտ ծեզին, ձիով ճամ-  
փա ընկա: Իրիկունը հասա քաղաք և մյուս որը ներ-  
կայացա սրբազանին: Աֆարիմ առաջնորդ: Շատ քա-  
զաքավարի մարդ ե: Վոր մտա՞ տեղիցը վեր կացավ,  
հետո նստացրեց՝ խափե խմացրեց: «Յես ձեր մասին  
լսել եմ, տեր-հայր, ասավ, բայց չեյի կարծում թե՝ այդ-  
քան ծեր եք: Ժամանակ ե, այս, ասավ, վոր դուք զնա-  
հատվեք .. Յեկ կուզեյի վոր, ասավ, այդ բանը լինի իմ  
որովք... Ինչպես յերեում ե, հասակս և սիպտակ մի-

ըուքս լավ տպավորություն արին որբազանի վրա։ Նրա խոսքերից հետո յես՝ ինչպես կարգն ե, շնորհակալություն արի նրա ուշադրության համար և պատմեցի, վոր, չգիտեմ ինչն իմ ծառայությունը մինչև հիմի նախկին առաջնորդները չգնահատեցին։ Ու հասկացրի վոր ինձանից ջահել տերտերները շարունակ պարզեներ են ստանում կամիլավկա, խառափիլոն կամ լանջախաչ, և որինակ բերի մեր շըջանի գործակալին, վոր յերեկ մեկել որված ոճված և—գործակալություն և ըստացել՝ վրեն ել կամիլավկա... «Շատ ել, ասի, Ներսիսյան դպրանոցից ե, ինձանից լավ և պատարագ, կնունը ու թաղում անում» և, առանց թագնելու ասի՝ վոր Աստծու մոտ ել պետք և մարդ ունենալ։ Իմ այս խոսքերի վրա առաջնորդը մի առակ վեր բերեց Աստվածաշնչից թե՝ «Վոր բարվոք վերակացու լինին իրեցունք՝ կրկին պատվո արժանի յեղիցին. մանավանդ վոր աշխատեցին բանիվ և վարդապետությամբ։ Քանզի ասե գիր. Մի կապեացես զցուուկ յեղին կալուտվո, և արժանի յե մշակն վարձու յուրո»։ Ու վերջը խոստացավ, վոր իմ պարզեի համար դիմում կանի, ուր և ում հարկն ե։

«Դուք ապահով գնացեք, տեր հայր, ասավ.—յես ամեն ինչ կանեմ»...

Հիմի, սիրելի Դավիթ ինամի, զանո ու քեփը իմ վրա։ Քանի վոր դու հաջողեցրիր ես բանը—ել մոռանալիք չի ըլի։ Ամառը արի—մի ենպես քեփ սարքեմ զիմիդ, վոր մեր շըջանը տեսած։

Մնամ աղոթարար  
Տեր-Հայրապետ

## III

Սիրելի Դավիթ ինամի.

Նախ և առաջ ընդունիր իմ բարեները և որհնությունը։ Մենք կանք վողջ և առողջ։ Տա Աստված, վոր դուք ել լինեք վողջ և առողջ և գործով աջողակ և սրտով ուրախ։ Յեթի կուզես գեղի կողմից հարցանել փառք, ամեն բան լավ ե։ Զերոնք ել լավ են։ Ես քանի որ և հերդ իրա ու պառավի անունը գերեզմանաքարերին գրել ե տալիս, վոր մահից հետո քեզ նեղություն չտա, և ամեն բան պատրաստ լինի։

Եսքանը՝ ընդհանուր, հիմի գամ իմ բանին։

Խնամի Դավիթ, ցավելով պիտի ասեմ, վոր քուրաբեկամ առաջնորդն ել իր նախորդների պես, ստախոս գուրս յեկավ. խոստացավ և վոչինչ չարավ։ Գիտըմ չեմ իմ բախտիցն ե, թե մի ուրիշ բանից՝ իմ գործն եսպես շրջանի և գնում։ Բայց իմացա, թե ով է խափանել։ Անցած շարթին քաղաքում եյի, կոնսիստորի ծառայողներից իմացա, վոր ամեն բան խանգարել ե ես մեր խլեզ գործակալը։ Հիմի կասես—վճնց։ Առաջնորդը զրում ե եղ անիծածին (ինչպես կարզն ե) թե եսպես, ուղում եմ տեր-Հայրապետին պարզե տարքու կարծիքը ինչ ե, վորպես գործակալ։ Ես մեր գործակալը (այ զբա կարգը խոսվ կենա իրա զիմին) ինչ պատասխանի, վոր լավ լինի... վերցնում ե զրում թե տեր-Հայրապետը հնքան անկիրթ մարդ ե (մինչև անգամ գրել ե թե «Արարատն» ստանում ե՝ չի կարդում, կարծես ուրիշ բան շատ եմ կարգում, «Արարար» մնում ե)։ Մի խոսքով, Գրում ե՝ թե ենքան անկիրթ մարդ ե, վոր վաչ մի բանի արժանի չի, և յեթե արժանի լիներ (եսպես ել գրում ե) լինքը կինզրեր սըրքանին եղ մասին... կերած բողկերին տեսեք։ Բայց եստեղ ենքան գործակալը չի ինձ բարկացնում. դա

արդեն են զլիսից լիրը յեկել ե, լիրը ել մնում է: Ինձ  
բարկացնողը ավելի քու բարեկամ առաջնորդն ե... Ե՛լ  
ինչ առաջնորդ, Ել ինչ բան, վոր իրա խելքով նստել-  
վերկենալու տեղակ—լսում ե մի ինչ-վոր գործա-  
կալի: Այ քեզ առաջնորդ... Մի խոսքով: Ինչ-վոր ե:  
Ափոս իմ գաթա, մեղք ու կարագ: Ափոս իմ վառիկ-  
ներ... Ե՞ն, ես ել եսպես անցավ: Ո՞վ չի կերել մեր  
հացը ու, հետո, կծել մեր վառը...

Բայց հիմի տես, խնամի Դավիթ, ինչ եմ ասում:  
Ես քանի որը Սերովիք յեպիսկոպոսը մեր զեղի  
հին ձեռագիր Ավետարանը տարալ Եջմիածին, Յեր-  
կար ժողովուրդը չեր ուզում առև, թե մեղ ել պետք  
ե հիվանդների, ծննդկանների և ցասումի ժամանակ:  
Շատ խոսեցի, հասկացրի, թե Եջմիածնի համար և  
տանում սրբազնը, թե ևս Ավետարանի տեղը իսկա-  
պես Եջմիածինն ե, վերջո՞ համոզեցի մի կերպ ու  
տվի: Գրա համար սրբազնը խոստացավ ինձ մի բա-  
նով վարձահատուց լինել: «Տեր-հայր, տսավ, ձեր յե-  
րախափը չեմ մոռանաւ: Յես ասի, «Ծնործակալ եմ,  
սրբազն, վարձատրություն ինձ հարկավոր չի, յես  
հաց ել ունեմ, անասուններ ել, տանիցս սարքի գու-  
թան և գուրս գալի», ասի, ու պատմեցի, վոր եսքան  
տարվա քահանա յեմ՝ հոգեւոր կառավարությունը ինձ  
զեռ մի բանի տեղ չի զրել, իսկ ինձանից ջահելները...  
Նա միտքս հասկացավ և խոստացավ միջնորդի պար-  
գեի համար—նույնիսկ կաթողիկոսի առաջ... Հիմի,  
խնամի Դավիթ, լսելով, վոր զու Սերովիք յեպիսկո-  
պոսի լավ ծանոթն ես, նա յել, ասում են, Եջմիածնից  
շուրջուտ քաղաք և գալիս, խնդիրքս ե, վոր տեսնե-  
լիս միտք զցես թի՝ տեր-Հայրապետի պարզեի բանը  
վնաց յեղավ, Յու կողմից ել ասա ինչ զիտես: Հույս  
ունենամ, վոր չես մոռանաւ:

Խնամ աղոթարար և անմիթար  
Տեր-Հայրապետ

## IV

Վերջին այս նամակն ստանալու որից անցել եր  
հաղիվ մի տարի, խնամի Դավիթը լսեց մի որ, վոր  
տեր-Հայրապետը հիվանդ բերված և քաղաք և պառ-  
կած և քաղաքացին հիվանդանոցում: Տեր-Հայրապետը  
հիվանդ... Յերկաթե առողջություն ունեցող տեր-Հայ-  
րապետը հիվանդ, մատծեց խնամի Դավիթը և անմի-  
ջապես այցելեց նրան:

Տեր-Հայրապետն իսկապես հիվանդ եր: Եր հաղի  
մարմնով մահճակալին պառկած նա ծանր շնչում եր  
և խոշոր աչքերը պրապում: Խնամի զերի մի արծիվ  
կամ ինչպես բանտարկված վագր, անհանդիսա նա-  
յում եր նա պատերին, կոռքի մահճակալներին, լու-  
սամուտներից գուրս, և թվում եր, վոր նեղ են զալիս  
նրան մահճակալը, ողը, սրահը, ուր պառկած եր, և  
առանարակ ամեն ինչ այդ հիվանդանոցում: Երա բո-  
լոր զգեստները հանել եյին և հազցրել մի յերկար դորշ  
խալաթ: Խնամի Դավիթը նրան ճանաչեց իր յերկար  
ձերմակ միրուքից, վոր կարապի թի նման փոփել եր  
նրա վերմակի վրա:

Խնամի Դավիթին տեսնելով նա շատ ուրախացավ  
և միաժամանակ շատ տիրեց, ինչպես այդ պատահում և  
բոլոր հիվանդներին: Առաջինը խոսեց տեր-Հայրապետը.

— Տեսնում ես ելի՛, հառաչեց նա,—սարի պիս  
մարդը շուռ ա յեկել... Նառ ուզա եյի՛ չոքացըին...

— Ե՞ն, տեր-հայր, ինչ բան և հիվանդությունը,  
հազարավոր մարդիկ հիվանդանում են ու լավանում.  
միտքինչ բան ե, սիրադ մի կոտրի սրտ համար,—միտք-  
իւթյուն խնամի Դավիթը ծոր տվող ձայնով և հիվան-  
դապետը կամ պարզեցնելու համար խոսք բացեց տեր-հոր վեր-  
ջին նամակի վրա.—գիտես ինչ, տեր-հայր, յելիու որ ա-

ուած տեսա Սերովիք յեպիսկոպոսին, — քու նամակից հետո նա առաջին անգամ և քաղաք գալիս: — Տեսա ու խոսեցի պարզեի մասին... Գիտես ինչ, տեր-հայր, — շարունակեց խնամի Դավիթը մեղմաբար, վերմակը տեր-հոր վրա ուղղելով. — յեպիսկոպոսն ասում և՝ պարզեի խնդիրը ծանր հարց է, կաթողիկոսի մոտ գնալ և միշտել — գժվարանում է, բայց, ասում է, վոր գյուղեց տարված Ավետարանի մասին մի գիրք և գրելու, այդ գրքի մեջ ահա, ասում է, շնորհակալություն կհայտնեմ տեր-Հայրապետին, վոր եսպես մի բան արավ, այսինքն ձեռապիր Ավետարանը ավեց...

Հիվանդը, վոր բոլոր ժամանակ ուշադիր լսում եր խնամի Դավիթին, հանկարծ դեմքը խոժոռեց և բացականչեց.

— Հա, դրանց բոլորի ել... Զիմն ել ստախոսներ են... Վոչ մնին ել հավատում չեմ...

Հիվանդի շնչառությունը ծանրացավ և միրուքն սկսեց դողդողալ վերմակի վրա:

— Վոչ մնին ել հավատում չեմ... Դրանց վոչ շնորհակալությունն ե ինձ պետք, վոչ պարզե՞ս... Ուզըմ չեմ, հարկավոր չի. յես արդեն խառափիլոն ել ունեմ, կամիլավկա եւ, լանջախաչ ել...

— Հարկավոր չի, ել բան հարկավոր չի, — շարունակեց նա խուլ ձայնով. — վոչինչ ել հարկավոր չի. յես արդեն ամեն բան ել ունեմ...

— Վորտեղից, ինչպես, — հարցրեց խնամի Դավիթը կամաց, շփոթված, հետաքրքրված:

— Վորտեղից... Վորտեղից պըտի ըլի, կամիլավկան առել և Միքայել վորդիս, խառափիլոնը Արտաշես վորդիս, իսկ լանջախաչն ու գավազանը՝ յես եմ շինել ավել յեկեղեցու կոտրած խաչերից... Թող գնան հիմի դրանց բոլորի ել հերն անիծած...

## ԾՈՎԱՆՑ

### I

Յեղբայրների մեջ կոիվ եր ընկել:

Յերկու ամիս առաջ, այսինքն հոր մահից անմիջապես հետո, յերբ նրանք իրանց ունեցածը բաժանեցին յերկու հավասար մասի — ավելացավ մի կով հորթը հետը: Մեծ յեղբայրը գտնում էր, վոր կովը իրեն կը-հասնի, վորպիս ավագի, վոր ավելի աշխատանք ույներախտիք ունի տան վրա: Փոքրն, ընդհակառակը, պընդում եր, վոր կովը պիտի մնա իրեն իրու կրտսերի, վոր ավելի քիչ և ոգտվել հայրենական տնից:

— Եղպես ես հարգում մեծից համ, ասում եր ավագ:

— Բա զո՞ւ, պատասխանում եր կրտսերը:

Մեծը զարմանում եր փոքրի ագաճության վրա, փոքրը մեծի աչքածակության: Ու վեճը՝ շարունակում եր այսպիս յերկու ամիս, և յերկու ամիս շարունակ նրանք կովը խում ելին իրար ձեռքից ու փախցնում ամեն մեկն իր գոմը: Բայց քանի վոր ժամանակը դարուն եր և չեր կարելի կովն որերով տանը փակել, ուստի մի կոմ յերկու որ հետո նորից խառնում ելին նրան գաշտ գնացող նախընին: Յերեկոյան գեմսակայն, յերբ կովը գառնում եր հանդից — ամեն մեկն աշխատում եր փախցնել նրան իր դուռը: Այս բանը կրկնվում եր գրեթե ամեն յերեկո թե յեղբայրների և թե գումար կանանց կողմից: Իսկ շատ հաճախ փախցնում նրանց կանանց կողմից:

Այսին հորթին, վոր անկարելի լինի մորը կթել։ Բայց գորովհետև այդ կովը, — ավելի լավ ե տանք նրա անուը — Ծովանը՝ շատ համեստ կովերից եր՝ թույլ եր տալիս կթեն իրեն և առանց հորթի։ Նա առանձնապես համակրում եր միծ յեղբոր կնոջը. կթելու ժամանակ սա կուրծը չեր սեղմում, ինչպիս փոքր տիրոջ կինը, այլ յերկու մատով խնամքով հուպ եր տալիս պտուկները և շուտշուտ կաթ քսում նրանց։ Այս բանը Ծովանին շատ եր դուր զալիս, ու ամեն անդամ հանդից դարձին — ուղիղ միծ յեղբոր դուռն եր գնում — դեպի հին գոմը։ Նա, ասենք, անհորթ կթել թույլ եր տալիս և փոքր տիրոջ կնոջը, բայց սիծ դժկամությամբ։ Յերբ այդ բարձրահասաւկ կինն իր չոր մատներով ձիգ եր տալիս պտուկները՝ Ծովանը ցալից բարձրացնում եր միջը, աչքերը խփում եր և վաճառերը վեր ու վար անում։ Յեկ կովի այս արարմունքը — վոր ովլ քշում՝ զընում եր, ով կթում կթվում եր — ջոկ-ջոկ բարկացնում եր յեղբայրներին և նրանց կանանց։

Սատկելու անասուն ա, սատկելու, — ասում եյին նրանք հուզված, և ծեծում եյին նրան։ յերեմն մեկի բակում կթվելու միջոցին մյուս բակից քարով, փայտի կտորտանքներով խփում եյին նրա կողերին, մեջքին ու զիլին։ Յեկ կովը տարակուսած չեր հասկանում ինչն համար և այս բոլորը, ինչ գարունը բացվել ե ինքը վոչ մի այդի, վոչ մի բանջարանոց չի մտել յերեխայի հարու չի տվել, վորեւ և խոտի դեղից չի կերել։ Մտածում եր, մտածում և վոչինչ չեր հասկանում։ Ու տերերի բարկությունը մեղմելու համար՝ աշխատում եր վորքան կարելի և հնապանդել նրանց, վոտ չշարժել կթելու ժամանակ՝ վորքան ել սպուկները ձիգ տան։

Բայց վորքան ավելի եր հնապանդում — այնքան

ավելի եյին բարկանում տերերը։ Յեկ Ծովանը մնում եր մոլորված։

Դա մի կարմիր կով եր — յեղջուրների ծայրերը յետ գնացած, Մեջքն ուղիղ եր, յետի մասը փոքր ինչ տափակ՝ թամբի նման, վիզը հաստ եր, բոխախը կախ, գլուխը դիք, ձախ ականջի ծայրը կտրած եր նշանի համար, իսկ աջ ազգը խարանած «Ա» տառով, վոր առաջին հայացքից պարզ չեր յերեւմ և թվում եր շան կծածի հետք։ Յեկ վորովհետև ջահել եր — մազերը կոկ եյին ու փայլուն՝ ոճած վարսերի նման։ Կուրծը միծ եր ու սպիտակ, յերբ քայլում եր ավելի եր միծամում և աչքի ընկնում կարմիր փորի տակ։ Մաքրասեր ու սակավապետ եր, աղբոտ տեղեր յերբեք չեր նստի, անձրեների ժամանակ սիրում եր կանգնել բաց տեղ և թափառա աչքերով նայել այդ զարմանալի ջլորին, վոր թափվում եր վերեկից — հայտնի չե ում ձեռքով և ինչն համար։ Առաջ նա շատ ուրախ և աշխույժ քով և կինչն համար։ Կուրծը սպիտակ, որինակ, պողերով ցելերը քանդելով եր, կպատահեր, որինակ, պողերով չելերը քանդելով եր, և զլուիր թերած՝ կըկովեր հասակակիցների հետ, կը և զլուիր թերած՝ կհաղթվեր, բայց յերբեք չեր կորցնի իր զվարթությունը։ Վերջին յերկու ամիսը սակայն տիպությամբ խուսափում եր այդպիսի կոփներից։ Այժմ նրա խոշոր աչքերը լի եյին անհուն թախծով ու տիրությամբ։ Արոտի ժամանակ նրա աչքերը հաճախ արցունքուում եյին և նա մոլորված՝ կանգնում եր մտածումների միջընկած։ Մտածում եր տերերի վերաբերմունքի մասին և խորը հասաչում քթածակերով։ Հառաչում եր ու հիշում եր ջահել որերը, յերբ բոլոր տնեցիներն այնպես փայտայում եյին իրեն։ Հիշում եր — յերբ հորթ եր, ուրախ թոշկոտում եր, մտնում տերերի տուն, շոր եր ծամում, ջուր եր խմում ամաններից... և տերերը յերբեք չեյին ծեծում իրեն։ Ի՞նչ լավ եր... Հիշում եր Ծովանը չեյին ծեծում իրեն։

վանը և այն որերը, յերբ առաջին հորթն եր ծնել... Ո՛, ինչ որեր եյին... Ինչպես եյին ինսամում իրեն մինչև ծնելը: Տերերը՝ խմբով, ջոկ-ջոկ, գալիս կանգնում եյին կողքին և մեղմությամբ, քնքշանքով շփում իր մեջքը, գլուխը, կողը. յերեմն ձեռ եյին տալիս կրծին, վոր զարմանալի կերպով ուռչում-մեծանում եր որեցոր... Ո՛, յերբ ձեռ եյին տալիս կրծին, ինչպես խուտուտ եր գալիս, ցավում... Բայց ինչ քաղցր եր այդ ցավը: Հապա առաջին կիթը... Դա զարմանալի բան եր: Տերերը՝ մեծ, փոքր, հավաքվել եյին իր շուրջը՝ Մեծ տերը քորում եր իր մեջքը, իսկ նրա կինը կթում եր կուրծը շփելով... Ա՛խ, այդ որը, ինչ լավ եր: Կուրծը թեև ցավում եր, բայց ցավը քաղցր եր նոր կանաչի նման: Այդ որերը յերեխաները հաց եյին տալիս իրեն, իսկ մեծերը բերում եյին մի շատ համեղ ուտելիք, վոր ջուր եր—ջուր չեր, բայց ջրի պես եր և մեջը հացի կտորներ եյին լինում: Հապա յերբ հանդից գալիս եր տուն—ինչ ինդությամբ, ուրախության ինչ աղմուկով եյին դիմավորում իրեն...

Իսկ ինչու հիմա բոլորը փոխվել են այսպես: Ինչու նրանք ել թշնամի զարձել... Ծովանը տերերից բացի մյուս մարդկանց համարում եր թշնամի: Տերերը պաշտպանում եյին իրան, քույրերին, մորը, հորաբույրերին, խոտ են տալիս, ձմեռը ջուռմ են, սրբում են գոմը և քորում իրենց, իսկ թշնամիները—չեն թողնի գունչդ մեկնես մի դեղի, անցնես արտերի, բանշարանոցների միջով կամ կողբով. յեթե անցար՝ քարով, փետով կիսին, կծեծեն, տուն կանեն: Ահա թե ինչ են թշնամիները... Բայց թե ինչու տերերն ել թշնամիների պես են դարձել—Ծովանը չեր հասկանում: Նա գանում եր, որինակ, վոր ինքը հին գոմում պիտի մնա, բայց թե ինչու հին գոմի կողմը դնալու ժամա-

նակ փոքր տերը բարկանում եր—չեր հասկանում: Իետո՞ կովը միշտ իր հորթի մոտ կերթա, բայց թե ինչու իրեն ծեծում են հորթի մոտ դնալու համար—ելի չեր հասկանում... Ստածելով տերերի վերաբերմունքի մասին՝ Ծովանը հաճախ մտադրվում եր տուն չդառնալ, սակայն հորթին հիշելով, նրա կուրծը տաքանում եր և նա մտածում եր, վոր անկիթ մնալով կուրծը կարող եռուչել այն անդամվա նման, յերբ արտն ընկնելու պատճառով «տուն արին» իրեն և յերկու որ փակեցին մի փլեկ մարադում: Ո՛, ինչպես եր ցավում այդ որն եր կուրծը... Նման մտածումներով տարգած՝ նա յերբեմն չեր նկատում, վոր նախիրն արդեն առաջ և անցել: Ծովափելով՝ ինքն ել պոչը խփում եր մեջքին և հետեւմ կովերին:

Բայց մի որ ահա ինչ պատահեց:

Յերեկո եր: Անձրես: Ծովանը մոր, մորաքույթերի և ընկերուհիների հետ հանդից վերադառնում եր տուն: Ծերեկուն ել թրջված եյին, հոգնած. շտապում եյին՝ կթթում և հանգստանալ: Նախրի առջնից գնում եր Ծովանի մայրը իր ահազին կուրծը փորի տակ որորելով: Սիրում եր նա գնալ այդպես բոլորի առաջից և գյուղի ծայրը համսնելուն պես բառաշել—«մենք գալի՛ս ենք»... Այդպես բառչում եր մեկ ել տանը մոտենալիս: Յեվնը ձայնի վրա տերերը դուրս եյին գալիս կովերին գիտակորելու: Այս անդամամենից շուտ նրանց առաջ յելավ ջահել տերը: Յերբ հասան տուն Ծովանը, ինչպես միշտ, անդամ ել մոր հետ թեքվեց զեղի մեծ տիրոջ բայց անդամ ել մոր հետ թեքվեց զեղի մեծ տիրոջ բայց կը—զեղի հին գոմը, ուր գտնվում եր հորթն այդ որը. կոնի առավոտն այնտեղ եր թողել Հաղիվ մի յերկու քայլ եր արեւ փոքր տերը ձիպոտը ձեռին առաջը կըտքեց: Ծովանը կանգ առաջ և փորձեց անցել մյուս կողմեց: Զահել տերը կրկին առաջը կտրեց և ձեռի ձիմից:

պոտը վրա բերեց: Ծովանը գլուխը փախցրեց, բայց  
ճիպոտը հանկարծ իջավ գլխին, նա յեղջուրների մեջ-  
տեղը սասաթիկ ցավ զգալով կանգ առավ աչքերը խը-  
փած: Մի բոպէ թվաց թե հողը շարժվում և և ինքն  
ընկնելու և ահա: Սակայն ուշքի յեկավ անմիջապես  
մեջքին ու կողերին դիպչող հարվածներից, հասկացավ,  
վոր հին գոմը զնալը դուր չի դալիս տիրոջ և հնա-  
զանդեց: Շուռ յեկավ և բեկված որտով քայլեց տի-  
րոջ առաջից:

Այդ յերեկո նրան կթեց փոքր տիրոջ կինը, կը-  
թեց առանց հորթի, ելի պտուկներն ու կրծի մաղերը  
ձիգ տալով: Իսկ կթելուց հետո բակի տավարից դա-  
տեցին նրան և գոմն արին:

Ամբողջ գիշեր նա չկարողացավ հանգստանալ.  
գլխի մեջ տեղը և պտուկների արմատներում խուլ  
ցավեր եր զգում:

Ասավոտը նույնապես կթեցին առանց հորթի, դար-  
ձյալ մեծ ցավեր պաճառելով: Բոլոր ժամանակ Ծովանն  
իրեն պահեց և մի անգամ իսկ վոտ չշարժեց: Բայց  
յերբ կիմն ավարտվեց և տանտիրուհին կովկիթը ձե-  
սին մատակ տուն՝ նա թափ տվեց կապը—կորեց և  
շտապեց հին գոմի կողմը:

Հորթը...այնտեղ և արդյոք, թե մի բան և պա-  
տահել:

Փոմի դուռն ամուր ծածկված եր: Նա մղղաց—  
լը մմ...

—Ո՞մմ, պատասխանեց հորթը ներսից:

Այդ ժամանակ Ծովանը գլխով հրեց զուռը և մտավ  
ներս: Հորթն ընդառաջ վաղեց և մտավ մոր փորի տակ:  
Թեև կրծում կաթ չկար, բայց նա թոյլ տվեց, վոր  
հորթը ծծի: Իսկ մինչեւ այդ ինքը, հորթերի մտու-  
թուում նկատելով մոտեցավ համն առնելու: Հազիվ մի

բերան եր արեւ, յերբ ներս մտավ մեծ տանտիրուհին,  
նա, վոր այնպես լավ կթում եր իրեն:

—Այ կով, այ կով,—կանչեց:

Ծովանը բոստան ընկածի պիս զդաց իրեն, ա-  
րածից ամաչելով՝ ուղեց զուրս գալ, բայց տանտիրու-  
հին չթողից նա:

—Ի, հողեմ զլուխդ, —բարկացավ, —ի՞ խոտն  
ուսում յես, վոր խալիսին կաթ տան:

Ու ձեռի թոկով խփեց Ծովանին:

Թոկի ծայրը, վոր յերկաթե ողակ ուներ  
ոլոպավնար կողքի վոսկորին, և զրանից Ծովանն այնպես  
վատ, այնպես ծանը ցավ զգաց, ինչուս աղողը իտ-  
րանելու ժամանակ: Այնուամենայնիվ կրկին փորձեց  
դուրս գալ, բայց տիրուհին դարձյալ չթողից: Նա դու-  
ռը փակեց, հորթերին արավ հորթանոցը, իսկ իրան՝  
Ծովանին, կաղեց մոտերից: Յեվ ամբողջ որը նա մնաց  
գոմում փակված: Բոլոր ժամանակ կողի վոսկորը ցա-  
վում եր: Սովոր մի կողմից, ցավը մյուս՝ սաստիկ ան-  
հանգստացնում եր նրան, և նա մտածում եր դարձյալ  
տերերի վերաբերմունքի մասին. ինչու հենց միայն իր  
հետ են վատ վարվում, ինչու հապա մյուս կովերին չեն  
ծեծում և գոմում փակում: Դուռմն այնքան կանաչ կա,  
իսկ իրեն չոր խոտ են տալիս: Մայրը, քույրերը և ըն-  
կերուհիները հիմա արածում են անառում, իսկ ին-  
քը...

Նա մի քանի անգամ բարձրաձայն բառաչեց,  
դուռն յետեղ կանգնած մղղաց, մղղաց, վոր մնկը զա-  
գուռը բաց անի, բայց վոչ-վոք տերերից չմոռեցավ  
գոմի դուռն և վոչ մի տափար չպատասխանեց որա-  
բառաչին...

Նա հուսահատված, զլուխը թափահարելով կանգ  
առավ գոմի մեջտեղը՝ աչքերը փոքրիկ լուսամուտին:

«Զե, այսպիս չի կարող շարունակվել. պետք  
և դաշտ գնալ...» մտածեց նա:

Յեկ ահա նույն որը յերեկոյան, յերբ տաճտի-  
րուճին արձակեց նրան, տարավ դուռը, կթեց ու խառ-  
նեց կովերին,—Ծովանը քաշվեց մի կողմ և սկսեց  
հարեան ցանկապատի յեղինջները կոծել:

Ու այդպես յեղինջները կոծելով՝ դուրս յեկավ փո-  
ղոց: Այդանու ել փողոցի յեղերքին բուսած կանաչները  
պոկելով՝ թեքվեց մյուս փողոցը: Խսկ յերբ արդեն ան-  
նկատելի եր դարձել՝ քայլերն արագացրեց:

Հորթը յետ ու առաջ ընկնելով՝ հետեւց մորը:  
Յեկ մի քանի բոպելից նրանք դուս յեկան դաշ-  
տը:

## II

Մութն հետզհետե թանձրանում եր դաշտի վրա.  
Հեռվում անտառն յերեռում եր սկ, մեծ-մեծ զեղի նը-  
ման: Քամին այնտեղից բերում եր մի քաղցր հոտ՝ կա-  
նաչների և տերեների բուրմունք, վորը զրգում եր  
ծովանի ախորժակը: Յեկ նա արագ-արագ գնում եր  
գլուխը բարձր բռնած, ականջները խլած: Թվում եր  
շտապում և հասնել առաջ անցած նախրին: Խսկ հորթը  
բոլոր ժամանակ յետ ու առաջ ընկնելով, վոստվոստա-  
լով՝ հետեւմ եր մորը ու յերբեմն դունչը մոտեցնում  
նրա կրծին: Մայրը սակայն կանգ չեր առնում նրան  
կաթ տալու: Նա կանգ չեր առնում և դաշտում արա-  
ծելու: Ի՞նչ կար այդտեղ՝ դաշտում—անհամ արտեր  
ու անհամ գետնախնձոր, վոր ձին ել չի ուտում: Ու-  
րիշ բան ե անտառը... Ու ծովանը գնում եր դեպի  
անտառ և իր մղղոցով շարունակ խրախուսում հորթին  
—հետեւ իրեն: Յեկ հորթը յեռանդով հետեւում եր նը-  
րան, սակայն դաշտի կիսում սկսեց մորից յետ ընկնել:

Նրան հաճելի, շատ հաճելի եր մոր հետ ձամպորդել  
րայց դժվար եր... Այդքան յերկար ձանապարհ—յեր-  
բեք չեր գնացած: Տեղտեղ փոսեր եյին, տեղտեղ քա-  
րերը ցալեցնում եյին կծղակները, ու մայրն ել այն-  
պես արագ և գնում... Մի յերկու անգամ նա հոգնած  
կանգ առավ: Յեկ ծովանն ամեն անգամ յետ եր դառ-  
նում, դունչը մոտեցնում հորթի դնչին, մզզում—խը-  
րախուսում հետեւելու: Մի տեղ, տեսնելով հորթը դժ-  
վարանում ե, յետ գարձավ և սկսեց լիզել նրա գլուխը,  
յերեսը: Դրանից հետո հորթը շարունակեց ձանապարհը,  
յերբեմն նույնիսկ մոր հետ հալասար քայլելով:

Ու մինչև անտառ գնացին առանց կանգ առնե-  
լու: Խսկ անտառի մոտ ծովանը կանգնեց, խորը շն-  
չեց քթածակերով ու սկսեց բուրջ անել—քշտել ծա-  
ռերի տերեները: Դրա հետ միաժամանակ նա ականջ-  
ները խլած, շուրջ-շուրջ նայում եր շուրջը.—արդյոք  
տերերը չեն հետեւմ իրեն... Վոչ-վոք չկար: Ներքեցի  
ձայն, վասնածայն չեր լսվում: Անտառն եր խշում  
միայն՝ խուլ ու համատարած մի խշոցով: Յեկ այդ  
խշոցի մեջ լսվում եյին յերբեմն քնած թոշուների  
հանկարծական ճիչ, չոր ճյուղերի կոտրվելու ձայն և  
մայիսյան բոսի բղղոցը: Ծովանը ցերեկ թե գիշեր ան-  
տառում շատ եր յեղած և այդպիսի ձայներ շատ եր  
լսված, բայց այդ բոլորն այժմ թվում եյին թշնամի  
մարդկանց ձայներ: Նա անհանդստանում եր ավե-  
լի հորթի համար և վախենում թե վինի հանկարծ տե-  
րերը գան և յետ տանեն իրեն:

Փոքը ինչ արածելով՝ նա շարունակեց ձանապարհը  
անտառի միջով: Յերկու որ առաջ մի բացատամ շատ  
համեղ խոս եր կերել: Շտապում եր այնտեղ:

Նրա շուրջն ու գլխավերել անտառը խշում եր  
շարունակ: Ծառերի արանքում տարածված եր մի քա-  
շարունակ:

զցր բուրմունք—դա լորիներն ու թեղիներն եյին արձակում իրենց հոտը ծանապարհին զուգահեռ ներքե եր վազում լեռնային վտակը՝ անտառի խորքը աղմկելով։ Զրի ձայնի վրա Ծովանը հաճախ կանգնում եր և յերկուղով նայում դեպի ձորակը։ Թշոց եր ու ակնակիր խավար։ Վոչինչ չեր յերեսում։ Հավաստիանալով, վոր դա ջուրն և շառաչում և թշնամի չկա—նափոքը ինչ հանգստացած՝ շարունակում եր ճանապարհը, յերբեմն յերեմ ճյուղեր ու տերեներ պոկելով։

Վերջապես հասավ ուղած բացատին և կանդ առավ։

Հորթը գարձյալ յետ եր ընկել. սպասեց մինչև մոտեցավ, լիզեց մի քանի անգամ զլուխը, յերեսը և ապա սկսեց արածել։ Խոտն այնքան համեզ եր, վորքանի արածում, ախորժակն այնքան բացվում եր և այնքան ավելի քաղցած եր զգում իրեն... Նա արածում եր, իսկ հորթը հոգնածությունից նստել և նայում եր մորը։ Նա և մրսում եր և վախենում մութից, տնտառի ձայներից։ Ծովանը նույնպես վախենում եր, բայց նրա վախն ելի հորթի համար եր, և այդ պատճառով արածում եր հորթի շուրջը։ Արածում եր և շուտ-շուտ նայում նրան, այնպես ինչպես նոր ծնած ժամանակը, յերբ ամեն բոլե վախենում եր թէ ահա հորթը կփախցնեն իրենից...։

Այսպես արածեց բավական ժամանակ, արածեց աղանձբար ու փնչոցով, և զեռ յերկար, շատ յերկար պիտի արածեր, յեթե հոգնածությունը չհաղթեր նրան։ Տեսնելով վատները ցավում են, նստեց հորթի մոտ և սկսեց արոճ անել։

Դեռ մութն եր։ Անտառը շարունակում եր խշշալ... Մերթ այդ խշոցը դառնում եր աղմկալից, ժխորային, մերթ փոխվում եր խաղաղ սլալոցի, վոր ահարեկված,

Հուզված անտառը հանգստանում եր կարծես և ունկնդրում ինչ-վոր մեկի հեռավոր, խոռվ քայլերին։ Ծովանը վորոնում եր և հաճախ ականջները խլցած նայում չորս դին։

Այդպես մնաց մինչև լուսաբաց։

Առավոտը ցուրտ եր, խոնավ։ Գիշերը կարծես անձրեւ եր յեկել. խոտերը, թփերը, ծառերը թաց եյին։ Ծառերի արանքով արևի շողերն ընկել եյին կանաչների վրա և ցողի կաթիներն ամեն տեղ փայլում եյին, պսպղում։ Ոդի մեջ կար մի գուրենկան սառնություն։ Յերբ Ծովանն վորոնում եր—նրա չնչառությունը քթածակերից զուրս եր գալիս գոլորշու պես։ Թէ նրա և թե հորթի միջքից բարակ գոլորշից եր բարձրանում։ Այդ սառնությունը զուր եր գալիս Ծովարին, բայց հորթը մրսում եր. նրա մազերը փշաքաղվել եյին։ Մոր կողքին կանգնած՝ աշխատում եր կպչել նրան կամ մտնել նրա փորի տակ։ Իսկ մայրը, կարծելով հորթը սոված ե, բոլոր ժամանակ կուրծն եր դեմ անում նրան։ Հորթը, սակայն, մոռնթը մի քիչ մոտեցնում եր մոր պտուկներին և նորից կանգնում անշարժ։ Արևի բարձրանալուն հետ նա ել կամաց-կամաց զվարթացավ, և այն ժամանակ, յերբ Ծովանն սկսեց արածել, նա ել ամեն մի քայլը դողդողալով փոխելով հետեւում եր նրան։ Յերբ վոտները թրջում եյին նա վախեցած կանդ եր առնում մի կամ մյուս վոտը բարձրացնելով...։

Արածելով՝ կով ու հորթը բացատից նորից անտառ մտան և սկսեցին ծառերի արանքով առաջանալ։ Յողը կաթում եր ծառերից։ Ծովանը ծարավ եր զգում, ու արածեան ընկած զնում եր ջուր գտնելու հույսով։ Անտառի այդ մասը նրան ծանոթ չեր, բայց կարծում

եր, վոր այդ ուղին գնում և դեպի ջուրը՝ Փորձով գիտեր, վոր ամեն մի ճանապարհ վերջանում և զրի մոտ Ու հանգիստ, պոչը մեջքին խփելով ընթանում եր առաջ, և հորթը հետեւում եր նրան, յերեմի սահելով ու սայթաքելով:

Ճանապարհը յերկար եր. գնում եր շարունակ ծառերի տակով և աննկատելի ձգվում դեպի վեր, միշտ դեպի վեր:

Կես ճանապարհին սկսեց անձրեւ Սկզբում հատած կաթկթեց տերեների վրա, հետո ամրող անտառ ու շրխկաց հանկարծ: Ու ջուրն սկսեց թափվել տերեներից... Ծովանը կանգնեց մի փոքր, ապա ճամփան շարունակեց անձրեւ տակ: Հետզհետե անձրեւ բարակեց, և ճանապարհը վերջացավ մի փոքրիկ ձորակում, աղբյուրի մոտ: Ջուրը հոսում եր ավազների վրայով մի քանի քայլ տեղ և այնուհետև կորչում կանաչ ճահճների մեջ:

Հասնելուն պես Ծովանը ընկավ աղբյուրի վրա ու սկսեց խմել ավելի շուտ՝ ծծել: Այնքան խմեց, փորը ուռավ: Ապա նստեց և սկսեց հորթին լիղ տալ...

Մնաց Ծովանն այդտեղ յերկու որ: Նա շատ գոյն եր, տեղը լավ եր—և ջուրը կար և խոտ, վոչ տեր կար, վոչ թշնամի: Վոչ-վոք չեր անհանգստացնում իրեն: Կուրծր, պտուկները այլևս չեյին ցավում: Բնդհակառակը նրանք հիմա շատ լավ ելին, յերը հորթն եր ծծում միայն: Իսկ հորթը նրան ծծում եր որը մի քանի անգամ և մնացած բաներում որինակում մորը, նրա նման վոտներն զգուշությամբ կոխում եր ջուրը, պոչը փոքր ինչ բարձրացնում և խմում ակից, կամ զլուխը կախ արածում կանաչը: Յերեկոները յերը ցրտում եր՝ մտնում եր մոր փորի տակ կամ նստում նրա կրծքին կպած, իսկ մայրը նրան տաքացնելու

համար գլուխն ու վիղը մեկնում և նրա մեջքի վրայով: Այսպիս անցավ յերկու որ: Յերբորդ որը, սակայն, յերբ արև նոր ծածկվել եր անտառի այն կողմը, պատահեց անսպասելի մի բան:

Սկզբում հեռվից, ապա հետզհետե մոտից Ծովանը լսեց ինչ-վոր խշխցոց ծառերի մեջ: Խշխցոցը լսվում էր յերկար, բայց խշխցնողն ինքը չեր յերեւամ: Յեվ նա բոլոր ժամանակ ականջները խլած նայում էր յերկար խշխցի կողմը: Գաղան ե, թշնամի... նա մոտեցավ հորթին և պատրաստ կանգնեց...

Վերջապիս յերեաց մի մարդ:  
Կովը վախից յետ-յետ գնաց: Թվաց նրան թե տերերից մեկն ե... Բայց վոչ, տերերից չեր: Սա միբուքավոր եր, կարձահասակ ու սկ փափախով: Այնուամենայնիվ թշնամի մարդ եր, պետք եր զգուշինել: Յեվ զլուխը բարձր բռնած, Ծովանը անհանգիստ նայում էր այդ անծանոթ մարդուն, վոր ինչ-վոր փայտ եր քաշում թոկով: Յերբ քիչ առաջ յեկալ՝ նա կանգնեց և Ծովանին նայեց: Նայեց նրան, նայեց հորթին, նայեց, նայեց և նստեց ու սկսեց շվշացնել: Հետո ձեռը մեկն կանչեց «բիժի, բիժի, բիժի»... Ծովանն, ի հարկե մոտ չգնաց. Նա չեր հավատում, վոր անծանոթն իր ձեռին աղ ունենա...

Բավկական նստեց անծանոթն այսպիս, և յերը մութն ընկավ, փայտը թողեց և Ծովանին ու հորթին առաջ արավ ու քշեց դեպի վեր: Ծովանը չեր ուղում գնալ, բայց մարդը մի յերկու անդամ խից նրան ու բարկացավ խեղդված ձայնով.

—Դե, շան վորդու անտեր...  
Ճանապարհը դարձյալ գնում եր անտառի միջով, և Ծովանը չեր հասկանում, թե մեր ե բշում անծառ նոթն իրեն այս անծանոթ ճանապարհներով: Նա քշում

և խոսում եր առանց գոռալու, վոչ, այնպիս ինչպիս իւր տերերը կամ ինչպիս ուրիշ թշնամիներ... Մթան մեջ յերկար գնում եյին և նու ասում եր միայն. «Հե, շան վարդու անտեր»...

Յերբ անտառից գուրս յեկան, հեռվից լսվեց ալ-  
ների հաշոց: Ծովանը հասկացավ վոր նոր գյուղ են  
մանում—և շների հաշոցն եր ուրիշ և ձամդին...

Յեվ, իսկապես, նոր գյուղ էր: Տները մթան մեջ չելին յերեռում, բայց ուրիշ հոտեր ելին գալիս և ձամփի վրա բոստաներ կալին: Անծանոթը հենց գյուղի ծայրին տարավ նրան մի մութ գոմ, վորից հավերի և յավշանի հոտ եր գալիս: Յերբ անծանոթը նրան գոմի արավ ու գնաց, Ծովանը մտածեց, վոր թշնամու ձեռք և ընկել: բայց մթթե արգելված արոտ և արածել... Ծովանը մտածմունքի մեջ էր, յերբ քիչ հետո ներս, մտավ ելի անծանոթը՝ նրա հետ մի կին ճրազը ձեռին:

—Ե՞ս ա, ասավ կինը ձրագը Ծովանին մոտեցնելով, —վորտեղ գտար...

Անծանոթը ինչ-վոր բան առավ, վոր Ծովանը լավ չլսեց, հետո յերկուուրի՝ մարդ ու կին, կապեցին իրեն ու հորթին և միասին ոռուս անառին:

Գոմը նորից մթնեց: Դարձյալ հավերի և յափշանի հոտ եր գալիս: Հոգնածությունից Ծովանը շուտով քնեց, և յերբ զարթնեց՝ լույս եր արդեն: Քիչ հետո անձանոթն ու կինը նորից մտան զսմբ՝ կինը մի կովկեթ ձեռին, մարդը մի գիրկ խոտ: Հորթին ծծեցրին, վուներին կապեցին և սկսեցին կլիել: Մարդը քորում եր Ծովանի մեջքը, խոկ կինը կթռում եր և հետն ել զավում,

—Լավ պառուիներ ունի... ևսահեմ մերն ուի...»

Այս խոսքերը ծովանին շատ դուր եկան և նա հասկացավ, մոր թշնամու ձեռ օփ մնեն.

Այդ միջոցին հանկարծ զուռութափեց և ներս վա-

զեցին յերկու յերեխա, յերկուսն ել փոքրիկ, բորիկ ու փորներն ուսած: Ամեն մեկը մի կտոր հաց կոծելով՝ կանգնեցին ու հայցին ծովանին:

— Եյ, բեխսիք, մարդու բան չասիք հա, թի ապին  
կովագտել, — ասավ կինը կթելով: Նրանից ավելուկի հոտ  
եր գտիս: Ծովանը հոտհոտում էր և կաթը թողնում է

Յերբ կիթը վերջացավ՝ ասօտանքը բարձր է՝  
այլ գրից Ծովանի առաջ, իսկ կինը նորից յերեխա-  
ներին և լսում եք, ասավ, մարդու բան չասեք հայ։  
Յեզ ճատ կովկիթից կաթ խմացրեց նրանց,

— Հայոց առ հարցը ից:

— զա, ասին յերեխաները դու

Ծովանն ուրախացավ, վոր իր կաթը հավանեցիւ,  
«Ուրեմն թշնամու ձեռ չի լնկել», — մտածեց կրկին:

**Զորս որ մնաց անձանոթի տանը և չորս որն ել  
գոմից դուրս չտարան նրան։ Ամեն որ դալիս ելին  
կանաչ խոտ տալիս, տակը սրբում, կթում ու գնում։  
Իսկ յերեխաները ճնողներից, ծածուկ մտնում ելին գո-  
մը հորթի մեջքին նստում, իրա՞ Ծովանի պառկները  
քաշում, պոչը ձիգ տալիս ու փախչում։ Այդ պատճառով  
Ծովանն սկսեց յերեխաներին ատել... Զորբորդ որիվ  
զիշերը անձանոթն անձրագ մտավ գոմը, արձակեց  
նրան ու հորթի հետ դուրս տարավ։**

Մութն եր, վոչինչ չեք յերեւմ:— Աւ ևս առ տառը  
իրեն, մտածում եր Ծովանը զեշերիվա խավարին սա-  
յելով, և ամբողջ ձանապարհին այդ միտքը չեր անց-  
նում նրա գլխից: Յերկու որ ու գիշեր ձանապարհ ելին  
գնում սարերով ու ձորերով: Յերեկները անձանոթը  
թողնում եր անտառում, թփուտների մեջ արածելու  
իսկ գիշերը ըշում եր ինչ-վոր անձանոթ ու վատ ձա-  
նապարհերով: Մեկ-մեկ հանդիպում ելին տավարի

բայց անծանոթը վոչ մի տեղ չեր թողնում խառնվելու։ Մարդիկ ել քիչ եյին պատահում։ Մի անգամ միայն հանդիպեցին յերկու զյուղացու. նրանք հարցրին անծանոթին իրա Ծովանի մասին թե, «Ո՞ւր յես տառում ես կովը»։ Անծանոթը պատասխանեց. «Ծախելու»

Ծախելու... ուրեմն իրեն ուրիշի յեն տալու, մտածեց Ծովանը. Նա գիտեր, վոր յերբ ծախում են— տալիս են ուրիշի...

## III.

Այդպես ել յեղավ. Յերբ հասան մի մեծ զյուղ, անծանոթը Ծովանին ծախեց մի յերկար մարդու, նրանից ինչ-վոր թղթեր առավ ու ել չերկաց. Իսկ մարդը նույն որը առաջ արավ Ծովանին ու նորից քշեց զյուղից զուրս։ Ճանապարհը քարոտ եր ու յերկար-յերկար։ Վորովհետև հորթը չեր կարողանում քայլել, մարդը տեղ-տեղ կանգնեցնում եր. նրան և գլուխը նրա յետի ու առաջի վրաների արանքը կոխելով դնում ուսերին։ Ծովանը վախեցած շուտ-շուտ յետ եր դառնում և մզզում, թէ չինի հորթին մի բան պատահի։ Բայց մարդը ամեն անգամ հանգստացնում եր նրան,

— «Փնա, անխելը, գնա, չեմ սպանում»... Իսկ յերբ հորթը մոր ձայնի վրա խլրտում եր և վրաները թափ տալիս, նա խրատում եր. «Խելճ, սարսաղ, խելք... Գլխիդ պատիվը հասկացիր»...

Նոր աիրոջ զյուղը փոքր եր, տները ցածր եյին, կոռւրներին ավել բուսած. և բոլոր աների առաջ կիտված եր զոմերից զուրս թափված աղբը. յերկիաները խաղում եյին նրանց մեջ, իսկ չները նրանց վրա նըստած՝ մռառում եյին։ Այս բոլորը Ծովանին հիշեցրեց իրենց սարի գոմերը, ուր այնքան լավ խոտ կար և լավ ջուր։ Նոր տիրոջ տունը սակայն բոլորից մեծ եր, բոլորից բարձր, Ծովանին կապեցին այդ տան ա-

ռաջ մի ծառից և շուտով ամեն կողմից մարդիկ յեկան նրան տեսնելու։ Մոտեցան՝ նայեցին, քիչ հեռացան ու ելի նայեցին. կրկին մոտեցան, ձեռք տվին կրծքին, պտուկներին, ապա գովեցին իր հասակը, վոտները, կուրծը, պտուկները։

— Լավն ե, լավը. շնորհավոր ըլի, — ասում եյին նրանք։

Հետո նայեցին հորթին։

Բոլոր խոսքերից ու շարժումներից Ծովանն զգում եր, վոր թշնամի մարդկանց ձեռ չի ընկեր, բայց նրա որոտում դարձյալ կասկածներ կային. բոլորին նայում եր վախով և չգիտեր ով և իսկապես իր բարեկամը. Սակայն ով վայփայում եր հորթին, նրան ել նայում եր համակրանքով։

— Կովը լավն ե, բայց հորթը հիվանդի պես ե, ասավ մեկը։

Մարդիկ կրկին մոտեցան հորթին, նայեցին և ամին. «բեզարած ե»։

Ծովանն ականջները խլած՝ ուշաղիը նայում եր մարդկանց և, նրանց հոգատար վերաբերմունքը տեսնելով՝ մտածում եր, վոր իրեն այստեղ յերեկ չեն նեղացնի և հանգիստ կթողնեն։

Բայց հենց առաջին գիշերը նա անհանգիստ անցրեց։

Թեև զուրսը տաք եր, բայց նրան կապեցին զուրսը, ուր կար մի թառ հավ, մի քանի վոչխար և մի այծ, վոր Ծովանին տեսնելուն պես փախավ զոմի անկունը։

Նոր տերը Ծովանին կապեց մատրին, իսկ հորթը վոչխարների մոտ մի սնից։

Մթնում եր և մութը կամաց-կամաց լցվում եր գոմը։

Կապելուց հետո Ծովանը մի փոքր կանգնեց, շուրջը նայեց. նայեց գոչխարներին, այծին, հավերին և տղա փնչոցով նստեց ու գլուխը զրեց փորին: Բայց քնի չկարողացավ. աչքերի առջիկց շարունակ անցնում էր յին ճանապարհներ, թփեր, շներ, վոր պոչները ցցած վագում եյին, մարդիկ, մարդիկ և յերկխաներ, յերկխաներ... Իսկ հետո, յերբ քունն յեկել եր արդեն—մի ուժեղ տնքոց և դրա հետ ինչ-վոր ձայներ դարթեցրին նրան:

Հորթն եր: Նա տնքում եր խոր ու յերկար մի տնքոցով, վոր վրան ասես մի ծանր բան եր ընկել:

— Է՞ն, ը՞ն, լովում եր նրա ձայնը գոմի մի ծայրից:

Իսկ այծը շարունակ մկնում եր, մկնում, չգիտես ինչու և ինչի համար: Մկնում եր այնպես յեռանդով, վոր կարծես կանչում եր մեկին. «Մակկեմը, Մակկեմը...»

Գոչխարները նույնպես անհամդիստ եյին. Նրանք փոխտում, փնչացնում եյին շուռշուռ և ինչ-վոր բանից խրանաձ՝ իրար գլխով դիմչում: Հավերը թառժաժ յեղած՝ կչկչում եյին՝ դարձյալ ինչ-վոր բանից վախեցած, իսկ աքաղաղը կրկնում եր խրոխտ. «Կը-կը'կը'կը», վոր թվում եր սիրտ և տալիս հավերին—«Մի վախեք, մի վախեք»...

Ծովանը վստի յելավ և մղաց:

Հորթը նրան չպատասխանեց:

Նա շարունակում եր տնքալ:

Ի՞նչ եր պատահել, ինչու յեր հորթը անքում—Ծովանը չեր հասկանում: Ուզում եր մոտենալ բայց կապը չեր թողնում, մթան մեջ ել վոչինչ չեր յերկում:  
— Է՞ն, ը՞ն,—լովում եր դարձյալ հորթի ձայնը գոմի մի ծայրից:

Ծովանը նորից մի քանի անգամ մղղաց, և հորթը դարձյալ չպատասխանեց նրան:

Յեկ այսպես շարունակվեց յերկար: Գիշերվակիսին հորթի անքոցն ավելացավ և այծն ավելի անհանգիստ դարձավ:

— Մակկեմը, Մակկեմը,—կրկնում եր նա ահաւըեկած և արագ-արագ քայլում գոմում:

Ծովանը կանգնած ականջ եր դնում հորթի ձայնի և սպասում, վոր հիմա տերն ուր-վոր և ներս կը մտնի և ամեն բան կարգի կընկնի: Բայց տերը չկար ու չկար: Աքաղաղը կանչեց—Ծովանը համոզված եր, վոր հիմա նա անկասկած կգա—դարձյալ չեկավ:

Ու յերկար, յերկար, մինչև լուսարաց բոլորն անհանգիստ եյին գոմում: Իսկ լուսարացին հորթը տնքոցը նվազեց ու կամաց-կամաց կարգեց, և շուտով, լուսը բացվելուն պես Ծովանը տեսավ, վոր հորթը լուսը բացվելուն պես Ծովանը մեկնել: Վոշխարնեպառկել և մի կութի և վոտները մեկնել: Վոշխարնեպառկել և մոտիկ կանգնած պիշտից նայում եյին նրան, իսկ բը միշտոքը թափ տալով մկնում եր ելի—«Մակկեմը, Մակկեմը»...

Ծովանն իսկույն հասկացավ, վոր դժբախտություն և պատահել և այս անգամ արդին, վորքան ուժ ուներ, ձիգ ավեց կապը՝ կտրեց ու մղղալով մոտեցավ հորթին: Մոտեցավ, զնչով հրեց նրան ու մղղաց:

Հորթը չշարժվեց:

Նա սկսեց լիզել հորթի զլուխը, աչքերը:

Հորթը դարձյալ անշարժ մնաց:

Այդ ժամանակ Ծովանը դունչը մոտեցրեց հորթի դնչին և բաձր բառանչեց ու, քիչ հետո, նրա մեծ, սկաչքերը լցվեցին արցունքով:

Հորթը մեռել եր:

Յերբ լույսը բոլորովին բացվեց տերը և կիսը յե-

կան: Հորթին տեսնելով՝ յերկուսն ել հայհոյեցին ում-  
վոր:

— Բա հիմի վոնց պիտի կթենք, ասավ կինը.  
— Կփորձենք:

Վշտից Ծովանը յերկու ժում թույլ չտվեց իրեն  
կթելու, բայց հետեւյալ որը տեսնելով կուրծն ուռչում  
և—թողեց: Սակայն այդ որվանից սկսածնա թշնամա-  
ցավ յերեխաների և վոչխարների հետ: Նրան թվում  
էր, վոր գրանք եյին—անծանոթի յերեխաները և նոր  
տիրոջ վոչխարները—վոր չարչարեցին իր հորթին: Ուս-  
տի և վորտեղ յերեխա կամ վոչխար եր տեսնում վրա  
եր պլրծնում հարու տալու:

Նոր տերերը Ծովանի անունը դրին Ծաղիկ՝ պո-  
չի սպիտակի պատճառով: Ակզրում այդ անունը շատ  
խորթ եր թվում նրան, բայց հետզհետե ընտելացավ,  
ինչպես ուրիշ շատ բաների: Որերն անցնում եյին  
բոլորն իրար նման: Առավոտը տանում եյին հանդը  
յերեկոյան բերում կիթ: Նոր տերը մի հոտաղ ուներ՝  
անունը Մոսո, սա առաջ իրեն առանում եր վոչխարնե-  
րի և այծի հետ, բայց մի քանի որից հետո դրանց  
ծախուցին և այնուհետև տանում եր ուրիշ կովերի  
հետ: Նախրի մեջ շատ կով կար—բոլորն ել հպարտ,  
ամբարտավան ու անհաշտ: Ծովանին տեսնելուն պիս  
մեկը կամ մյուսը վրա յեր պլրծնում նրան հարու  
տալու կամ վորեն մի յերինջ հաճույքի համար նրան  
առաջ եր դնում ու քշում, հետո կանդնում ու հողը  
քանդում պողերով: Այդ պատճառով Ծովանը միշտ  
նախրի վերջումն եր դնում: Ամբողջ նախրի մեջ կար  
մեկը միայն, վորին Ծովանը համակրում եր սրտով—  
զա մի պառավ կով եր—ծանրաշարժ ու հանդարտա-  
քարո բնավորության տեր, վոր յերեք չեր մամակցի  
ջահելների չարության: Նա Ծովանին իր հովանավո-

րության տակ առավ. յերբ մեկը մոտենում եր Ծովա-  
նին խփելու՝ նա բարկացած վրա գնում և սաստում  
համարձակին: Այս բոլորից վոգի առած Ծովանը մի  
որ ճաշվա շոգին մոտեցավ պառավ Զելլանին (այս-  
պես եր պառավ կովի անունը) և վիզը յերկարեց նրա  
տուաջ: Պառավ Զելլանը հասկացավ նրա միտքը և լի-  
զեց նրան: Այդ որվանից նրանք բարեկամացան և  
այնուհետև անբաժան ելին:

Մի առժամանակ ամեն ինչ լավ եր գնում: Ծո-  
վանին դուր չեր գալիս միայն մի բան, վոր Մոսոն  
հանդում կթում եր իրեն: Դուր չեր գալիս այն պատ-  
ճառով, վոր յերեկո ու առավոտ տանը կթում ելին  
քիչ եր—ճաշին ել դա յեր կթում: Գլխարկի յերեսը  
փոս զցելով՝ կթում եր նրա մեջ, խմում և գլխարկը  
չորացնում արեկի տակ: Տանտիրուհին սակայն հասկա-  
նում եր ամեն բան, ու ամեն յերեկո կթելիս ասում  
եր. «Ես կովը կաթը քաղել ա, ինչ ա. առավոտը ա-  
զելի շատ ե տալի, քանց իրիկունը: Զարմանք բան  
ա», զարմանում եր նա:

Մի որ ել, յերբ նա խոսում եր այսպես, տերը  
կանչեց Մոսոյին.—Այ գյաղա...

— Համմե, լսկեց Մոսոյի ձայնը գոմից, և, քիչ  
հետո, Մոսոն յելկավ ու կանգնեց տիրոջ տուաջ:

— Ես կովին ինչ ե պատահել:  
— Ինչ պըտի պատահի վոր...  
— Լավ արածնում ա:  
— Խի չի...  
— Բա ինչու կաթ չի տալիս:  
Մոսոն ուսերը վեր քաշեց.—Յես ինչ զիտեմ:  
Տերը մատը թափ տվեց նրա վրա.  
— Հըս՛, քնթիցդ կհանեմ մին ել կթել ես: Հա-  
կանը՝ մ ես: Ել չեմ—չիմանամ...

Այդ խոսքերը ծովանին շատ դուր յեկան. ուրեմն Մոսոն ել չի կթի իրեն, մտածում եք նաև Բայց հազիվ տեղն ու կինը տուն մտան, Մոսոն մոտեցավ իրեն՝ ծովանին և «Քու տիրոջ են» ասալ ու քացով խփեց փորին, հետո ճիվոտով՝ վոտներին ու մեջքին:

—Կաթն ու մածունը լափում են մենակ, ինձ ցամաք հաց են տալիս...

Ծովանը տեսնում էր այդ, տեսնում էր, վոր Մոսոնի խոկապես ամեն որ միայն հաց և ուտում, բայց թե ինչն զբա համար իրեն եր ծեծում—չեր հասկանում...

Այնուամենայնիվ այդ որպանից Մոսոն և լ չկթեց  
իրեն, բայց ամեն որ հայհոյում եր, քար եր շպրտում  
յետ տալու կամ քշելու ժամանակ, և Ծովանը դար-  
ձյալ չեր հասկանում, թե ինչու նա այդպիս և վար-  
դում իր հետ: Յեվ առհասարակ այս նոր տիրոջ տանը  
անհասկանալի բաներ շատ կային: —Որինակ, տիրոջ  
կինը միշտ հարու յեր տալիս իրա յերեխաներին, և  
յերեխաները բարձր, յերկար բղավում եյին մորը կոր-  
ցըրած հորթերի պես... Խսկ յեթե այդ ժամանակ վրա  
յեր համանում տերը—Նա յել եր հարու տալիս նրանց...  
Ծովանը, զոր հորթի մեռնելուց հետո ատում եր յե-  
րեխաներին, չեր սիրում, զոր նըանք բղավում եյին  
կամ, յերկար բղավելուց հետո, գալիս եյին գոմի մը-  
սուրում քնում: Երանց ներկայությունը միշտ ան-  
հանգստացնում եր Ծովանին: Բայց ավելի անհանգըս-  
տանում եր, յերբ յերեխան քնիլու ժամանակ, ճրա-  
գով գալիս եյին յերեխաներին գտնում և նորից հա-  
րու տալով՝ բղավեցնում: Գոմը լցովում եր աղմուկով...  
Յերբեմն ել տանտիկինն եր գալիս գոմում նստում ու  
աչքերը տրորելով ձայներ հանում: Ճիշտ և, նա յերե-  
խաների պես չեր բղավում, բայց մի այնպիսի ձայն

Եր հանում, վարից Ծովանը քննել չեր կարողանում: Այդ-  
պես շարունակվում եր յերկար, մինչև վոր տերը ճրա-  
գով գալիս եր նրան անանելու: Կինը չեր ուղում զնալ:  
«Գնա, ասում եր, գալիս չիմ»:

— Քեզ ասում եմ՝ վեր կաց:

Կինը վեր չեր կենում: «Տես, ելի կջարդիմ»  
առում եր տերը ձեռները շարժելով: Այդ ժամանակ  
կինը վեր եր կենում և յերկուսը միասին դուրս ելին  
գնում:

Զայտած այս բոլորին, Ծավանն իրեն լավ եր ըդ-  
գում: Նոր աերերն այնուամենայնիվ առաջիկա տերերի  
պես չելին ծեծում, սովոր չելին պահում: Բնդնակա-  
ռակը—լավ նայում ելին, կերակրում և ուրախանում,  
յեր ինքը հաճղից գալիս եր տուն Իսկ յերեխաները  
միշտ առաջը վաղելով՝ կանչում ելին.—Արի, Ծաղիկ  
ջան, արի!...

Այսպես անցավ մի տարի, ծովանը նոր տիրոջ  
տանը մի հորթ ծնեց, մեծացրեց, վարից հետո նրան  
մի գրքախառնթյուն պատահեց:

Գարնան պայծառ որ եր: Նախիրն արածում եր  
դաշտի մեջ ցրված: Յերկու տափարած մեկսվել եյին  
խոտերի վրա և ծույլ-ծույլ զրուցում եյին. մեկը մեջ-  
քին պառկած նայում եր կապույտ, խոր յերկնը ին,  
մյուսը փորի վրա ընկած՝ վոտները խաղացնում եր  
ողի մեջ: Դուքսեկան որ եր: Յերինջները խնդիրում  
եյին հաճույքից: Մի քանիսը նրանցից թիկերի արանքը  
մտած՝ քաղում եյին նրանց միջի խոտերը, իսկ հա-  
սակավոր կովկերն իրանց կրծերը չվնասելու համար,  
փշոտ թիկերից հեռու, արածում եյին բաց տեղերում:  
Ծովանը արածում եր պառավ Զեյրանի կողքին և յեր-  
րիմն-յերեմն պոչը գավակին ու կողերին խփելով

բարձրացնում եր ծանր գլուխը և իր խոր, վճիռ աչքերով նայում հեռու-հեռու—մշուշապատ հորիզոններին, ապա՝ աչքերը փակելով՝ դունչը թեթևակի բարձրացնում եր դեպի արևը, կարծես նրան իր սրտի գոհունակությունը հայտնելու ջերմության և առատ կանաչի համար։ Հետո, մի քանի բոպե անց, նորից շարունակում եր արոտը նախկին յեռանդով։

Արածելով՝ նախիրն աննկատելի մոտենում եր գետակին, վոր խշխշում եր մի քանի քայլի վրա։ Զրի այնը լսելով՝ կովկերն ընդհատեցին արոտը և շտապեցին ջուր խմելու։ Մի քանի բոպեից ամբողջ նախիրն արդեն գետակի մոտ եր։

Չուր խմելուց հետո, գետի այն կողմը կանաչ նկատելով՝ կովկերն անցան մյուս ափը։ Առատ, անարատ կանաչ եր։ Ծովանը հոտից զգաց, վոր տավարի վոտ չի դիպել։ Ուրախացած վրա պրծան և սկսեցին արածել աշխաւյժով։

Մի քանի բոպե անց՝ մեկ ել հանկարծ մոտեկ աղմուկ բարձրացավ։ Կովկերը խլեցին։ Յերեացին մի խումբ անձանոթ տղաներ շներն յետեկց։ Ծովանին թվաց, վոր նրանք վազում են թռչունների յետեկց, բայց զարմանքով նկատեց, վոր մոտենում են իրենց։ Գալիս եյին աղմուկով ու փայտեր շարժելով։ Յերը մոտեցան՝ շները հաշոցով առաջ անցան։ Յերինչները խրանեցին ու փախս առան, մի տարեկան մողիները մոտեցան մայրերին, իսկ մայրերը դլուխները դիք բռնած՝ կանգ առան... Ազմուկի վրա վաղեցին և կանաչների վրա պառկած տավարածները ու մոտեցան անձանոթներին։ Ծովանը նայում եր թի ինչ և լինելու։

Անձանոթներն ուզում եյին իրենց քշել—տանել, բայց տավարածները չեյին թողնում։

— Աստված վկա՞ նոր են ընկել, ասում եյին նրանք—մենք տեսել չեյինք...

Բայց անձանոթները չեյին ուզում լսել և դարձյալ ուզում եյին իրենց քշել։ Տավարածները դարձյալ չթողին։ Այսպես մի քանի ազամ նրանք փորձեցին քշել իրենց, տավարածները չթողին։ Հետո սկսեցին բոլորը միասին բարձր խոսել, գոռալ, ձեռք շարժել իրար վրա, ապա հետզհետեւ մոտենալով սկսեցին խփել միմյանց փայտերով, քարերով։ Խփում եյին, ճչում ու բղավում։ Մոսն նույնպես կովում եր։ Ծովանն ավելի հետեւմ եր նրան, քան մյուսներին։ Նա ել բղավում եր և ձեռի մահակը վրա ըկրում սրան-նրան։ Մի առժամանակ նրա զրությունը լավ եր, կանգնած կովում եր, բայց քիչ հետո քարերով փախցրին նրան... Բոլոր ժամանակ ծովանը—նրա հետ և ամբողջ նախիրը—խլած հետեւմ եր այդ կովին և զարմանում, թե ինչ են կովում զրանք։ Տավարածների խոսքերից ծովանը հասկացավ, վոր իրենք անցել են մյուս զյուղի սահմանը և կերել նրանց խոտը։ Դա առաջին անգամն եր պատահում ծովանին։ Դեռ նախկին աիրոջ մոտ նրան թվում եր թե աշխարհը վերջանում է անտառի գլխին և այդ աշխարհում մինակ իրենց զյուղն եր բայց հետո տեսավ ուրիշ զյուղեր, բայց թե ինչ բան իր սահմանը—չեր լսել։ Հետո նրան զարմացնում եր իր այն, վոր մարդիկ կովում եյին խոտի համար։ Զե՞ վոր խոտը բանում և իրենց կովերի համար, իրենք ել կերել են... Ել ինչ կարիք կա կովելու... Զարմանալի են այս մարդիկ, մտածում եր նա—միշտ կովում են... կովում են իրենց տեղն ել, մեր տեղն ել, կովում են և մեղ հետ և իրար հետ... Արածում ես՝ բարով տալիս են, անցնում ես ճամփով՝ քարով տալիս են... Ե՞ս, մարդկանց դժվար է հասկանալ...

Մոտածում եր Ծովանը և նայում կռվող տղա-  
ներին, իրար կպած՝ միմյանց հարու եյին տալիս  
նրանք և բղավում, գոռում... կռվեցին այնքան, մինչև  
վոր տավարածները թողին փախան, իսկ անձանոթ  
տղաները քշեցին նախիրը դեսի մոտիկ զյուղը.

Անձանոթ տղաները և քշում եյին, և ծեծում:  
Ծովանը, վոր բոլորից յետ եր, յերկու անգամ իր մեջ-  
քին զգաց փայտի հարվածներ: Հետո մի հարված ել  
իջավ կողքին, այնտեղ, ուր մի անգամ հին տերերի  
մոտ խփել եյին թոկով: Սյու հարվածից նրա աչքերը  
մթնեցին—այնքան սասարիկ եր ցավը... Սյու պատճա-  
ռով ել չիմացավ, չզգաց թե ինչպես անցավ յերկար  
ժամապարհը ու մեկ ել իրեն տեսավ մի գոմում իրենց  
նախրի հետ: Գոմը նեղ եր, նստելու տեղ չկար, բոլորը  
կանգնել եյին կողք-կողքի: Սյու քիչ եր—մի հրմար  
կով ել շուտ-շուտ հարու եր տալիս սրան-նրան: Բոլորը՝  
թե կովերը, թե յերինջները տնքտնքում եյին, Ամե-  
նից վատ սակայն ցավում եր իր կողը: Ո՞ւ, ինչպես  
եր ցավում, քիչ եր մնում պոկ գա. ցավում եր ծիշտ  
այնպես, ինչպես մի անգամ շունը բռնեց եր վորը.  
կածես շունը կծում եր ելի...

Յերկու որ նրանք մնացին գոմում, և յերկու որ  
շարունակ Ծովանի կողը ցավում եր: Յերկու որ շա-  
րունակ մարդիկ եյին գալիս ու գոմի գուանը հալաք-  
վում, խոսում. թվում եր պիտի բաց անեն, բայց  
թողնում եյին, գնում: Մի յերկու անգամ ել Ծովանը  
լսեց տիրոջ ձայնը, բայց նա ներս չմտավ: Նա յեկել  
եր իրեն տանելու և ասում եր, վոր հորթը սոված է:  
Նրա հետ յեկել եյին մյուս կովերի տերերը, նրանք  
ել խնդրում եյին իրենց կովերը, բայց անձանոթները  
չեյին տալիս.—մեր արտերը կերել են, ասում եյին,—  
մնասը տվեք, տարեք...

Թե տիրոջ խոսքերը հորթի մասին, թե Շոռուն-  
անողներից պատասխանը՝ արտերը ուտելու մասին—  
զարմացրին Ծովանին: Վոչ տիրոջ ասածն եր ճիշտ,  
վոչ «տուն անողների»: Վոչ ինքը հորթ ուներ տանը և  
վոչ ել նախիրն եր արտ արածել. նա քանի երբորդ  
անգամն եր տեսնում եր, վոր մարդիկ ավելի չե-  
ղածի մասին են խոսում, քան յեղածի: Յեվ զարմա-  
նում եր:

Այդ յերկու որվա մեջ Ծովանի կուրծը ուռել եր  
անկիթ մնալուց և, կուրծը մի կողմից, կողի ցավը  
մյուս կողմից սասարիկ անհանգստացնում եյին նրան:  
Վերջապես, յերը յերկուրդ որվա յերեկոյան մյուս կո-  
ւերի հետ նրան ել բաց թողին—Ծովանն իրեն շատ  
փառ եր զգում: Մի կերպ հասավ տուն և նույն գիշե-  
րը մեռած հորթ ծնեց:

— Ել ինչիս ես պիտք,—ասավ տերը տապատը  
գոմը մանելով, մեռած հորթը տեսնելուց հետո.—թռւ,  
և թքեց Ծովանի յերեսին:

Ծովանը գլուխը կախ արավ: Նա չեր հասկանում  
տերն ինչու համար և հանդիմանում իրեն:

Խսակով, թքոտելով տերը զուրս գնաց նորից և  
քիչ հետո կրկին յեկավ, նրա հետ տանտիկինը, յերե-  
խաները, Մոսոն, հարեւաններ և, ինչպես նոր յեկած ու-  
րը, ըրջապատեցին իրեն, մեռած հորթին և սկսեցին  
խոսել ու ծնկներին խփել:

— Արանից հետո սա ել ինչի և պետք,—ասում  
եր մեկը:

— Չեչ, ուտող բերան և մնալու միայն,—ասում  
եր տերը:

Ու յերկար խոսում եյին, և Ծովանն զգում եր,  
վոր այդ խսակցությունը վերաբերում ե իրեն, ու նա  
իր ցավերը մոռացած յերկուրով մտածում եր, թե յե-  
ր ցավերը մոռացած յերկուրով մտածում եր,

րեի տերն այլիս չի ուզում իրեն պահել այս գեղքից հետո: «Բայց ինչո՞ւ, ինքն ինչո՞վ ե մեղավոր» մտածում եր նա և իր տխուր, թախծու աչքերով նայում շուրջը հավաքված մարդկանց:

Մի քանի տարվա փորձառությունն ու դիտողությունը Ծովանին բերել եյին այն յեղակացության, վոր մարդկանց համար սիրելի բանը միշտ այն է, ինչ վոր ստանում են ու ուտում, և սիրում են միշտ նըրան, ով վոր մի բան տալիս է իրենց: Յեթե կաթ ևս տալիս, սիրելիս ես, յեթե շատ ես տալիս՝ ավելի սիրելի յս: Իսկ յեթե կաթ չունես, ցամքել յես—վայ քեզ...

Ո՛, տխուր և մարդկանց աշխարհը, մտածում եր Ծովանը և նորից նայում շուրջը հավաքված մարդկանց:

#### IV

Ծովանի նախազգացումն իրեն չեր խարում: Հորթատելուց հետո տիրոջ վերաբերմունքը միանգամայն փոխվեց գեղի ինքը: Առաջիւ պես նա ալիս ձեռները չեր քսում իր մեջքին, գլուխը չեր քորում, յերեկոները խոտ չեր գնում առաջը... Իսկ մի քանի որ հետո սկըսեց մարդիկ ըերել և իրեն՝ Ծովանին ցույց տալ նըրանց: Մարդիկ շոշափում եյին իր մասերը, փորը, կուրծը, քաշում եյին պտուկները փորձելու համար՝ կաթը դուրս և գալիս, թե վոչ: Մի որ ել, հանկարծ, տերը ծախսեց նըրան, և Ծովանը, կարճ ժամանակում, ձեռքից-ձեռք անցավ: Սկզբում նըրան գնեց մի ծեր գյուղացին, վորի հարսը, կթելուց հետո կաթը մեկ-մեկ քաշում եր գլխին: Մի որ ել խմում եր այդպես՝ գուռը ձոռաց, վախից կովկիթն ընկալ նըրա ձեռքից և կաթն ամբողջ թափվեց գլխին: Յերբ ներս մանող տեղը հարցրեց պատճառը, հարսը պատասխանեց, «Կթեցի,

վերջը քացով տվեց»: Այդ խոսքերի վրա տեղը բարկացավ և Ծովանին ծեծեց, թե ինչո՞ւ կաթը թափել եր: Յե այստեղ նըրան յերկար չը պահեցին: Զպահեցին նըրա համար, վորովհետեւ նըրանք Ծովանին գնել եյին այն հաշվով, վոր նա ձմեռը հորթ պետք և բերեր (այդպես եր հավատացրել նախկին տերը). բայց յերբ համոզվեցին, վոր իրենք խարված են՝ Ծովանը հորթ չի բերելու, նըրան տվին մի տերտերի և հավատացրեն, վոր զարնանը՝ Զատկին պիտի ծնի: Տերտերի մոտ Ծովանն իրեն շատ լավ եր զգում: խոտը, դարմանը միշտ տուատ եր, տերտերն ինքը ձեռի մեջ աղ եր տալիս նըրան, շույում եր, բորում, մի խոսքով շատ սիրում եր Ծովանին: Յե Ծովանը գոն եր: Մի անգամ նույնիսկ, յերբ ինքը հիվանդացավ—նա իր գլխին զիր կարդաց: Կարդացածից Ծովանը թեև վոչինչ չեր ըմբոնում, բայց զգում եր, վոր իր համար լավ բան և անուում... Սակայն այստեղ ել նա յերկար շմաց: Շուտով, յերբ տերտերն ել նախկին տիրոջ պես համոզվեց, վոր կովը չի ծնելու՝ ծախսեց չարվադարի: Յե Ծովանն ընկավ մի նախրի մեջ, վոր գյուղի տավարից մեծ եր և վորի մեջ յեղներն ավելի շատ եյին, քան կովերը, իսկ կովերը՝ բոլորն ել չկթվող, անհորթ կովեր եյին: Հետո կային շատ մողիներ ու արջառները եյին: Բոլորն ել տիսնուր, տիսնուր եյին. բոլորն ել խորթ եյին զգում իրենց և չեյին մոտենում միմյանց՝ խողալու կամ լիով տալու... Տիսնուր եր... Մի քանի հասակավոր տավարած գիշեր, ցերեկ արածեցնում եյին իրենց սարերում, մի որ ել զրանք նախիրն առաջ արին ու քշեցին չոր փոշոտ և ուղիղ, յերկար ձանապարհով, վոր ձգվում, զնում եր զաշտերի անտառների, միջով: Յե ամբողջ ճանապարհը փոշի, փոտառների, շերտին զիշով: Յե ամբողջ ճանապարհը գլխին, շերտին զիշով: Յե ամբողջ ճանապարհը գլխին,

մհջքին, մտնում եր աչքերն ու քթածակերը: Ո՞ւր եյին զնում, ուր եյին բշում իրենց Ծովանը չեր իմասնում. բայց վորովհետեւ նա զնում եր բոլորի վերջում մի որ, վերջապես, լսեց, վոր իրենց տանում են բազաք... ի՞նչ բան եր քաղաքը—Ծովանը գարձյալ չեր հասկանում. արդյոք դա հմտի եր, սար, մի նոր զյուղ թե գոմեր—չգիտեր... Ու գնում, զնում եյին անվերջ: Յերեկը գնում եյին, գիշերը հանգստանում բաց յերկնը տակ... Աշուն եր, արտերը հնձած, դաշտերը ամայի, ճանապարհը յերկար ու փոշոտ... Վոչ կանաչ կար, վոչ լավ ջուր, և տափարածները բոլոր ժամանակ քշում, քշում եյին իրենց՝ «Հոյ, հեյ, հոհոհոհոհ»... Ու հոգնածությունից զլուխները կախ զցած, իրար հրճելով, իրար գիշելով, միմյանց առաջելով քայլում եյին նրանք փոշոտ, ուղիղ ճանապարհով, վոր չեր վերջանում... Յերեք որ ու գիշեր ճանապարհ կտրելուց հետո, վերջապես հ ոսան նրանք ծառերով շրջապատված ճերմակ տների: Նրանց արին մի ի՞նչ վոր տեղ, վոր ամեն կողմից փակված եր փայտերով: Տավարի հոտ եր զալիս, յերեւում եր, վոր մի քանի որ առաջ այդտեղ տափար ե յեղել: Հաղիվ նրանք ուղուց եյին հանգստանալ, մեկ ել տեսան հանկարծ, վոր մի ի՞նչ վոր ուե, ուե, վերխարի կենդանի Փշոցով յեկավ վերեից և մոնչալով կանգնեց տների տառչ: Բոլոր կովերը յեղները խջտնած՝ ուղեցին փախչել փայտերը չթողին: Քիչ հետո յերեւաց նրա նման մի ուրիշը, վոր գաղաղած գաղում եր դեպի տառջ, իրա հետ քաշ տալով բազմաթիվ տներ, վորոնց, լուսամուտներից նայում եյին մարդիկ, կանայք, յերեխաներ... Դրանից հետո յեկավ մի ուրիշը, և կլի, ելի...

Ծովանը վախեցած, զարմացած նայում եր զըանց ականջները խլած.—սա ի՞նչ բաներ են, ի՞նչու համար

են, և իրենց ինչու յեն բերել այստեղ,—մտածում եր նա և, ինչպես շատ բան մարդկանց արարքից, այդ ել հասկանալ չեր կարողանում:

Այդ բանը հասկացավ նա նույն որը յերեկոյան, յերբ իրենց բոլորին քշեցին տների մեջ և վակեցին: Ծովանը վախից զողում եր: Մտածելու շատ բան կար, լուսամուտին նայելով՝ սպասում եր թե ի՞նչ բան անելու իրենց, վորովհետեւ բազմաթիվ անձանոթ թշնամիներ, մարդիկ տների մոտ կանգնած խոսում եյին, աղմկում, շիխացնում ու թրիկացնում եյին ի՞նչ-վոր բաներ, վոր կարծես ուղում եյին շուռ տալ բոլորին: Բայց քիչ հետո յրենց առւնը շարժվեց հանրություն: Կովերի և յեղների մեծ մասը ընկան կողքի, կարծ, կովերի և յեղների մեծ մասը ընկան կողքի, ուղեցին վեր կենալ—նորից ընկան. դարձյալ լովեց ուժեղ, վայրենի մի սուլոց և իրենց զոմը շարժվեց շիկուկաւով:

Ու գնում եյին այսպես շխշխոցով, թրիկոցով ու գոգուալով: Գնում եյին յերկար-յերկար... Տեղտեղ գոգուալով: Գնում եյին, լուսամուտներից մեկ ձրագի լույս եր կանգնում եյին, յերեկվա լույս: Տեղտեղ խոտ ներս ընկնում, մեկ ցերեկվա լույս: Տեղտեղ խոտ եյին բերում իրենց և նորից շիխոցով քշում տուած: Վերջապես հասան այնտեղ, վոր բաղավ եր կոչ վում:

Ո՛ւ, ի՞նչ բան եր դա, այդ քաղաքը. Թե մարդիկ, թե տները, թե սալերը—բոլորն ուրիշ տեսակ եյին, բոլորն ել զարմանալի: Ծովանին զարմացնում եր բոլորն ել զարմանալի: Ծովանին զարմացնում եր մարդկանց առատությունն ու պարտապությունն, տների մեծությունն, վորոնց մեջ վոչ մի զոմ չեր յերերի մեծությունն, վորոնց յեղերքին վոչ կանաչ վում, լայն փողոցները, վորոնց յեղերքին վոչ կանաչ կար, վոչ ցանկապատ, վոչ առու... Զարմանալի յերերի, զեղյին և շներ, խոտի դեղեր, մանավանդ գեղեր, զեղյին և շներ... Զի, այդ քաղաք տովածը մի բանի նման չի:

Նախիրը քաղաքի միջով տարան քաղաքի ծայրը  
և արին մի մեծ բակ: Այդտեղից ել տավարի հոտ եր  
տալիս, ինչպես ձերմակ տների մոտ յեղած բակից:

Գիշերը հանգստացան այդտեղ, իսկ առավոտը  
ոտար մարդիկ յեկան նայեցին իրենց, համրեցին:  
«Քանի՞ հատ» հարցրեց մեզը: «Չորս հարյուր» սկա-  
տախանեց մյուսը և գնացին: Հետեյալ որը նորից  
նոր մարդիկ յեկան: Յեվ այսպես՝ որը մի քանի ան-  
գամ մարդիկ եյին գալիս, նրանց նայում, խոտ տալիս  
և տանում մոտիկ գետը ջրելու: Իսկ ամեն առավոտ  
գալիս եր քիչ խոսող մի մարդ, վորին բժիշկ եյին  
տառում, և մի յերկու ուրիշ մարդու հետ, վոր լսում  
եյին նրան, մի քանի կով, յերինչ, յեղ ջոկում ու տա-  
նում: Այդ մարդը, վորին բժիշկ եյին ասում, ձեռք եր  
տալիս այս ու այն կովին, յեղին, յերինչին, մեկ-մեկ  
նայում եր նրանց բերանները, և ում վոր ձեռք եր  
տալիս՝ նըան տանում եյին կամ նույն որը կամ հե-  
տեյալ որը:

Այդպես տարան՝ շատերին: Այդպես մի որ ել  
տարան Ծովանի մտերիմ ընկերունուն, վորից նու չեր  
հետացել ամբողջ ձանապարհին: Յերբ նրան տանում  
եյին—նա յետ գարձալ, նայեց Ծովանին և տիսուր  
լառաջեց. Բառ... Ծովանի սիրու մղկտաց: Նա պա-  
տսախ սնեց նույն բառաչով, և նրա աչքերը լցվեցին  
արցունքներավ: Ուր տարան արդյոք ընկերունուն,  
ինչու տարան... Ուր են տանում արդյոք այդ յեղնե-  
րին, կովերին ու յերինչներին. ուր են տանում այս-  
պես ամեն որ, և ինչու տարածը յետ չեն բերում,—  
մի ոք եր անում Ծովանը միենույն տեղը կանգնած,  
նայելով գարպասին, վորի յետեր ծածկվեց ընկերու-  
նին: Միտք եր անում տխուր, միտք եր անում տա-  
րալուսած և, ինչպես մեծ մասը մարդկանց խորհրդա-

վոր արարքների, այդ ել չեր հասկանում: Նրա տիսու-  
թյունն ավելացավ մանավանդ գիշերը, յերբ մնաց  
անընկեր, մհնակ... Ու չկարողացավ քնել բոլոր ժա-  
մանակ մտածում եր՝ թե իրեն ուր են տանելու, արդ-  
յոք ինչ անհայտ ու խորհրդավոր տեղ... Մյուս կովերը  
յեղնդրը քնել եյին հանգիստ, բայց Ծովանը յերկար  
չեր կարողանում քնել զլուխը դնում եր փորին, մի  
փոքր մնում, նորից վերցնում և զիք ննջում:

Լուսադիմին միայն նրա քունը տարավ և նա ի-  
րեն տեսավ մի մեծ, ընդարձակ, կանաչավետ գաշտում:  
Պայծառ որ ե. կանաչը փայլում և արեի տակ, մոտիկ  
ձորակում շառաչում և ջուրը, հեռվում մեծ ձանապար-  
հով շարան-շարան սայլեր են անցնում, իսկ ափելի  
հեռվում մշուշ ե, մուժ, և սարերը հալվում են կա-  
պույտ մուժի մեջ: Յեվ դաշտում այսպիս լավ ե. մո-  
ղիները խաղում են իրարու հետ, կովերը կանգնած՝  
հանդարտ արոճ են անում պոչները մեջքներին զցած:  
Ու իր մայրը, ինչպես միշտ, սպիտակ կուրծը փորի  
տակ կախած, տաք արեկի տակ լիզ և տալիս իրեն՝  
Ծովանին... Մայրը լիզում ե, իսկ իսքը վիզը հետզ-  
հետեւ յերկարում և նրա առաջ ու աչքերը փակում  
հաճույքից...

Մեկ ել ճանկարծ նա սաստիկ ցավ զգաց կող-  
քին. նա աչքերը բացեց և իր առջե տեսավ այն  
մարդուն, վորին բժիշկ եյին ասում: Նրա մոտ կանգ-  
նած եյին և այն յերկու մարդը, վոր ամեն որ գալիս  
եյին նրա հետ:

«Յեկել են ինձ տանելու» մտածեց Ծովանը  
և տնքալով, ակամա յելավ տեղից:  
Բժիշկը մոտեցավ և ձեռ տվեց Ծովանի փորին:  
Ծովանը դժգոհ վոտը վերցրեց և մի քայլ արավ:  
— կանգնիր, կանգնիր, հիմար,— տամ բժիշկը  
և նորից նայեց նրան:

Ծովանը անշարժ կանգնեց և սպասեց թե ինչ են  
անելու:

ԲԵՒՀԱԸ յերկար նայելուց ու շոշափելուց հետո,  
վերջապես, զլուխը բարձրացրեց:

— Սա հորթ ունի:

— Հորթ ունի, զարմացան մյուս յերկուսը և ու-  
շադիք նայեցին Ծովանին:

Հետո, նրանք ել բժշկի նման մոտեցան և շոշա-  
փեցին իր աջ փորբ: Նրանցից մեկը, փորին կառա-  
վարչի ոգնական ելին ասում, հարցրեց բժշկին:

— Հորթը մեծ է, փորբ:

— Ճերեք-չորս ամսական, պատասխանեց բժշկը:

— Ուրեմն հինգ ամիս հետո պիտի ճնի, խոսեց  
նորից կառավարչի ոգնականը:

— Բնական է,—պատասխանեց բժշկը:

— Կողմ ի՞նչպես ե, լավ ե...

— Այս, ասավ բժշկը.—այս տեսակ կովերը  
շատ կաթնատու են լինում...բացի դրանից—ջահել է:

Ու խոսելով յերեքը միասին հեռացան:

Ծովանը յերկուղով նայեց նրանց յետելից. ար-  
դյոք ինչ են անելու իրեն, ուր են տանելու... Սա-  
հայն, քիչ հետո, բարոր նրանց, վորոնց բժշկը ձեռք  
եր տվել տարան, իրեն Ծովանին թողին: Այս հան-  
գամանը զարմացրեց Ծովանին. ուրեմն կարող ե պա-  
տահել, վոր բժշկի նայելուց հետո չտանեն... Այ զար-  
մանալի բան...

Այդ որդ վոչ-վար չելավ նրա յետելից, բայց հե-  
տեւյալ որը ջոկեցին նրան տավարից, պողերը թոկ կա-  
պեցին և մեն-մենակ դուրս տարան բակից: Յեվ այդ-  
տեղ մի ծեր մարդ տռաջ արավ նրան ու քշեց:

Ու քշեց մի որ, յերկու որ... քշում եր նա ելի

ինչ-վոր մեծ, յերկար ճանապարհով. քշում եր հան-  
գարտ, տեղատեղ հանգստանալով, տեղատեղ իրան—Ծո-  
վանի հետ խոսելով... Յերկու որում նրանք անցան  
շատ գյուղեր, իսկ յերրորդ որը մտան մի դաշտ, ուր  
ամեն ինչ ծանոթ եր թվում Ծովանին. նեղ դաշտը,  
վոր ընկած եր յերկու սարի արանքում, անտառը, վոր  
սարն ի վեր բարձրանում եր գեղի յերկինք, գետը,  
վոր հոսում եր ճանապարհի յերկարությամբ—բոլորը,  
բոլորը կարծիս ծանոթ ելին: ծանապարհի յեղերքին  
արածում եր կովերի մի մեծ խումբ... գրանք ել կար-  
ծես ծանոթ ելին: Ծովանն նայեց կովերին, մղղաց և  
հանկարծ բառաչեց բարձր ու զիլ ձայնով—թամա...Կո-  
վերից մի քանիսը զլուխները բարձրացրին և նրան  
նոյնակեցին, ապա նրանցից մեկը Ծովանին պատասխա-  
նոյցին, ապա նույն բարձր ու զիլ բառաչով: Ծովանը պոչը թափ  
նեց նույն բարձր ու զիլ բառաչով: Դովանը պոչը թափ  
տալով քայլերն արագացրեց գեղի կովերը գնալու,  
տալով ծերունին չթողեց.—Ուր ես գնում, հիմար, ուր...  
բայց ու քարով խփեց և առաջ քշեց:

Նրանք շար ունակեցին ճանապարհը և շուտով  
մտան գյուղը: Դա ել ծանոթ եր թվում Ծովանին.  
ճանիւան, աները, ծառերը—բոլորը ծանոթ ելին  
կարծիս:

ծանապարհի յերկու կողմը մարդիկ հավաքված  
խոսում ելին, յերեխաները վեզ ելին խաղում: Յերբ  
Ծովանը զգույշ քայլերով մատեցավ նրանց, հանկարծ  
լուց եր անունը, ու փափախով մի մարդ առաջը կտրեց.

— Արա, ես մեր կողմ ե, մեր Ծովանը...

Ծերունին ինչ-վոր բան ասավ և ուզեց քշել,

բայց ամեն կողմից մարդիկ թափվեցին և չթողին քշել:

Ու խմբով առաջ արին իրեն ու տարան,

Ծովանը յերկավ, Ծովանը յերկավ,—կանչում

ելին յերեխաները առաջ վագելով:

Մի քանի բովելից Ծովանն արդեն իր նախկին տեղերի հին գոմի զռանն եր: Նրան շրջապատել ելին ծանոթ գեմքեր—մեծ տերը, վոր կանգնեցրեց իրեն ճամփին, նրա կինը, յերեխաները, հարևանները... Քիչ հեռ յեկավ նախկին փոքր, տերը, նրա կինը: Բոլորն ել նայում ելին զարմացած և ուրախ-ուրախ խոսում իրար հետ, իսկ փոքր տերը և նրա կինը նայում ելին պատի մյուս կողմից նայում ելին և մյուսների հետ չելին խոսում...

— Ծովանն ելի, ասավ փոքր տերը կնոջը:

— Դրուտ վոր, խոսեց կինը պատի գլխից ձեռը կովին մեկնելով.—Ծովան, Ծովան, Ծովան...

Կովը գլուխը բարձրացրեց, նայեց նրան և մղղաց.

— Քմմմ...

— Զան:

— «Ճան», —առաջ յեկավ մեծ յեղբոր կինը: —Ել ինչ ե: Չեղ համար են դաել. յեկեք, տեր դառեք...

Վոնց ել «Ճան» և ասում:

— Դե, շատ մի խոսի, —վրա բերեց պատի գլխից փոքր յեղբոյթը.—Հենց մի տեր և դառել վոր...

— Զե, տերը դժւ հս, շարունակեց մեծ յեղբոր կինը:

— Հիմա կերեա ով ե, ասավ փոքր յեղբայրը և գնայ: Նրա հետ և կինը:

Մեծ յեղբայրը մի քանի անգամ ուղեց միջամտել խոսակցության, բայց ատամները սեղմեց իրար և լոկ:

Յեղբայրներն իրար հետ չելին խոսում: Հին վեճը նրանց մեջ տակավին շարունակվում եր: Կովի անհայտահալուց հետո նրանք մեղաղբում ելին իրար կովը թագուն ծախելու մեջ: Բայց վորովհետեւ վկաներ չելին, գործը միշտ հետաձգվում եր դատարանում, և

թե յեղբայրները և թե նրանց կանայք իրար հետ կովելու ժամանակ միմյանց անվանում ելին «կովի գող»: — Վայ կովի գող գլխիդ, ասում եր մեծը փոքրին: — Գողի ձեռն և դալիս, պատասխանում եր փոքրը:

Իսկ այժմ, յերբ Ծովանը գտնվեց—փոքրը գանգատվեց, վոր իր կովը, յերկու տարի առաջ կորած կովը գտնվել ե, բայց մեծ յեղբայրն ուղում և անիւրագարար սեփականել, ուստի խնդրում և արդարություն—կովը առնել յեղբորից և տալ իրեն: Իսկ ձերունին, կովը քաղաքից բերող ծերունին նույնակես, իրեն հերթին, գանգատ ավեց, վոր այդ կովը, իրենից խլված կովը՝ զնել և քաղաքի սպանդանոցում ծառայող իր վորդին, վոր կառավարչի ոգնական և այնտեղ, գնել և այն ժամանակ, յերբ ուղում ելին մորթել:

Բայց նրան վոչ-վոք չեր հավատում:

Այնուամենայնիվ գործին ընթացք տվին:

Յե Ծովանն այժմ յերեք տեր ուներ:

## ՓՈՐՁԱՆՔ

Գյուղաքաղաքի հիվանդանոցի նախասենյակը  
լի և ամեն հասակի և ամեն տեսակի այցելուն երով—  
կին, մարդ, աղջիկ, յերեխա... Նրանցից շատերը՝ տեղ  
չը լինելու պատճառով՝ կանգնած են, վոմանք ան-  
համբեր հերթի յեն սպասում բժշկի ընդունարանի  
դուսերի առջև, վոմանք նստած են:

Քրտինքի, տրեխի և իոդոֆորմի հոտ և զալիս:

Նախասենյակի մի անկյունում, կարմիր նստա-  
րանի վրա նստած են յերկու մարդ և խոսում են ի-  
րար հետ: Նրանցից մեկի, վոր ունի սև մազերով  
հաստ գեմք, խիտ հոնքեր և չինացու քիթ, աջ ձեռը  
կապած և կրծքին: Իսկ մյուսի, վորը ունի ալեխառն  
փոքրիկ միրուք, հարաշարժ աչքեր և մեջքին արծա-  
թե բարակ գոտի, գլուխը կապած և սպիտակ փաթա-  
թանով:

— Յես զարմանում եմ, Պետրոս աղա, — ասում ե-  
շինացու քթով, ձեռքը կապած մարդը իր հասակավոր  
հարեանին: — յերկու որ առաջ ես քեզ տեսա վողջ-ա-  
ռողջ, իսկ այսոր գլուխդ պատռած: Ի՞նչ ե պատահել...

— Ել մի հարցնի, Ավետիս, — ասաց Պետրոս ա-  
ղան գլխի փաթաթանը շոշափելով:

— Կռիվ ե պատահել, ի՞նչ...

— Ի՞նչ կռիվ, ի՞նչ բան:

— Հապա ինչից եղավ եղ բանը:

— Մի փուչ բանից:

— Վոնց թե, վեր ես ընկեր թե խփել են:

— Ի՞նչ վեր ընկենել, աղբեր, իմ պարոն ծառան  
և խփել, պարզերես կենա...

— Ծառան, են Մինասը թե Դավիթը:

— Դավիթ ե, ինչ անասուն ե, — նեղացած ա-  
սաց Պետրոս աղան և նորից շոշափեց գլխի փաթա-  
թանը:

— Են վոր այգին պահում ե: Ի՞նչու խփեց ախր...

— Յերեկ իրիկուն զնացի այգի, փետը վերկա-  
լավ, ու տուր թե կտաս զլիսիս մեջտեղը:

— Վահ, — զարմացած բացականչեց Ավետիսը՝  
կապած ձեռը շարժելով: — առանց դես ու դենի... լավ  
չեմ հասկանում...

— Ի հարկի չես հասկանա, քանի վոր բանը գրւ-  
խից չասես, թարս զուրս կը դա, — սկսեց Պետրոս ա-  
ղան աչքի պոչով նայելով մյուս նստողներին: — Եղ  
Դավիթ ե, ինչ փուչ կենդանի ե, զու դիտես, վոր այ-  
դին պահում ե, և զրա համար ամսական հինգ մանեթ  
և մ տալի՝ հացն ել ինձանից. ամսական ամենարիշը  
նա կուտի տասնուհինգ մանեթ, դես հացն և առանց  
պանիր չի ուտում: Հինգ մանեթն ել եղ տասնուհինգ  
մանեթի վրա՝ քսան մանեթ. իսկ քսան մանեթը քիչ  
մանեթի վրա՝ քսան մանեթ. իսկ քսան մանեթը քիչ  
մանեթի վրա՝ զիանով կարելի յե մի կով առնել: Հլա տրեխ-  
փող չի, զրանով կարելի յե մի կով առնել: Հլա տրեխ-

փող ել եր ուղում՝ չը տվի... Հա, աղբերս վոր զու յես,  
ներ ել եր ուղում՝ մի այլի վորդին իբր թե այգի յե պահում: Ամեն  
եղ լիրը լիրը վորդին իբր թե այգի յե պահում: Ամեն  
որ գնում եմ տեսնում՝ ծառերի ինձորները, տանձերը  
պակաս: Ասում եմ:

— Այ աղա, Դավիթ, ես ծառերի ինձորներն  
ուր եմ:

— Ես ինչ գիտեմ, աղա, — ասում ե:

— Վոնց թե, — ասում եմ, — բա վոր զու չը գի-  
տես, ով գիտի:

Չեն չի հանում:

Դեռ եղ վոչինչ, վոր մեծ ծառերի խնձորներն  
ևին պակասում, ինձ համար ավելի վատ յեղավ, յերբ  
մի որ ել տեսա՝ Ռուսեթի մի թեթև ծառ կա, նրա  
խնձորներն եւ պակսեցին: Եղ ծառը առել եմ Վարդանի  
տղից: Մի որ յեկավ, թե՞ «Պետրոս աղա, մի խորով  
խոտ տուր, խոտ չունեմ»: Ասի՞ «տար, համա քու այ-  
գու պատրուսներից մեկը կը տաս»: Մարդը խոսա-  
ցավ ու տվեց: Ես տարի եղ ծառը բոլ բռնել եր: Ինքը  
կարճ, թեթև բան ե, բայց լավ բռնել եր: Կարկուտը  
շատ մասը վեր արավ և քիչ մնաց. Եղ քիչը համբարե-  
ցի, դուրս յեկավ հիսուն-հիսուներկու հատ: Ես քանի  
որը, վոր գնացի այդի, ասենք ամեն որ եմ գնում,  
համա ես վերջին անգամը վոր գնացի, տեսա եղ ծա-  
ռի խնձորը պակաս, համբարեցի դուրս յեկավ 48 հատ:  
Կանչեցի եղ անիծած Դավթին:

— Արի եստեղ, ասում եմ:

Վաղե-վաղ յեկավ ու զիք դադանակի պես տու-  
ջիս անկիցի:

— Ինչ ե, ասում ե, աղա:

— Աղեն աչքդ հանի: Այ տղա, ասում եմ, ես  
ծառի խնձորները մու են:

— Վրեն ե, ուր են, ասում ե, աղա:

— Վոնց թե վրեն են, ասում եմ, եստեղ հիսուն,  
հիսուն յերկու խնձոր կար, հիմի 48 հատ ե, վոր  
զհանգամն են գնացել:

— Ես ինչ զիտեմ, աղա, ասում ե:

Ասում ե ու ծառին ե մտիկ անում. մթամ թե  
նոր ե տեսնում:

— Բա վոր զու չը զիտես, ել ով զիտի, ասում  
եմ, ել ինչի՞ այդի պահող ես, վոր չը զիտես:

— Զը զիտեմ, ասում ե, աղա:

Ասում ե ու ելի ծառին ե մտիկ անում, ենպես  
վոր աչքերս չը տեսնի:

— Ամոթ ե, ասում եմ, այ տղա, հոգուդ մեղք մի  
անի, թե ուտում ես, ասա՞ ուտում եմ, հո յես բան  
չեմ ասի գըա համար:

— Զե, ասում ե, աղա, ուտում չեմ:

— Վոր ուտում չես, ասում եմ, ապա ուր են  
գնում, կամ գողանում են կամ ուտում ես, ուրիշ ել  
ինչ կա, հո յերկինք չեն թոչում:

— Զե, — ասում ե, աղա, վոչ ուտում եմ, վոչ գո-  
ղանում են:

— Եղ գնաց կը լինի, ասում եմ, յերկուսից մինը՝  
կամ ուտում ես, կամ գողանում են՝ զու չես տեսնում:

Զե վոր չե:

— Վոչ ուտում եմ, ասում ե, վոչ ել գողանում  
են:

— Թող եղպիս լինի, ասի, և մտածում եմ՝ զրուստ  
վոր նա ուտիլ չի, բայց կը ծախի:

Մեկ ել մտածում եմ ինքս ինձ. շատ կարելի յե-  
գողանում են, բայց լինքը քնում ե ու չի տեսնում...  
Վերջապիս, ասում եմ, պետք ե իմանալ՝ իմ այդին  
գող ե մտնում, թե չե:

Եսպիս մտածելով հասա տուն ու յեղածը պատ-  
մեցի սանամորդ: Նա ել տսավ, վոր ծառան ուտիլ չի:  
բայց շատ կարելի յե՝ գողանում են, ինքը քնած ե  
լինում: Եղ ել վոր նա տսավ, մտածեցի՝ լավ մոթը  
մթնելուց հետո մի թագուն մտնեմ այդի, ինձոր քա-  
զեմ, տեսնեմ եղ անիծածը ինձ նկատում ե, թե չե.  
զիմի, այդիս անտեր ե, զողերը թալանում են:

Մտածեցի ու արի:

Հիմի, քափոր Ավետիս, զու կասես թե՝ յես մի  
քանի ինձորի համար դարդ են անում: Սկի ել չե: Իմ  
գորդը խնձորները չեյին, թքած խնձորների վրա: Յես

ուղում եյի իշանալ իմ այզին գող և մտնում, թե վոչ:  
Հենց եղակո, յերբ մութը լավ մթնեց, մի փետ  
վեր կալա, դուրս յեկա տանից ու ճամփա ընկա դե-  
պի այզի:

Մութ, շատ մութ գիշեր եր, ենակես մութ վոր՝  
աչք աչքի չի տեսնում:

Յերբ հասաւ այզուն, սիրտս տրպալաց, մի տե-  
սակ վատ բան զգացի: Լավ կը լիներ հենց եղ ժամա-  
նակ ել յետ դառնայի, ել ես բանը չեր պատահի, բայց  
կարծես սատանան բոթնեց թե՛ գնա, գնա, գնա...

Յես ել ժամանեցի, քանի վոր յեկել եմ, մտնեմ  
մի փորձեմ եղ անիծածին, տեսնեմ նկատում և թե  
չե, թե չը նկատի, վայն յեկել ել իրան տարել պոչը  
կը կարեմ, թող ուր ուղում և դնա:

Եսպիս ժամանելով՝ մոտեցա այզու պատին: Մո-  
տեցա ու լոք տվի նրա վրով, ու հենց լոք տվի թե  
չե, յերկու քար, վատ եյին գրված, ինչ եր, — իրար հետ  
ընկան պատից... Յես ժամա այզի ու մնացի կանդնած:  
Ասում եմ՝ տեսնեմ մարդու ձեն-ձուն, վոտի ձեն  
լովում ե, թե չե:

Հենց մտել ու ժամանելում եյի, մեկ ել տեսնեմ վո-  
տի ձեն լովեց: Մինը զեպի ինձ եր զալիս: Ասի՞ ով  
գիտի հենց գող ե: Համա չե: Յեկավ մթի մեջ մի քիչ  
հեռու կանգնեց ու ձեն տվեց:

— Ո՞վ ե, ասում ե:

Ասողն եղ լիրը լրբի վորդին եր, ձենից են ըռ-  
պեյին ճանաչեցի, համա ձեն չը հանեցի. ասում եմ՝  
ով գիտի հենց ենակես հավարի յե զոռում, տռանց բան  
տեսնելու:

— Ո՞վ ես, — ձին տվեց նորից:

Յես ելի ձեն չեմ հանում: Ես գնթփթաց, հայհո-  
յեց, հեր ու մեր քաշեց ու նորից.

— Ո՞վ ես, ասում ե, զուրս արի:

Յես թարսվիլ, կողքիս եմ ընկել ու ձեն չեմ հա-  
նում: Ասում եմ՝ իրանից զուրս և զոռում. քարերի  
ձենը լսել ե դրս համար:

— Դուրս ես զալի, թե չե, — մին ել զոռաց նա:

Ու հենց եղ զոռալը տեսա, մեկ ել ֆըրալով մի  
հաստ փետ յեկավ ու տրաքեց գլխիս:

— Վայ, գու անիծվես, ասի ու վլուխս բռնեցի:

Գյաղեն ձենից ճանաչեց ու մնաց սառած. ել  
ձեն չը հանեց: Քիչ հետո տեսնեմ զիսիցս արուն և  
զալի:

— Վայ, ասի, յես քու... ես ինչ փորձանք բերիր  
վմ գլխին:

Փեալի լեզուն կապ ե ընկել, բան չի խսում:  
Վերջը կմկմաց:

— Աղա, ասում ե, յես ինչ գիտեյի գու յես...

— Աղեն աչք հանի, — ասում եմ, — լիրը լրբի  
վորդի... Ճատ ել քեզ ասել են այզուն մտիկ անես,  
պետք և ուրեմն փետը քաշես մարդ սպանես...

— Ի՞նչ ես ասում, զարմացավ Ավետիսը կապած  
ձեռով իր չինական քիթը արորելով:

— Հապա, հառաչեց Պետրոս աղան գլխի կա-  
պոցը. ուղղելով. — Եսենց փորձանք բերեց իմ գլխին են  
լիրը լրբի վորդին...


— Պետրոս Միրզյան, — կարդաց հիվանդների  
ցուցակը սպիտակ շոր հաղած յերիտասարդ գելզշերը  
և հայելով Պետրոս աղայի կողմը՝ սասց. — Ճեր հերթն և  
Պետրոս աղան գլխարկը վերցնելով դրեց կոնա-

տակը և մտավ բժշկի մոտ...



ՀԱՆԵՍԸՆ	5
ԱՆՀԱՅՏ ԹԵԼԵԲ	22
ՑԱՆԿԱՊԱՏ	32
ՏՆԱՐՀԵԲՔ	46
ԳԱՆՉ	53
ՃԱՇ	64
ԳԱՂՏՆԻՔ	72
ՍԱՏԱՆԱ	84
ՀԱՅՐ ՍԻՄՈՆԸՆ	105
ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏԸՆ	113
ԾՈՎԱՆԸՆ	121
ՓՈՐՉԱՆՔ	158

---



Ա. Տ.

Գիր 1 առը.

9462

20/3

